



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԹՈՎԱՐԱՆ

ՈՒՐԱՐՏՈՒ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(ԱՄՐՈՅ-ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ԵՎ ԴԱՄԲԱՆԱՅԻՆ ՀԱՍՏԱՐԱԿԵՐ)

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ԲՈԲՈԽՅԱՆ

АРХЕОЛОГИЯ УРАРТУ

(КРЕПОСТИ-ПОСЕЛЕНИЯ И ПОГРЕБАЛЬНЫЕ КОМПЛЕКСЫ)

Г. АВЕТИСЯН, А. БОБОХЯН

ARCHAEOLOGY OF URARTU

(FORTRESS-SETTLEMENTS AND BURIAL COMPLEXES)

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ԲՈԲՈԽՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ԲԱՎԻԼ

2010

ԳՄԴ 63.4 y⁷

Ա 791

Գիրքը հրատարակության է Երաշխավորնել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի խորհությը

Խմբագիրներ՝ պ.գ.թ. Պ. Ավետիսյան, պ.գ.թ. Գ. Թումանյան

Ավետիսյան Կ., Բորիսյան Ա.

Ուրարտուի հնագիտություն

Ա 791

(Ամրոց-բնակավայրներ և դամբանային համալիրներ):

-Եր.: «Բավիլ» հրատ., 2010, էջ 236

Աշխատանքը նվիրված է ուրարտական հնագիտության, մասնավորապես ամրոց-բնակավայրների և դամբանային համալիրների խնդիրներին:

Նախատեսված է որպես դասագիրք հնագետ ուսանողների, ինչպես նաև պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 902/904 (07)

ԳՄԴ 63.4 y⁷

ISBN 978-9939-818-09-2

Կոգմի վրա պատկերված են Մհերի դրամը և Այտիսի ամրոցը

© Ավետիսյան Կ.
Բորիսյան Ա., 2010 թ.

ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ	9
I. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԻՄԱԽԱՆՈՒԹՅԵՐ	13
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ	15
+ ՄԵՎԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄԱԽԱՆՈՒԹՅԵՐ	20
+ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	24
II. ԱՄՐՈՅթ-ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ	30
+ ՏՈՒՇՊԱ (ՎԱՆ)	30
- ԱՆՁԱՎ (ԱՆՁԱՖ)	34
+ ՈՒՐԱՐՏԱԽԻՆԻԼԻ (ԹՈՓՐԱՔ ԹԱԼԵ)	37
+ ՄԱՐԴՈՒՐԻԽԻՆԻԼԻ (ՀԱՅԿԱԲԵՐ, ԶԱՎՈՒԾ ԹԵՓԵ)	42
+ ԱՅԱՆԻՍ	49
+ ՆԵՐՔԻՆ ԽՆՋՈՐ (ՔԱՅԱՎԾ ԴԵՐԵ)	52
+ ՃԱՄԻՆ (ԱԼԹԸՆ ԹԵՓԵ)	58
ԷՐԵԲՈՒՆԻ (ԱՐԻՆ ԲԵՐՄ)	63
ԹԵՅԵԲԱԽԻՆԻ (ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ)	72
ԱՐԳԻՇՏԻԽԻՆԻԼԻ (ԱՐՄԱՎԻՐ)	85
+ ՕԾԱԿԱՆ	96
ԱՐԱԳԱԾ	103
ԱՅԼ ԱՄՐՈՅՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ	108
+ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	113
III. ԴԱՄԲԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՅԵՐ	147
+ ՎԱՆ	147
ՆԵՐՔԻՆ ԽՆՋՈՐ (ՔԱՅԱՎԾ ԴԵՐԵ)	151
ՄԱԶԳԵՐՄ	153
+ ՃԱՄԻՆ (ԱԼԹԸՆ ԹԵՓԵ)	153
ԱԼԻԾԱՐ	157
+ ԵՐԵՎԱՆ	158
+ ՕԾԱԿԱՆ	161
+ ԱԳԱՐԱԿ	162
+ ԳԵՂՇՈՎԻՏ	164
ԱՅԼ ԴԱՄԲԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ	167
+ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԱՌԱՋԱՎԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	170
ՎԵՐՋԱՐԱՐՆ	176
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	179
ԱՄՓՈՓՈՒՄ (SUMMARY)	202
ՀԱՅՈՒԿ ԱՆՁԻՆԵՐԻ ՑԱՆԿ	208
ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ	215

ՆԵՐԱՄԱԹՅԱՆ

Ք.ա. IX դ., ուրարտական պետության ստնդումով, հայկական լեռնաշխարիդ թևակոյինց պատմական զարգացման որակութան նոր մի շրջափուլ: Նախկին բրոնզ-նրկաթենդարյան մշակույթների առաջընթացի արդյունքում լեռնաշխարիդ բնիկները ներքաշվեցին պատմամշակութային զարգացման այնպիսի մթնոլորտի մեջ, որը մասնագետների կողմից անվանվում է «քաղաքակրթություն»: Այս հասկացությունը բնորոշվում է մի շարք ատրիբուտներով, որոնց թվում առավել կարևոր են քաղաքի ի հայտ գալը, գրի կիրառումը, մոնումենտալ և համաչափ ճարտարապետության, ինչպես նաև կազմակերպված քաղաքաշինության առկայությունը, համեմատաբար բարդ ներքին պետական կառուցվածքը, հավասարաչափ փոխանակության առկայությունը, կազմակերպված ոտզման համակարգը:

Այս բոլոր չափանիշների նախադրյալներն առկա էին լեռնաշխարիդ բրոնզ-նրկաթենդարյան մշակույթներում, սակայն դեռևս չին հասունացնել՝ միասնական և համակարգված կերպով արտահայտվելու համար: Եվ միայն Ք.ա. I հազ. սկզբներին էր, որ լեռնաշխարիդ հարավային շրջաններում գոյություն ունեցող Նաիրյան գնդերի միավորման հետևանքով ստեղծվեց միջազգնատրօցիների կողմից «Ուրարտու», բուն ուրարտացիների կողմից՝ «Քիայնիլի» (որտեղից էլ ծագում է «Վանի թագավորություն» անվանումը), իսկ Սք. Գրքում՝ «Արարատյան թագավորություն» անվանված պետական միավորումը, որին վիճակված էր հետազաներներ հարյուրամյակների ընթացքում վճռական դեր խաղալ առաջավորախական տարածաշրջանի պատմամշակութային զարգացումներում: Ավելին, որոշ ժամանակահատվածի ընթացքում, մասնավորապես Ք.ա. VIII դ. առաջին կեսին, Ուրարտուն դարձավ Հին Արևելյան հզորագույն պետությունը, որի քաղաքական և մշակութային ազդեցությունները տարածվում էին ինչպես հարավից, այնպես էլ հետավոր Արեքներում: Այս պետականության ստնդողները Վանից հարավ ընկած լեռնային գոտում (կորդիվաց լեռներ և հարավային Վասպուրական) բնակվող լեռնաշ-

խարիի բնիկ ցեղախմբներն էին՝ «ուրարտացինները», որոնք խոսում էին մի լեզվով, որն արդի լեզվաբանները դասում են այսպես կոչված խուփուրարտական լեզվաբանականիքին: Ք.ա. IX-VIII դդ., աստիճանաբար տարածվելով գրեթե բոլոր ուղղություններով, ուրարտացինները գրավեցին ողջ լեռնաշխարհը:

Ուրարտուն իր կատուցվածքով տիպիկ հինարևելյան պետական միավորում էր, սակայն նրա բուն կրողները լեռնաշխարհի բրոնզերկաթեղայան մշակույթների ուղղակի հնտնորդներն էին: Այսինքն, ուրարտական վերնախավն ընդունելով հինարևելյան, մասնավորապես սիրիա-միջազգներյան մշակութային աշխարիի արժեքային համակարգը, փորձեց այն հարմարեցնել տեղական-լեռնային մշակութային աշխարիի արժեքներին: Այս ամենի հետևանքով լեռնաշխարհում ձևավորվեց Էլիտար («ուրարտական») մշակույթը, որի հետ մեկտեղ շարունակում էր գոյություն ունենալ լեռնաշխարհին բնորոշ ուշ բրոնզի և վաղ նրկարի՝ «լճաշն-մնծամորյան» կոչված մշակույթը:

Ներկա դասագիրքն իր առջև նպատակ է դնում ընդհանուր գծերով բնորոշնելու ուրարտական մշակույթը, նրա զարգացման օրինաչափությունները: Այս հատորը նվիրված է ուրարտական ամրոց-բնակավայրերին և դամբանային համալիրներին:

Մրանից դեռ կես դար առաջ ուրարտացիտությունը համարվում էր առուրագիտությանը հարակից մի բնագավառ: Այսօր այն անկասկած առանձին գիտաճյուղ է հինարևելագիտության ընդհանուր համակարգում, որի մեջ են ներառնվում ինչպես սնապագիտությունը, այնպես էլ հնագիտությունը:

Արդի ուրարտագիտական ուսումնասիրություններում կիրառվում են նոր, նախորդների վրա հիմնված, սակայն դրանցից էապես տարբերվող մնացողներ: Վիմագրագիտական ուսումնասիրություններում ի հայտ են մենական բազմաթիվ նոր ընթերցումներ և պատմական անցյալի վերիմաստավորումներ: Հնագիտական հետազոտություններում փորձ է կատարվում ուրարտական մշակույթը դիտարկելու միջնագիտական ուսումնա-

սիրությունների համատեքստում: Ուրարտական բնակավայրների տարածականության սկզբունքները հասկանալու համար լայնորեն կիրառվում են աշխարհագրական ինֆորմացիոն համակարգների նորագույն մեթոդները (GIS):

Ուրարտագիտական կենտրոնները գտնվում են նաև այն նրկրների համալսարաններում, որոնցում տարածվել է այդ հնագույն պնտությունը (Հայաստան, Թուրքիա՝ Արևմտյան Հայաստան), ապա նաև հարակից և ենուակոր նրկրներում (Վրաստան, Ռուսաստան, Գերմանիա, Անգլիա, Իտալիա, ԱՄՆ): Չնայած ուրարտագիտության նրիտասարդ գիտաճյուղ լինելուն՝ այսօր արդեն կուտակվել է ահեղի քանակությամբ գիտական գրականություն, ուր քննարկվում են Ուրարտուի պատմության և մշակույթի բազմաթիվ հարցեր: Հայաստանում և արտերկրում լույս են տնանում մի շարք գիտական հանդեսներ, որոնցում ուրարտագիտական թեմաները բավականին հաճախ են քննարկվում (Պատմա-բանասիրական հանդես, Լրաբեր հասարակական գիտությունների, Բանքեր Երևանի համալսարանի, Вестник древней истории, Anatolian Studies, Archäologische Mitteilungen aus Iran, Studi Micenei ed Egeo-Anatolici, Anadolu Araştırmaları, Armenian Journal of Near Eastern Studies):

Այս աշխատանքի վերջում քննիչած գրականության ցանկը բազմաթիվ անունների միայն մի մասն է կազմում, այն մասը, որը համապատասխանում է ներկա հատորի հիմնական պահանջներին: Մինչև XX դ. վերջը լույս տնանած ուրարտագիտական գրեթե բոլոր հրատարակությունները ամփոփված են Պ. Զիմանսկու «Հին Արարատ» մատենագրական արժեքավոր աշխատության մեջ: Ուրարտական հնագիտական հուշարձանների քիչ թե շատ ամբողջական ցանկը, համապատասխան գրականությամբ հանդերձ, ամփոփված է «Ուրարտուի տեղագրական քարտեզ» անվամբ լույս տնանած աշխատանքում, որը կազմվել է Վ. Զլայսի և Հ. Հառուպամանի գլխավորությամբ: Ինչ վերտարերում է ուրարտական ճարտարապետությանը, ապա լույս են տնանել նրկու կարևոր և ամփոփ աշխատանքներ, որոնցում կարևոր է մանրամասն տնդեկություններ գտնել ուրարտական շինարվեստի մասին: Դրանք են Կ. Հովհաննիսյանի և Տ.

Ֆորբսի «Ուրարտական ճարտարապետություն» նույնանուն աշխատությունները: Ուրարտական ճարտարապետության տարբեր հարցերին են նվիրված նաև Վ. Քլայսի հիմնարար աշխատությունները: Ուրարտական թաղման կառույցներին և ծեսին վերաբերող ընդհանուր բնույթի աշխատանքները համեմատաբար քիչ են: Այդ հարցերին առանձին անդրադարձն են Զ. Բըրնին, Բ. Օզյունը, Ս. Հմայակյանը, Ա. Փիլիպոսյանը:

Ուրարտագիտությունը պատկանում է արագ զարգացող պատմական գիտաճյուղներին: ԾնորիկՎ Հայաստանում և հարակից նրկներում անընդհատ տեղի ունեցող հնագիտական աշխատանքների՝ պարբերաբար վերիմաստավորվում են ուրարտագիտական խնդիրները, հարրստացվում է համապատասխան գրականությունը:

Օգտագործված նկարների հղումները հիմնականում համապատասխանում են տվյալ հուշարձանին վերաբերող տեքստային հղումներին: Կողմնորոշիչ հրատարակություններ են հանդիսացնել Forbes 1983 և հատկապն Հռվիաննիսյան 1996 (հմմտ. Նկ. 32, 33, 35, 36, 39, 40, 42-50): Նկ. 1, 31, 34 վերցված են Տիրառյան, Կոշելենկո 1985 հրատարակությունից:

Լուսանկարները հնդինակներին են և կատարվել են 2000, 2003, 2004 և 2009 թթ.՝ Արևմտյան Հայաստան կատարված գիտական արշավանքների ժամանակ: Օգտագործվել են նաև հայ-ավստրիական արշավախմբի՝ Արամուսի պեղումների լուսանկարները: Օշականին վերաբերող լուսանկարները տրամադրել է ակադեմիկոս Ա. Քալանթարյանը, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում:

Բոլոր նկարների մասշտաբները մետրային են, որոնք ամեն անգամ չեն նշվում:

Բոլոր նկարների հնրթականությունը (ա, թ, գ...) ճախից աջ է կամ վերևից ներքիւ:

Բազմաթիվ դիտողությունների և օգտակար խորհուրդների համար նրախտապարտ ենք պ.գ.թ. Գ. Թումանյանին: Վերջին շրջանում լույս տն-

սած ուրարտագիտական օտարալեզու գրականության տրամադրման համար շնորհակալություն ենք հայտնում պ.գ.թ. Ե. Գրիշկանին: Տեքստի լեզվական ստուգման համար շնորհակալություն ենք հայտնում Ա. Պետրոսյանին: Հատուկ նրախտագիտություն ենք հայտնում «Նորք» տեղեկատվական նրանք կենտրոնին և նրա տնօրեն Վ. Չոբանյանին՝ այս գրքի հրատարակությունը իրականացնելու համար:

Գրականություն: Հմայակյան 1990; Հովհաննիսյան 1996; հմմտ. նաև Քալանթարյան, Մնլքոնյան 2005; Կալանթարյան 2006; Ögün 1975; Ögün 1978; Kleiss 1976c; Kleiss 1979b; Kleiss 1979c; Kleiss, Hauptmann 1976; Forbes 1983; Burney 1995; Zimansky 1998

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ուրարտական հիմնական եռշարժանների քարտեզ (կազմող՝ Գ. Տիրացյան, Գ. Կոչել-լենկո, որոշ լրացումներով) (29)
2. Տուշպա, ամրոցի պատը՝ ուրարտական շրջանի մնացուկներով (31)
3. Ներքին Անձավ, ամրոցի հատակագիծը (ա), Զիվիստան, ամրոցի հատակագիծը (բ) (34)
4. Վերին Անձավ, ամրոցի հատակագիծը (35)
5. Թոփրաք քալե, տաճարի հատակագիծը (37)
6. Թոփրաք քալե, տաճարի վնրակազմությունը՝ ըստ Է. Ակուրգալի (40)
7. Թոփրաք քալե, շինության բրոնզե մոդել, Բրիտանական թանգարան (41)
8. Հայկաբնրդ, ամրոցի ուրվագծային հատակագիծը (43)
9. Այանիս, ամրոցի տնդագրական քարտեզը և հատակագիծը (50)
10. Այանիս, արևմտյան պահնտառամյակները (50)
11. Քայալը դեմք, ամրոցի (ա) և տաճարի (բ) հատակագծերը (53)
12. Ալերն թնկել, միջնաբնրդի հատակագիծը (59)
13. Ալերն թնկել, տաճարի վնրակազմությունը՝ ըստ Թ. Օզյուչի (61)
14. Էրեբունի, սյունազարդ բակը (վնրակազմություն) (ա), միջնաբնրդի հատակագիծը (բ) (64)
15. Կարմիր բլուր, միջնաբնրդի հարավային և հյուսիսարևելյան մուտքերը (վնրակազմություն) (ա), միջնաբնրդի հատակագիծը (բ) (73)
16. Կարմիր բլուր, N 25 և 28 գինու մասնների հատակագծերը (ա, բ) (75)
17. Կարմիր բլուր, կացարաններից մնացքը (80)
18. Արգիշտիխինիլի, միջնաբնրդի վնրակազմությունը (ա), ընդհանուր հատակագիծը (բ), միջնաբնրդի հատակագիծը (գ), սիսուացիոն հատակագիծը (դ) (86)
19. Արմավիր, արևմտյան ամրոցի սյունազարդ դաելիճը (88)
20. Արմավիր, արևմտյան ամրոցի հատակագիծը (90)
21. Արմավիր, “Կնիքանկի տան” հատակագիծը (93)
22. Օշական, ամրոցի արևմտյան պարսպի վնրակազմությունը (96)
23. Օշական, պալատական համալիրների հատակագիծը (97)
24. Օշական, ամրոցի հատակագիծը (100)
25. Արագած, միջնաբնրդի ընդհանուր տնաքը (վնրակազմություն) (ա), միջնաբնրդի հատակագիծը (բ), հին վնրակազմությունը (գ) (104)

Նկարների ցանկ

26. Արագած, միջնաբնորդի կացարանների տնեղայրության սխնման (106)
27. Բաստամ, ամրոցի ընդհանուր հատակագիծը (ա), մուտքի հատակագիծը (բ), պյունագրդ դաելիծի համալիրը (գ) (109)
28. Բաստամ, հյուսիսային շինությունը (110)
29. Ազնավոր թնձի, ամրոցի հատակագիծը (111)
30. Զննակի թնձի, տառ հատակագիծ (112)
31. Ուրարտական ամրոցների հատակագծեր (կազմող՝ Հ. Հակոբյան), Զիշ քալնաի (Ուրմիայի մոտ) (ա), Զննակի թնձի (բ), Թնյշնբախնի, հարավային դարպասների վնրակազմությունը (գ), Դավալու (դ), Բաստամ (ե), Արգիշտիխինիլի, արևմտյան միջնաբնորդը (զ), Արագած (է) (114)
32. Գյուղերի հատակագծեր, Դուչքազի (ա), Թուրքի թնձի (բ), Քալն քամանա (զ) (117)
33. Միջնաբնորդների հատակագծերի տեսակները (ա-ի) (121)
34. Բնակելի տներ (կազմող՝ Գ. Կոշնենկո), Թնյշնբախնի, միջնաբնորդի գինվորականների տները (ա), Թնյշնբախնի, բնակելի տների վնրակազմությունը (բ), Արգիշտիխինիլի, ուշ ուրարտական շրջանի աղքատների տներ (զ), Արգիշտիխինիլի, առանձնատներ (դ-է), «Ազնվական ուրարտացու» տունը (ը), Թնյշնբախնի, մնած սնկցիոն շինությունը (թ) (123)
35. Տաճարներ, Ալեքն թնձի (վնրակազմություն) (ա-զ), Քայալը դերն, հատակագիծը (ի), Ալեքն թնձի, մուտքի վնրակազմությունը (Ա), Ալեքն թնձի, հատակագիծը (զ), Զնիք քալնաի, ներքին տեսքը (վնրակազմություն) (է) (127)
36. Տաճարներ, Մուսասիր (ա), Էրեբունիի Խալդիի տաճարի հատակագիծը և վնրակազմությունը (թ), Էրեբունիի Սուափ տաճարի հատակագիծը (զ), Էրեբունիի Հրո տաճարի հատակագիծը (ի), Թաշքուրուն, տաճարի ներքին տեսքը, վնրակազմություն (Ա), Թաշքուրուն, տաճարի հատակագիծը (զ) (128)
37. Արքարաններ, Ալեքն թնձի, բացօթյա սրբարանը (ա), Թոփրաք քալն, կնիքի պատկեր՝ կոթողի աջև կատարվող նվիրաբերման ծնուղ (թ), որմնախորշ՝ արձանագրությամբ՝ Ոնզայնեի և Ուշնույնեի միջև (զ) (129)
38. Մուսասիր, տաճարի վնրակազմությունը՝ լստ Վ. Զլայսի (130)
39. Ուրարտական զարդանկարներ, Էրեբունի (ա-մ) (131)
40. Ուրարտական զարդանկարներ, Էրեբունի (ա-մ) (132)
41. Բարձրաքանդակներ, Աղիլցնվազ (վնրակազմություն) (ա), Զնիք քալնաի (թ) (133)
42. Մուտքներ, պյունագարդ ու մուշթենրով անյակների և դաելիծների հատակագծերի սխնմա

- (ա, բ), տաճարների մուտքների սխնմա (գ), ամրոցների մուտքների սխնմա (դ) (136)
43. Ուրարտական ծածկների ձևներ (ա-Ե) (139)
44. Ուրարտական աղյուսի շարվածքի ձևներ (ա-Ե) (140)
45. Ուրարտական փականների ձևներ (ա-դ) (141)
46. Ուրարտական հատակների ձևներ (ա-Ե) (142)
47. Ուրարտական քիվների ձևներ (ա-դ) (143)
48. Ուրարտական ջրատար խողովակների ձևներ (ա-զ) (144)
49. Ուրարտական ամրոցների պատերի ձևներ (ա-ի) (145)
50. Ուրարտական համաշափություններ, կանգուն (ա), քիվնը (բ, զ) (146)
51. Վան, Մեծ Խորխորյան քարանձավը (148)
52. Նաֆք քյոյու, քարանձավները (149)
53. Իշկալա, քարանձավները (150)
54. Քայալը դեմք, դամբարանի հատակագիծը և կտրվածքը (151)
55. Ալերն թնիկն, դամբարանները, կտրվածք հնոանկարում և ընդհանուր հատակագիծ (ա),
հատակագիծ և կտրվածք (բ), հատակագիծ (զ) (155)
56. Ալիշար, դամբարանի ընդհանուր տեսքը (157)
57. Երևան, դամբարանի հատակագիծը (158)
58. Ագարակ, դամբարանի կտրվածքը (ա), հատակագիծը (բ) (162)
59. Գնդիռվիտ, դամբարանի ընդհանուր տեսքը (ա), հատակագիծը (բ), կտրվածքը (զ) (165)
60. Քալու, քարայր 1, 2, 3 (ա, բ, զ) (168)
61. Քայազնտ, դամբարանի ճակտոնի քարծրաբանդակը (168)
62. Սանգար, դամբարանի հատակագիծը (169)
63. Իգդիր, դիակիզման ծնուվկատարված թաղման դամբարանի կտրվածքը (169)

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Կորդվագ լնոները հաքարից (216)
2. Ռշտունյաց լնոները և Վանա լիճը (216)
3. Միփան լնող և Լիմ կղզին Վանա լճի հյուսիսարևելյան ափից (217)
4. Արտռու լնող Ռատանից (217)
5. Վասպուրականի լանջաֆոր Անձավից (Զբմ-զրմ դադի մոտակայքում) (218)
6. Արարատը Բայազենտի մոտակայքից (218)
7. Վանա ժայռը և ուրարտական ժայռափոր կառույցները (219)
8. Տուշպա, ուրարտական պատի մնացորդներ ժայռի ստորին հատվածում (219)
9. Տուշպա, ամրոցի ներկայիս տնաքը (220)
10. Տուշպա, հայացք դնափի ներքին կառույցները (220)
11. Տուշպա, հայացք դնափի ստորին քաղաք (221)
12. Տուշպա, ժայռափոր կառույց (221)
13. Տուշպա, Խորխորյան տարնգրությունը (222)
14. Վան, Մելքի դուռը (222)
15. Վերին Անձավ, ընդիանուր տնաքը (223)
16. Ստորին Անձավ, հատված ուրարտական պատից և հայացք դնափի Վերին Անձավ (223)
17. Անձավ, ուրարտական արծանագրություն (224)
18. Անձավ, ուրարտական արծանագրություն (224)
19. Այանիս, ընդիանուր տնաքը (225)
20. Այանիս, ներքին տաճարական համալիրի մնացարդները (225)
21. Այանիս, ուրարտական պատի շարվածք (226)
22. Այանիս, հատված ուրարտական մնծ արծանագրությունից (226)
23. Արածանին և Բալուի ուրարտական ամրոցի տնղագրությունը (227)
24. Վերամի ջրամբարը (227)
25. Մենուայի ջրանցքի ներկայիս վիճակը, հատված (228)
26. Մենուայի ջրանցքի ներկայիս վիճակը, հատված (228)
27. Բայազենտի ուրարտական քարձրաքանդակի ընդիանուր տնաքը (229)
28. Բայազենտի ուրարտական քարձրաքանդակի մանրամասները (229)
29. Արամուս, ալմրումների ընդիանուր պատկերը (230)
30. Արամուս, հատված պատի շարվածքից (230)
31. Օշական, ուրարտական ամրոցի հյուսիսարևմտյան պարսպի հատվածը (231)
32. Օշական, ուրարտական նորահայտ տաճարը (231)

I. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՐՄԱՆԴԻՐՆԵՐ

Ուրարտուի անզյալը գիտական աշխարհին հայտնի դարձավ XIX դ. կեսնրից՝ շնորհիվ Հայկական լեռնաշխարհի տարածքում հայտնաբերված սննդագիր արձանագրությունների: Այդ արձանագրությունները հայտնի էին դեռևս վաղ միջնադարում (Մ. Խորենացի), սակայն գիտակցված չէին որպես պատմական աղբյուր: Եվ միայն XIX-XX դդ. սահմանին, նրանց վնրջնական վնրժանումից հետո, վնր հանվեց Հայաստանի պատմության լիովին նոր մի էջ:

Հնագիտորեն ուրարտական մշակույթը սկսեց ուսումնասիրվել ավելի ուշ: XIX դ. վնրջի և XX դ. առաջին կեսի փոքրածավալ հնտախուզական ուսումնասիրությունները վնրածվեցին ավելի մանրամասն և լայնածավալ հնագիտական պեղումների միայն XX դ. նրկրորդ կեսից, նրբ Հայաստանի Հանրապետությունում, Թուրքիայում (Արևմտյան Հայաստանում) և հյուսիսարևմտյան Իրանում (Պարսկահայրում) հայ-ուսական, թուրքական և անգլո-ամերիկյան արշավախմբերը մենքը մյուսի նույնից վնր հանեցին հուշարձաններ, որոնց հիման վրա այսօր բավականին ընդհանուր պատկեր է ստեղծվել ուրարտական մշակույթի վնրաբերյալ:

Պատմահնագիտական ուսումնասիրությունները, բացի բազմաթիվ բացահայտումներից, առաջ բնրեցին նաև դժվար հասկանալի խնդիրներ: Այսպես, ուրարտական արձանագրությունների տրաֆարետային և հակիրճ լինելու հանգամանքը կատածի տակ դրեց ուրարտենինի՝ լայն խոսակցական լեզու լինելը: Դեռևս լիովին պարզ չեն խուժի-ուրարտական լեզվաբնտանիքին պատկանող ուրարտենինի և հնդենվրոպական հայենինի փոխչփման մանրամասները, թեև ակնհայտ է, որ այդպիսի փոխչփում տնդի է ունեցել: Մինչ այժմ քննարկվում են ուրարտական արքաների հաջորդականության և կոնկրետ գահակալման տարիների հարցերը: Հրապարակի վրա են նաև ուրարտական թագավորության կործանման (Ձ.ա. VII դ. կեսնր, թե՞ VII-VI դդ. սահման) ավարտական փուլի ժամանակագրության նոր մելքնաբանություններն ու թվագրությունները:

Նյութական մշակույթի ուսումնաժրման բնագավառում դեռևս լուծման ընթացքում է «Ուրարտու-Հայաստան» խնդիրը, համառարտական մշակույթի տնօջային տարրենրակների բացահայտման, «Վերնախավային» և «զանգվածային» մշակույթների հարաբերակցության հարցերը ևն: Կարևորվում է այսպես կոչված «ուրարտական երսպանսիային» համընթաց ձևավորող նոր իրողությունների՝ քաղաքական, ուսումնական, տնտեսական համակարգների, վարչատարածքային ստորաբաժանումների, սոցիալական կազմի և դրանցով պայմանավորված ուրարտական թագավորության՝ որպես տերության կազմավորման «մեխանիկան» վեր հաննելու խնդիրը: Ընդ որում, «ուրարտական երսպանսիա» ասելով՝ նկատի ունենք ոչ միայն ուսումնական նվաճումները, այլև մշակույթային նոր իրողությունների տարածումն ու արմատավորումը տարածաշրջանում: Կարմիր բլուրի պնդումներից հետո հատուկ ուսումնասիրության առարկա դարձան ուրարտա-սկզբական փոխառնչությունները, սակայն դրանց բուն էռթյունը դեռևս լիովին պարզաբանված չէ:

Այնուամենայնիվ, լայնածավալ պատմահնագիտական աշխատանքները նորանոր ճանապարհներ են բացում վերոհիշյալ խնդիրների պարզաբանման համար:

Այս ակնարկում մեր նպատակն է ներկայացնել ուրարտական նյութական մշակույթին, մասնավորապես ճարտարապետությանը վերաբերող իրավիճակը: Սակայն մինչ այդ, հնտագա մեր աննկիքը ավելի պարզ դարձնելու նպատակով, ներկայացնում ենք ուրարտական պատմության համառոտ ակնարկը:

ՊԱՏՄԱՎԱՆ ՀԱՄԱԾԱՌ ԱԿՆԱՐԿ

Արդեն Զ.ա. XIII դ. Վանա լճից հարավ՝ Նիքուրի (Արարադի կամ Չուղի) լեռներից արևելք և արևմուտք ընկած տարածքում, ձևավորվել էր Ուրուատրի անվանված քաղաք-պետությունների դաշնությունը: Զ.ա. XIII դ. Վերջի Ասորենատանի արքա Սալմանասար I-ի մի արձանագրության հաղորդած տվյալների համաձայն՝ Ուրուատրի դաշնությունը կազմված էր ութ բնրդաքաղաքներից և 51 գյուղներից. այսինքն՝ յուրաքանչյուր բնրդաքաղաք, իր 6-7 գյուղներով հանդերձ, մեկ իշխանություն է կազմուի: Հայտնի են այդ իշխանությունների անունները՝ Խիմմեն, Ուատկուն, Բարգուն, Սալուա, Խալիլա, Լուսա, Նիլիպալսրի, Ջինգուն:

Զ.ա. X դ. 70-ական թթ. Ուրուատրին հասնում է աննախընթաց հզորության, քանի որ դաշնությանն է միանում տարածաշրջանի (Հայկական Տավրոսի) հարուստ և հզոր իշխանություններից մեկը՝ Մուսատսիրը (Արդինի), որտեղ և գտնվում էր Ուրարտուի գլխավոր՝ Խալիլի աստծո ամենանշանավոր տաճարը: Զ.ա. X դ. Ուրուատրին մասամբ կազմալուծվում է: Աղադներարի II-ը այն եիշատակում է որպես Նիքուրի լեռների հարավային լանջին ծվարած փոքրիկ նրկիր՝ Ուրարտու անվամբ: Զ.ա. IX դ. սկսվում են Ասորենատանի արքա Սալմանասար III-ի արշավանքները դեպի Ուրարտու: Եթեն մինչ այս Ասորենատանի տիրակալները չէին հաղորդում Ուրուատրի նրկիր որևէ արքայի անուն, ապա այժմ Սալմանասարին դեմ է նենում համայն Ուրարտուի արքան՝ Արամեն, ով իր տրամադրության տակ ուներ լավ կազմակերպված քանակ ու ամրոցներ, որոնցից կարևորներն էին Արծաշկուն (Արծեն) և Սուգունիան (տեղադրվում է Վանա լճից հարավ-արևելք):

Արամենի թագավորության գրաված տարածքն ընդգրկում էր Եփրատ և Արածանի գնտեներից համապատասխանաբար արևելք ու հարավ ընկած գավառները մինչև Վանա լիճ, հյուսիս-արևմուտքում նրկիր սահմանները հասնում էին մինչև Դիառլիխ, արևմերում՝ մինչև Ուրմիա լիճ արևմտյան ավագանում գտնվող Գիլգանու նրկիրը, հարավ-արևելքում Մուսատսիրը: Երկրի հյուսիսային, հարավային, հարավակարևմտյան սահմանները հստակ չեն: Կարենի է ենթադրեն, որ հյուսիսում այն չէր

հասնում Հայկական Պարին, իսկ հարավում սնապածն միրճվում էր Մուսասիրի և Մելիքրի միջև՝ իր մեջ ընդգրկելով Ուրուատրի իշխանությունը, հանգամանք, որը հիմք է տվել ատոռնստանցիններին՝ Ուրարտու անվանելու նաև համայն թագավորությունը:

Արամեն և իր հաջորդ Սարդուրի I արքան Ք.ա. IX դ. Կենսերին Սալմանասարի դեմ համառ պայքարում կարողացան պահպանն նրկրի անկախությունը: Սարդուրի օրոք է արքայանիստ դառնում Վանա ամուր ժայռին ապավինած Տուշպա (Տոսա) քաղաքը, որն այնուհետև նրկուսուկն դար անընդմեջ նորակ թագավորության հզորության գրավականը և նրկրի մշակույթի զարգացման կարևորագույն հիմնակնտը:

Սարդուրի հաջորդների՝ Իշպուխնիի և ապա Իշպուխնիի ու Մենուայի համատեղ գահակալությունը Ք.ա. IX դ. Վերջներին ընթանում էր քավականին տագնապալի պայմաններում: Հարավից շարունակվում էին ատոռնստանյան բանակի գրոհները: Ահա այս պայմաններում Իշպուխնի արքան սկսում է իրագործել բարեփոխումների մի ծրագիր, որը նորակ Ուրարտուի ինչպես քաղաքական կայունության, այնպես էլ մշակութային հետագա զարգացման հիմքը: Բարեփոխումներից առաջինն առնչվում էր իրավական խնդիրներին և կոչված էր կարգավորներու նրկրի տարբեր խավերի իրավունքներն ու պարտականությունները ինչպես բուն Քիայնիլիում, այնպես էլ նոր նվաճված կամ նվաճվելիք նրկրներում: Հաջորդ բարեփոխությունն առնչվում էր նրկրի պետական լեզվին: Մինչ այս ուրարտական թագավորության պետական լեզուն էր արքադերնը: Իշպուխնին իր արձանագրությունները սկսեց գրել ուրարտերենով:

Բարեփոխումների այս ծրագրի իրագործումը նոր թափ ստացավ Իշպուխնիի և Մենուայի համատեղ գահակալության տարիներին՝ Ք.ա. IX դ. Վերջներին: Այս ընթացքում է, որ Մուսասիրի հզոր իշխանությունն ընդունեց գահակալների գնրիշխանությունը, կարգավորվեցին պետական կրոնը և ծիսակարգը, օրացույցը, չափ ու կշիռը, միջդասային հարաբերությունները, ռազմական գործը, հողատիրության կանոնները և այլն:

Ք.ա. IX դ. Վերջին Հայկական Պարից հյուսիս արդեն ձևավորվել էր մի համադաշնություն, որն ուրարտական սկզբնադրյուրներից հայտնի է

Էթիունի անվամբ: Էթիունին, որի կազմում էին Մեծ Հայքի տասնեխնգ աշխարհներից վեցը՝ Սյունիքը, Արցախը, Ուտիքը, Տայքը, Այրարատը, Գուգարձը, այդ ժամանակաշրջանում վնրահսկում էր Իրանական սարահարթը Աև ծովին կապող մայրուղիները: Այն ճգում էր, ըստ նրեւոյթին, իր վնրահսկողությունը սահմանն նաև Աև և Միջներկրական ծովները կապող «ներկաթի առևտրի ճանապարհի» միջին հատվածի և ավելի ուշ «Արտաշատ-Բագավան» անվանված ուղեգծի վրա:

Ք.ա. IX դ. 20-ական թվականների սկզբին Էթիունի համադաշնության արևմտյան թևը կազմող «Ուխտնրուխի-Լուշա (Լոսի) - Քաթարզա (Կողարջը)» անվանված իշխանությունները և ուրարտական զորքները բախվում են Անաշն (Ալաշկերտ) քաղաքի մատուցներում, որտեղ էթիունյան բանակը ծանր պարտություն է կրում: Այս հաղթանակից հետո Վանի արքաները քայլ առ քայլ իրենց են ենթարկում Էթիունին ու վնրահսկողություն սահմանում այս տարածաշրջանով անցնող և ավելի ուշ որպես «Արտաշատ-Մերքաստավոլիա» հայտնի մայրուղու վրա: Այս ճանապարհի և դրա ճյուղավորումների վրա են կառուցված եղել Արտաշատի, Էրեբունիի, Սարդուրիխիսինիիի, Թնյշնրահնիի, Արգիշտիխիսինիիի, Հռոմի, ինչպես նաև Արագածի և Օշականի ուրարտական ամրոցները:

Ուրարտական թագավորությունը հզորացման զագաթնակնետին է հասնում Ք.ա. VIII դ.՝ Արգիշտի I և Սարդուրի II արքաների զահակալության տարիներին, նրա վանի արքաներին հաջողվում է զլխավորն սիրիա-հարավարևելափոքրասիական հակառարենտանյան դաշնությունը՝ կազմված Արփաղից, Կումմազենն Կոմմազենն, Գուրգումից, Մելիդից (Մալաթիա), Դամտսկսից, Տյուրոսից, Կուտից (Կիլիկիա), Կարքսմիշից, և վնրահսկել տարածաշրջանով անցնող գրնթեն բոլոր կարևոր առևտրական մայրուղիները:

Ք.ա. 744 թ. Ասորենստանի զահն անցնում է ժամանակի ամենատաղանդավոր քաղաքական ու տագմական գործիչներից մենքին՝ Թիգլաթպալասար III արքային: Ակսվում է տևական պատնրազմը Ասորենստանի և Ուրարտուի միջև: Ք.ա. 735 թ. ասորենստանցիները մտնում են Ուրարտու, շրջապատում Տուշպան, սակայն, չկարողանալով գրավել այն, ի

վերջո նահանջում են: Սարդուրին շուտով գահընկնց է արկում, և իշխանությունն անցնում է նրա որդուն՝ Ռուսային: Ռուսայի գահակալության տարիներին նրկրի հյուսիսային սահմաններին հայտնվում է մի նոր ախոյան՝ կիմբենները: Մնձ զրկանքների գնով Ռուսային հաջողվում է շեղմլ կիմբեռական ցեղերի արշավանքների ուղին դնափի Մանա ու ավերումից փրկնլ նրկրի կենտրոնական շրջանները: Այդ ընթացքում զորքն արքա է հոչակում Ռուսայի Մելարտուա որդուն, որին Ռուսան ստիպած էր հետազայում մահապատժի ննթարկնլ: Կիմբեռական պատերազմը շարունակվում էր, նրբ հարավից Ուրարտու է ներխուժում Ասորենստանի արքա Սարգոնի բանակը: Ք.ա. 714թ. Ուառշ լեռան վրա (Թափրիզի մոտ) կայացած վճռական ճակատամարտում Ռուսան սլարտվում է, ասկայն Սարգոնը չի համարձակվում արշավնլ դնափի Տուշպա, այլ ամայացնելով նրկրի հարավարևելյան գավառները՝ մտնում է Մուծածիրը: Ավենրվում և թալանվում է նրկրի ամենահարուստ քաղաքը՝ Խալդի աստծո գլխավոր պաշտամունքային կենտրոնը: Ռուսան ինքնասպանություն է գործում:

Թվում է, թե այս իրադարձություններից հետո Ուրարտուն պնտք է վնրածվել նրբորդական մի իշխանության, սակայն, ինչպես ցույց են տալիս ենտազա զարգացումները, հաջորդ դարում ուսումնասիրողի աշքի առջև կրկին հառնում է ուրույն մշակութային կյանքով ապրող Ուրարտուն: Կրկին հզոր են Վանի արքաները, որոնք հաջողությամբ են պահում իրենց ռազմարշավները, իմբուս են նոր քաղաքներ, փորում ջրանցքներ ու լճեր: Մաղկում են ապրում արվեստը, արհենատներն ու տռևսուրը: Ուրարտու են հասնում մինչև իսկ շինական ու ենդկական ծագում ունեցող իրենք, իսկ ուրարտական արտադրանքը հասնում է մինչ Էգեյան աշխարհ և Հյուրուրիա:

Ուրարտական պնտության կործանումը սովորաբար կապում են արդեն իշխատակված քոչվորների, մասնավորապես կիմբեռական և քիչ ավելի ուշ տեղի ունեցած ալյութական արշավանքների հետ: Սակայն վնրուիշյալ իրադարձությունների հակիրճ թվակումն իսկ վկայում է դնարձրի այլ ընթացքի մասին: Ըստ նրևսույթին, ինչպես Ք.ա. XIII-XIX դդ. շարու-

նակական ասորենստանյան արշավանքները նպաստեցին Բիայնիլիի ձևափորմանը, այնպես էլ կիմերա-սևութական ճնշմանը միասնաբար դիմադրելու անհրաժեշտությունը նպաստեց լնոնաշխարեի (մասնավորապես Եթունիի իշխանությունների) կամավոր միավորմանը Վանի արքաների շուրջ: Ստեղծված ներքաղաքական քարենպաստ իրավիճակով էին պայմանավորված ինչպես Ուրարտուի հնտագա հաջողություններն արտաքին քաղաքական ասպարեզում (Ռուսայի որդուն՝ Արգիշտի II-ին մոտ Ք.ա. 700 թ. հաջողվում է վնրադարձնել Մուսասիրը, նրա բանակները հասնում են մինչև Կասպից ծով), այնպես էլ մշակութային կյանքի առաջընթացը: Մասնավորապես թուլանում է Ք.ա. XIII-VIII դդ. դիտվող մշակութային հակամարտությունը: Պատահական չէ, որ հենց Ք.ա. VII դ. է ուրարտական տերության ներքաղաքական ու մշակութային ամենաներդաշնակ զարգացման ժամանակաշրջանը: Այս ընթացքում է, որ Ռուսա II-ը կառուցապատում է Թեյշերախի (Կարմիր բլուր) քաղաքը, որն այնուհետև դառնում է Հայկական լնոնաշխարեի կարևոր մշակութային կենտրոններից մեկը: Ծաղկում է քաղաքային կյանքը: Շիրակում վնրջնականապես կառուցապատվում է Հռոմի ուրարտական ամրոցը: Արգիշտիխինիլի-Արմավիրում Ռուսա Երիմենառդին հիմնադրում է մի նոր պալատական համալիր: Օշականում և Արգիշտիխինիլիին այլ շինարարական աշխատանքներին զուգահեռ, կառուցվում են տնիական եթունյան տատվածություններին նվիրված տաճարներ:

Քաղաքական ու մշակութային հակամարտության մնացումը նրկրում ուղեկցվում էր եթունիկական հանդուժողականությամբ: Ստեղծված իրադրությունը բնականաբար նպաստեց նաև լնոնաշխարեի տարեթանիկ բնակչության էլ ավելի մնացմանը, որի արդյունքում Ք.ա. II դ. Մեծ Հայքի բնակչությունն արդեն խոսում էր մեկ ընդհանուր լնզվով:

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ներկայիս Հայաստանի Հանրապետության, Թուրքիայի (Արևմտյան Հայաստան), և հյուսիսարևմտյան Իրանի (Պարսկահայք) տարածքներում ուրարտական եռաշարժանների պեղումների արդյունքուն կուտակվել է ահօնի փաստական նյութ՝ ուրարտական մշակույթառանձնահատկությունները վեր հանձնու համար: Հայ (Տ. Մարտիրոսյան, Ս. Եսայան, Գ. Տիրազյան, Կ. Հռվիաննիայան, Ս. Հմայակյան, Հ. Ավտիսյան), տու (Բ. Պիոտրովսկի, Ս. Խոջաշ), նվրո-ամերիկյան (Ռ. Քարնետ, Զ. Բլրնի, Վ. Ջլայս, Ս. Կրոլ, Ու. Չայդլ, Պ. Զիմանսկի) և թուրք (Ս. Չիլինզիրողլու, Վ. Սեվին, Օ. Բնլիլի) հնագետների ուսումնասիրությունները մեծապես նպաստել են ուրարտական մշակույթի տարբեր խնդիրներ լուսաբանմանը: Նորահայտ նյութների հետ մեկտեղ շրջանառության մեջ են մտնել նաև ավանդական պատկերացումներից արմատապես տարբերվող նոր մեկնաբանություններ ու տեսակետներ:

Վերոհիշյալ մասնագետները ներկայացնում են մի քանի հնագիտական դպրոցներ, որոնք տարբեր տեսանկյուններից են նայում ուրարտական մշակույթի հիմնախնդիրներին: Այսպես, նթե նվրո-ամերիկյան թուրքական ուրարտագիտության մեջ բացակայում է «Ուրարտ Հայտատան» (այսինքն հայկական և ուրարտական մշակույթների նրանց ժառանգականության) խնդիրը, ապա հայ-տուսական դպրոցուայն, լուս է ության, կարևորագույն հարց է հանդիսանում: Եթե թուրք հնագետները զբաղվում են գլխավորապես ուրարտական մշակույթի ծագում և նաբանության խնդիրներով (ինչի հնարավորությունը ընձնում են վեց քին շրջանում հատկապես Վանա լճի առափնյա շրջաններում կատարված պեղումները), ապա հայ հնագետներին առավելապես հետաքրքրություն է Ուրարտուի պատմության գարգացման վերջին փուլը՝ կապված հայ ժողովրդի կազմավորման և պետականության ստեղծման խնդրի հետ:

Աշխարհնկալման այս տարբերությունները հանգեցրել են տարսկարծության նաև գիտական տերմինաբանության և պատմամշակութային իրավիճակի իմաստավորման ասպարեզում: Այսպես, ար-

մտյան և թուրք հնագետները ուրարտական պետությունը դիտարկում են որպես մեկ ամբողջություն՝ առանց տեղային դրսերումների տարբերակման: Մինչդեռ հայ և տու հնագետների լիովին այլ աշխարհելնկալում հանգնցրել է ուրարտական մշակույթում տարբեր ենթախմբների սահմանմանը, ինչն արտահայտվել է «տնդական» և բուն «ուրարտական», «վերնախավային» և «զանգվածային» մշակույթ հասկացությունների կամ վերոհիշյալ «Ուրարտու-Հայաստան» հակադրության մեջ: Բացի այդ, սկսած Ք.ա. VIII դ. կենսերից, նյութական մշակույթի մի շարք դրսերումներ (զենք, ձիասարք, մահարձաններ, պատկերագրություն, թաղման ծճն) վկայում են նաև մեկ այլ՝ կիմբրա-սկյութական տարրի առկայության մասին Հայկական լեռնաշխարհում, ինչը մասնագետների մի մասը վերագրում է սկյութական մշակույթի առանձնացմանը լեռնաշխարհում (Բ. Պիոտրովսկի, Ս. Տեր-Ավելտիսյան, Հ. Մարտիրոսյան, Գ. Թումանյան), մինչդեռ մյուս մասը խոսում է առանձին սկյութական տարբերի առկայության մասին (Ս. Եսայան, Մ. Պոգրեբովսկա): Ինչո՞ւմն է խնդիրը:

Հայաստանի տարածքում ուրարտական թագավորության վարչական, տնտեսական և մշակութային խոշոր կենտրոնների (Կարմիր բլուր, Արին բերդ, Արգիշտիխինիլի) պեղումներով վեր հանված հնագիտական համալիրները (Ղսեղնուն, Մետայա սպասք, ճարտարապետական կառույցներ և այլն) ժամանակին արժնվորվնդին «ուրարտական մշակույթ» հասկացության սահմաններում: Դրա հնտ մնկտնի, նորահայտ նյութերի կուտակմանը գուգընթաց, ակնհայտ էր դառնում, որ այս հասկացության սահմաններից դուրս են մնացել տարածաշրջանում պեղված և Ք.ա. VIII-VI դդ. սահմաններում թվագրվող այն համալիրների նյութերը, որոնք միանշանակ տարբերվում էին ուրարտական կենտրոններից հայտնաբնրված նմուշներից:

Այս հակասությունը հաղթահարներ նպատակով հ. Մարտիրոսյանի կողմից առաջին անգամ շրջանառության մեջ դրվեցին «տնդական մշակույթ», տեղաբնիկների՝ «նրկաթի լայն տարածման փուլի մշակույթ» հասկացությունները: Այս մոտենցումը կարծեն թե ընդունելի մի լուծում էր և արտացոլում էր ուրարտական էքսպանսիայի ընթացքում տարածա-

շրջանում ձևավորված իրավիճակը: Սակայն վերջին նրեք տասնամյակ-ների ընթացքում ի հայտ եկան մեծ թվով նոր համալիրներ, որոնք, ըստ էության, «ուրարտական» և «տնդական» մշակույթների փոխներթափանցման (խաչասբաման) արդյունք են, և հնարավոր չեն դրանք միանշանակ վնրագրել այս երկու մշակույթներից որևէ մեկին:

Այս հանգամանքը հատկապես ցցուն երևում է խնցեղեն արտադրանքի նմուշների վնրլուծության ժամանակ: Ընդ որում, ուրարտական կենտրոնների խնցեղենի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ «ուրարտական խնցեղենը» Ք.ա. IX/VIII դդ. սահմանից մինչև VII դ. վնրջերը գործնականում տեխնոլոգիայի և ձևաբանության մեջ որևէ լուրջ փոփոխություն չի ապրում: Մրան հակառակ՝ տարածաշրջանի մինչուրարտական հուշարձաններից կամ շերտերից հայտնաբերված խնցեղենը նշված ժամանակահատվածում զգալի փոփոխություններ է արձանագրում:

Հարկ է նշել նաև, որ, եթեն Ք.ա. VIII դ. առաջին կենսից, այսինքն՝ Շունաս II-ի գահակալման շրջանից, տեսաննլի են «ուրարտական» և «տնդական» մշակութային երևույթների մեկուսացված կամ սոսկ համատեղությամբ ի հայտ եկող դրսերումներ (այսինքն՝ շերտերում կամ դամբարաններում ավանդական ուրարտական և ավանդական տնդական մշակութային հատկանիշների օրինակները հանդիպում են համատեղ), ապա ավելի ուշ թվագրություն ենթադրող համալիրներում (կարմիր բլուր և համաժամանակյա հուշարձաններ) հանդիպում են ինչպես ուրարտական և տնդական մշակութային տարրերի նմուշներ, այնպես էլ այս երկու ավանդույթների խաչատրման հնուևանքով ձևավորված նոր տիպի օրինակներ:

Ինչպես արդեն նշվեց, ներկայիս հայաստանի մնացույն մասը համապատասխանում է ուրարտական աղբյուրների Եթիունի և Ուդուրի-Եթիունի ներկրներին, որոնք ուրարտական նվաճումից հետո՝ Ք.ա. VIII դ. սկզբին, դարձան ուրարտական պետության կարևոր մասնից մեկը: Այս իմաստով ուրարտական եքապանսիայի համատեքստում հայաստանի ներկաթենդարյան հուշարձանները հնարավոր է պայմանականորեն բա-

ժամանել երկու խմբի՝ 1. հուշարձաններ, որոնք ավելի են ուրարտական արշավանքների ժամանակ և լրվել, հետևապես ներկայացված են միայն նախառարարտական նյութերով, 2. հուշարձաններ, որոնք ավելի և վերականգնվել են ուրարտական թագավորների կողմից ու ներկայացված են ինչպես նախա-, այնպես էլ բուն ուրարտական շերտերով:

Վերն ասվածից նկատով՝ հայ հնագետները ուրարտական պետության գոյության ժամանակաշրջանի հայատանում տարբերակում են հիմնականում նրեք մշակութային իրավիճակներ.

1. «Լճաշեն-Մեծամորյան» (մասամբ անվանված նաև «Էթիունյան»)՝ տարածքի բնիկ մշակույթը,

2. «Քիայնական» (կամ «Վանտոսպյան»)՝ հարավից (Վանից) ներմուծված մշակույթը,

3. Երկուսի խաչատերման հետևանքով Ք.ա. VIII դ. առաջին կենսից առաջացած տեղական «ուրարտական» մշակույթը: Ընդ որում, այսունդ պետք չէ մոռանալ նաև կիմերա-սկյութական մշակութային տարրերի առկայության հանգամանքը:

Հայ և օտարերկրյա հնագիտական տերմինաբանության տարբերությունը նրանում է, որ արտասահմանցի հնագետները մինչ օրս (որոշ բազալտայի սահման չեն տեսնում վերոհիշյալ տեղական, ներմուծված և խաչատերված մշակութային իրավիճակների միջև: «Ուրարտական» տպածը նրանց համար մեկ ամբողջություն է: Սակայն նոր հնագիտական աշխատանքները Արևմտյան հայատանում ցույց են տալիս, որ լեռնաշխարհի այդ հատվածներում ևս կիմերանում տիրել է նմանատիպ իրավիճակ, ինչ ներկայիս հայտառանի հանրապետության տարածքում: Հետագա ուրարտագիտական ուսումնասիրությունները անպայմանութեն կիանգեցնեն ուրարտագիտական դպրոցների միջև առկա տերմինաբանական անհարթությունների վերացմանը: Այս իմաստով հատկապես կարևորվում է հայ և օտարերկրյա մասնագետների հնագիտական համագործակցությունը, որոնց թվում հատկապես հիշատակնելի են վերջին ժամանակների հայ-իտալական արշավախմբի աշխատանքները Սևանի ավագանում (Ս. Հմայակյան) և հայ-ավստրիական արշավախմբի աշխատանքները Կոտայքի մարզում (Վ. Ավետիսյան):

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ճԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ուրարտական ճարտարապետության ուսումնասիրումն ընդհանուր առմամբ ընթացել է ուրարտական մշակույթի հնտագուտմանը զուգահեռ: Սակայն, որպես առանձին գիտաճյուղ, այն ծևակորպել է միայն XX դ. երկրորդ կեսից:

Ուրարտական ճարտարապետության ամենավաղ նկարագրությունը պատկանում է Մ. Խորենացուն, որը Շամիրամին է վերագրում Վանի ամուր պարիսպները՝ պղնձակնրտ դրսնրով, ընդարձակ փողոցներով, ամբարտակներով, ջրանցքներով, բաղնիքներով, երկիարկ ու նոռահարկ ապարանքներով և ժայռափոր շինուազուններով: Խորենացու ճշգրիտ նկարագրությունները հիմք հանդիսացան նվիրապական արևելագետների (Ժ. Սեն-Մարտեն, Ֆ. Շուլց) համար՝ XIX դ. սկզբին սկսնլու ուրարտական մշակույթի հնտագուտությունը: Ակգրնական շրջանում մասնագետները բավարարվում էին հավաքնով և մասամբ վնրծանելով ուրարտական արձանագրությունները: Եվ միայն XIX դ. վերջներից սկսվեցին նաև հնագիտական աշխատանքները, ու մասամբ ուշադրություն դարձվեց ճարտարապետությանը:

1879 թ. Վանի արևելյան ծայրամասում գտնվող Թոփրաք քալն ամռոցում սկսվեցին հնագիտական ռուազին կանոնավոր պնդումները, որոնք ընդհատումներով շարունակվեցին մինչ 1938 թ. (Ա. Քենյարն, Ա. Ռեյնոլդս, Հ. Ռասամ, Կ. Լենման-Հաուպտ, Վ. Բենլը, Ն. Մառ, Հ. Օրբելի, Ս. Լեիք): Այս փոքրածավալ հնտագուտությունները, սակայն, իրենց առջև չեն դնում ուրարտական քաղաքաշինության ուսումնասիրման խնդիրներ, այլ բավարարվում էին առանձին կառուցվածքների բացահայտմամբ և արձանագրական նյութի հավաքմամբ ու վնրծանմամբ:

Ուրարտական առաջին հուշարձանը, որ պնդվեց և ճարտարապետական տեսաբնկյունից հանգամանորեն ուսումնասիրվեց, Թեյշեբայինին էր (Կարմիր բլուր), որի նախնական հնտագուտությունը սկսվեց 1939 թ. իսկ կանոնավոր պնդումները՝ 1939-1967 թթ., Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ: Այս պնդումները հնարավորություն տվեցին պարզելու ուրար-

տական քաղաքաշինության սկզբունքները՝ միջնաբներդի և քաղաքի բնակելի թաղամասների փոխադարձ դիրքորոշումը, փողոցների և տների հատակագծային ցանցը, սոցիալ-տնտեսական շնորհավորման խնդիրները ևն: Այս հարցներին են նվիրված Կ. Հովհաննիսյանի և Վ. Մարտիրոսյանի աշխատությունները:

Ուրարտական միջնաբներդի ներքին տարածության կազմակերպման, պալատական և պաշտամունքային համալիրների ընդհանուր հատակագծման ուսումնասիրման համար արժեքավոր նյութեր տվյալներունի պնդումները, որ կատարվեցին 1950-1969 թթ., Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ:

Հիշարժան են Արգիշտիխինիլիի պնդումները: Այս հուշարձանի նախնական ուսումնասիրությունը սկսվել էր դեռևս XIX դ. առաջին կեսին, սակայն կանոնավոր հնտագոտությունների հիմքը դրվեց միայն 1962 թ.՝ Վ. Մարտիրոսյանի, Բ. Առաքելյանի և Գ. Տիրազյանի ղեկավարությամբ: Արգիշտիխինիլիի պնդումները խիստ հարստացրին ուրարտական ճարտարապետության մասին մեր ունեցած պատկերացումները, որոնք ամփոփված են հատկապես Կ. Ղաֆարարյանի աշխատություններում:

Միջնաբներդով և քաղաքային պարսպով ամրացված ուրարտական բնակավայրի յուրօրինակ նմուշ է Արագած ամրոցը, որի պնդումները կատարվեցին 1954-1955 և 1980-ական թթ. (Կ. Հովհաննիսյան, Վ. Ավետիսյան) և նոր նյութեր տվյալներ ուրարտական քաղաքաշինության վերաբերյալ:

Վերջին՝ հնտխորհրդային տարիներին ևս շարունակում է ուսումնասիրվել ուրարտական ճարտարապետությունը: Այս առումով հատկապես կարևորվում են հայ-իտալական արշավախմբի աշխատանքները Սևանի ավագանում՝ սկսած 1994 թ. (Ս. Հմայալյան, Ռ. Քիշինեվ), որի ընթացքում ուսումնասիրվել են քազմաքիվ, այդ թվում՝ ուրարտական ամրոցներ: Բացառիկ նյութեր են ձեռք բնրվել Օշականի Դիդի կոնդ բլրի վրա գտնվող, Ք.ա. VII դ. թվագրվող դղյակ-ամրոցի պնդումների ժամանակ (Ա. Զալանթարյան): 1998 թ. սկսած՝ շարունակվում են Երնբոնիի պնդումները (Ֆ. Տեր-Մարտիրոսով, Ա. Փիլիպոսյան): 1980-ական թթ.

ուսումնասիրվել են ուրարտական նրկու հուշարձաններ՝ Դովրին (Ս. Հմայակյան) և Արամուսը (Վ. Ավետիսյան): Այանիսի տիպի հուշարձանների հայտնաբերումը և ուսումնասիրումը (Ա. Զիլինզգիրօղլու) Արևմտյան Հայաստանում լրացնում են մեր պատկերացումները ուրարտական պետության կենտրոնական և արևմտյան շրջանների ճարտարապետության մասին:

Ուրարտական ճարտարապետությունն ուսումնասիրների խոսքը հիմնականում քաղաքաշինության ընդհանուր սկզբունքների, ամրաշինության, բնակարանաշինության, մոնումենտալ կառույցների մասին է: Ուսումնասիրման համար հատկապես հարուստ նյութ են տալիս ուրարտական քազմաթիվ ամրաշինական կառույցները: Ուրարտական միշտ ամրոցների նկարագրություններ ունի դեռևս Կ. Լեհման-Հառիպոր, որը կատարել է այս հուշարձանների դասակարգման առաջին փորձը՝ իիմք ընդունելով պարհապնդերի շարվածքների միջև նորած տարբերությունները: Հնագետ Ա. Իվանովսկին, որը 1893 թ. գիտարշավի ժամանակ ուղեկցել է նշանավոր ասուրագետ Մ. Նիկոլսկուն, ուսումնասիրների միշտ ամրոցներ, պեղումներ կատարել Թաշբուրունում (Մենուախինիի): Ուրարտական ամրոցներին (մասնավորապես Արագածին) անդրադարձել է Թ. Թորամանյանը՝ Հայաստանի տարածքի կիկլոպյան ամրոցներն ուսումնասիրների: Ուրարտական ամրոց-միջնաբերդների համընդիմանուր համեմատական ուսումնասիրություն և դասակարգում է կատարել Կ. Հովհաննիսյանը, որն ընդհանուր աղերսներ է նկատել ուրարտական և Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկարանդարյան ամրոց-բնակատեղիների միջև: Վերջին շրջանում աճել է հմտաքրքրությունը Արևմտյան Հայաստանի և Պարսկահայրի ուրարտական ամրաշինական կառույցների հանդեպ, որոնց մեծ մասը նախնական հետազոտություններ են և տեղագրական բարտեզներ (Զ. Բլրնի, Վ. Քլայս, Ս. Կրոլ):

Բնակելի տներ պեղվել են դեռևս Կ. Լեհման-Հառիպորի կողմից Թոփրաք քալեում, սակայն ուրարտական բնակարանային ճարտարապետության հիմնական ուսումնասիրությունը սկսվել է Ծայշեքահնիի պե-

դումներով, որտեղ առաջին անգամ ի հայտ եկան բնակելի տների միշտը ամբողջական հատակագծեր: Զերնակի թնդնդում, որտեղ պնդումներ են կատարել Զ. Բյրնին և Ռ. Լոուսոնը, հայտնաբերվել է կանոնավոր, հակասարաչափ և փոխուղղահայաց հատակագծային ցանցով տեղադրված տիպարային բնակելի տների զանգվածային կառուցապատում:

Ուրարտական տաճարային ճարտարապետության ուսումնասիրումը պահպանվել է դեռևս Թոփրաք քաղելի տաճարի հայտնաբերմամբ XIX դ. վերջին: Սակայն ուրարտական տաճարաշինության վերաբերյալ հիմնական տվյալները ի հայտ եկան XX դ. նրկորորդ կեսից, երբ պնդվնցին այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Ազնավոր թնդնդն, Ալթըն թնդնդն, Քայալը դերեն, Զավուշ թնդնդն, Երեբունին: Առավել լավ է ուսումնասիրված պալատական ճարտարապետությունը, հիմնականում Երեբունիի, Թեյշեբահնիի, Ալթըն թնդնդի, Քայալը դերենի, Աղիլշենվազի կանոնավոր պեղումների հետևանքով (Թ. Օզյուչ, Զ. Բյրնի, Ս. Լոյդ):

Ինչ վերաբերում է ուրարտական դամբանային ճարտարապետության ուսումնասիրմանը, ապա, եթե մի կողմ թողնենք վիմափոր կառուցները, որոնք ուսումնասիրողների ուշադրությունը գրավել էին՝ սկսած XIX դ., ապա բուն դամբարաններն ու թաղման ծեսը հետազոտվել են միայն XX դ. նրկորորդ կեսից սկսած (Զ. Բյրնի, Բ. Օզյուն, Ս. Հմայակյան, Ա. Փիլիպոսյան, Ի. Կարապետյան, Գ. Թումանյան):


Գրականություն (Պարմություն եւ մշակույթ. լնդիանուր աշխատանքներ): Խաչատրյան 1933; Ղափանցյան 1940; Թորոմանյան 1942; Մարտիրոսյան 1971; Արդն 1972; Խաչատրյան 1998; Կարագեզնիան 1998; Գրեկյան 2002; Պոտրովսկի 1939; Պոտրովսկի 1944; Պոտրովսկի 1949; Պոտրովսկի 1959; Մելիքիշվիլի 1954; Պոտրովսկի 1962; Մարտիրոսյան 1964; Արյունյան 1964; Դյակոնով 1968; Արյունյան 1970; Արյունյան 1985; Տիրացյան 1988; Արյունյան 2001; Lehmann-Haupt 1910-1931; Adontz 1946; Mashkur 1966; Van Loon 1966; Salvini 1967; Akurgal 1968; Azarpay 1968; Riemschneider 1966; Burney, Lang 1971; Kleiss, Hauptmann 1976; Lang 1978; Erzen 1979b; Frankel 1979; Barnett 1982; Vanden Berghe, De

Mayer 1983; Diakonoff 1984; Zimansky 1985; Haas 1986; Çilingiroğlu 1988; Merhaw 1991; Wartke 1993; Hmayakian 1995; Salvini 1995; Santrot 1996; Çilingiroğlu 1997; Zimansky 1998; Smith 2003; Seidl 2004

Գրականություն (Ուրարվու-Հայաստան խնդիր): Խոնգադյան 1979; Առաքելյան և ուր. 1988; Տիրազյան, Արեցյան 1990; Հմայակյան 1995; Մկրտչյան, Ավետիսյան 1995; Փիլիպոսյան, Մկրտչյան 2001; Ավետիսյան, Ավետիսյան 2006; Թումանյան 2008թ: Մարտirosyan 1954; Մարտirosyan 1961; Մարտirosyan 1964; Կոշնարեա 1977; Տիրացյան 1978; Եսայի, Պօրեսօնա 1985; Zimansky 2001; Biscione et al. 2002; Tiratsyan 2003

Գրականություն (Ուրարվական ճարրարապեսության ուսումնափրման պականությունը): Ղաֆադարյան 1984; Քալանթարյան, Մնլյան 2005; Պիոտրովսկի 1959; Forbes 1983

Լուսանկարներ: 1-6



1. Ուրարտական հիմնական հուշարձանների քարտեզ

1. Ալթըն թնփն;
2. Նորշուն թնփն;
3. Քայալը դմբն;
4. Բաղնոց;
5. Ազնավոր թնփն;
6. Զնժ քալսի;
7. Արծկն (Աղիլջնվազ);
8. Ջննակի թնփն;
9. Օշական;
10. Մեծամոր;
11. Արգիշտիկինիլի;
12. Խոբիր;
13. Փոքրավան (Դովլի);
14. Արուվան (Ելառ);
15. Թնյշնքախնի;
16. Էրմբունի;
17. Ջրահովիտ;
18. Մենուախնիլի;
19. Խոր Վիրապ;
20. Սովինար;
21. Վերախսրամ;
22. Ռուսախնիլի (Բաստամ);
23. Տոշպա (Վան, Թոփրաք քալն);
24. Հայկաբնրդ (Զավուշ թնփն);
25. Գիյիմլի;
26. Հաֆթավան թնփն;
27. Քալաթզաղ;
28. Հասանլու;
29. Մուջնսիր (Մուսասիր);
30. Ազրաք թնփն;
31. Այանիս;
32. Պարնոս;
33. Քալու

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ներկայիս Հայաստանի հանրապետության, Թուրքիայի (Արևմտյան Հայաստան), և հյուսիսարևմտյան Իրանի (Պարսկահայք) տարածքներում ուրարտական հուշարձանների պեղումների արդյունքում կուտակվել է ահենի փաստական նյութ՝ ուրարտական մշակույթի առանձնահատկությունները վեր հանելու համար։ Հայ (Ճ. Մարտիրոսյան, Ս. Եսայան, Գ. Տիրազյան, Վ. Հրվիաննիայան, Ս. Հմայակյան, Ճ. Ավետիսյան), ուսւ (Ը. Պիոտրովսկի, Ս. Խոջաշ), նվրո-ամերիկյան (Ռ. Բարնետ, Զ. Բյրնի, Վ. Քլայս, Ս. Կրոլ, Ու. Չայդլ, Պ. Չիմանսկի) և թուրք (Ա. Չիլինգիրօղլու, Վ. Մելիքին, Օ. Բենլի) հնագնտների ուսումնասիրությունները մնձապես նպաստել են ուրարտական մշակույթի տարբեր խնդիրների լուսաբանմանը։ Նորահայտ նյութերի հետ մեկտեղ շրջանառության մեջ են մտել նաև ավանդական պատկերացումներից արմատապես տարբերվող նոր մեկնաբանություններ ու տեսակետներ։

Վերոհիշյալ մասնագնտները ներկայացնում են մի քանի հնագիտական դպրոցներ, որոնք տարբեր տեսանկյուններից են նայում ուրարտական մշակույթի հիմնախնդիրներին։ Այսպես, Եթե նվրո-ամերիկյան և թուրքական ուրարտագիտության մեջ բացակայում է «Ուրարտո-Հայաստան» (այսինքն հայկական և ուրարտական մշակույթների և նրանց ժառանգականության) խնդիրը, ապա հայ-ուսական դպրոցում այն, ըստ Էության, կարևորագույն հարց է հանդիսանում։ Եթե թուրք հնագնտները զբաղվում են գլխավորապես ուրարտական մշակույթի ծագումնաբանության խնդիրներով (ինչի հնարավորությունը ընձեռում են վերջին շրջանում հատկապես Վանա լճի առափնյա շրջաններում կատարված պեղումները), ապա հայ հնագնտներին առավելապես հետաքրքրում է Ուրարտուի պատմության զարգացման վնրջին փուլը՝ կապված հայ ժողովրդի կազմավորման և պնտականության ստեղծման խնդրի հետ։

Աշխարհնկալման այս տարբերությունները հանգնցընել են տարակարծության նաև գիտական տերմինաբանության և պատմամշակության իրավիճակի իմաստավորման ասպարեզում։ Այսպես, արև-

մտյան և թուրք հնագետները ուրարտական պետությունը դիտարկում են որպես մեկ ամբողջություն՝ առանց տնηային դրսեորումների տարբերակման: Մինչդեռ հայ և ուս հնագետների լիովին այլ աշխարհընկալումը հանգեցրել է ուրարտական մշակույթում տարբեր ենթախմբների սահմանմանը, ինչն արտահայտվել է «տնղական» և բուն «ուրարտական», «վերնախավային» և «զանգվածային» մշակույթ հասկացությունների կամ վերոհիշյալ «Ուրարտու-Հայաստան» հակադրության մեջ: Բացի այդ, սկսած Ք.ա. VIII դ. կենարից, նյութական մշակույթի մի շարք դրսերումներ (զենք, ծիասարք, մահարձաններ, պատկերագրություն, թաղման ծես) վկայում են նաև մեկ այլ՝ կիմերա-սկյութական տարրի առկայության մասին հայկական լեռնաշխարհում, ինչը մասնագետների մի մասը վերագրում է սկյութական մշակույթի առանձնացմանը լեռնաշխարհում (Բ. Պիոտրովսկի, Ս. Տեր-Ավետիսյան, Վ. Մարտիրոսյան, Գ. Թումանյան), մինչդեռ մյուս մասը խոսում է առանձին սկյութական տարբերի առկայության մասին (Ս. Եսայան, Մ. Պոգրեբովա): Ինչո՞ւ մն է խնդիրը:

Հայաստանի տարածքում ուրարտական թագավորության վարչական, տնտեսական և մշակութային խոշոր կենտրոնների (Կարմիր բլուր, Արին բերդ, Արգիշտիխինիլի) պեղումներով վեր հանված հնագիտական համալիրները (խեցեղեն, մետայա սպասք, ճարտարապետական կառույցներ և այլն) ժամանակին արժեվորվենցին «ուրարտական մշակույթ» հասկացության սահմաններում: Դրա հետ մեկտեղ, նորահայտ նյութերի կուտակմանը զուգընթաց, ակնհայտ էր դառնում, որ այս հասկացության սահմաններից դուրս են մնացել տարածաշրջանում պեղված և Ք.ա. VIII-VI դդ. սահմաններում թվագրվող այն համալիրների նյութենքը, որոնք միանշանակ տարբերվում էին ուրարտական կենտրոններից հայտնաբերված նմուշներից:

Այս հակասությունը հաղթահարելու նպատակով Վ. Մարտիրոսյանի կողմից առաջին անգամ շրջանառության մեջ դրվեցին «տնղական մշակույթ», տնղաբնիկների՝ «նրկաթի լայն տարածման փուլի մշակույթ» հասկացությունները: Այս մոտենցումը կարծեն թե ընդունելի մի լուծում էր և արտացոլում էր ուրարտական էքսպանսիայի ընթացքում տարածա-

ՄՇԱԿՈՒԹ-ԱՐԵՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ներկայիս Հայաստանի Հանրապետության, Թուրքիայի (Արևմրտյան Հայաստան), և հյուսիսարևմտյան Իրանի (Պարսկահայք) տարածքներում ուրարտական հուշարձանների պնդումների արդյունքում կուտակվել է ահռնելի փաստական նյութ՝ ուրարտական մշակույթի առանձնահատկությունները վեր հանելու համար: Հայ (Հ. Մարտիրոսյան, Ս. Եսայան, Գ. Տիրազյան, Կ. Հռվիաննիայան, Ս. Հմայալյան, Տ. Ավետիսյան), ուսւ (Բ. Պիոտրովսկի, Ս. Խոջաշ), Եվրո-ամերիկյան (Ռ. Բարնետ, Չ. Բլրնի, Վ. Քլայս, Ս. Կրոլ, Ռ. Զայդլ, Պ. Զիմանսկի) և թուրք (Ա. Ջիլինգիրօղլու, Վ. Սնվին, Օ. Բնիլի) հնագետների ուսումնասիրությունները մեծապես նաբաստել են ուրարտական մշակույթի տարբեր խնդիրների լուսաբանմանը: Նորահայտ նյութների հետ մեկտեղ շրջանառության մեջ են մտել նաև ավանդական պատկերացումներից արմատապես տարբերվող նոր մեկնաբանություններ ու տեսակետներ:

Վերոհիշյալ մասնագետները ներկայացնում են մի քանի հնագիտական դպրոցներ, որոնք տարբեր տեսանկյուններից են նայում ուրարտական մշակույթի հիմնախնդիրներին: Այսպես, Եթեն Եվրո-ամերիկյան և թուրքական ուրարտագիտության մեջ բացակայում է «Ուրարտո-Հայաստան» (այսինքն հայկական և ուրարտական մշակույթների և նրանց ժառանգականության) խնդիրը, ապա հայ-ուսական դպրոցում այն, ըստ էության, կարևորագույն հարց է հանդիսանում: Եթեն թուրք հնագետները զբաղվում են զլիսավորապես ուրարտական մշակույթի ծագում-նաբանության խնդիրներով (ինչի հնարավորությունը ընձնում են վերջին շրջանում հատկապես Վանա լճի առափնյա շրջաններում կատարված պնդումները), ապա հայ հնագետներին առավելապես հնտարրություն է Ուրարտուի պատմության զարգացման վերջին փուլը՝ կապված հայ ժողովրդի կազմակորման և պնտականության ստեղծման խնդրի հետ:

Աշխարհնկալման այս տարբերությունները հանգեցրել են տարակարծության նաև գիտական տնրմինաբանության և պատմամշակության իրավիճակի իմաստավորման ասպարեզում: Այսպես, արև-

մտյան և թուրք հնագնետները ուրարտական պնտությունը դիտարկում են որպես մեկ ամբողջություն՝ առանց տնդային դրսնորումների տարբերակման։ Մինչդեռ հայ և ուս հնագնետների լիովին այլ աշխարհընկալումը հանգնեցրել է ուրարտական մշակույթում տարբեր ենթախմբերի սահմանմանը, ինչն արտահայտվել է «տնդական» և բուն «ուրարտական», «վերնախավային» և «զանգվածային» մշակույթ հասկացությունների կամ վերռիիշյալ «Ուրարտո-Հայաստան» հակադրության մեջ։ Բացի այդ, սկսած Ք.ա. VIII դ. կեսերից, նյութական մշակույթի մի շարք դրսնորումներ (զենք, ձիասարք, մահարծաններ, պատկերագրություն, քաղման ծես) վկայում են նաև մենկ այլ կիմերա-սկյութական տարրի առկայության մասին Հայկական լեռնաշխարհում, ինչը մասնագնետների մի մասը վերագրում է սկյութական մշակույթի առանձնացմանը լեռնաշխարհում (Բ. Պիոտրովսկի, Ս. Տեր-Ավետիսյան, Վ. Մարտիրոսյան, Գ. Թումանյան), մինչդեռ մյուս մասը խոսում է առանձին սկյութական տարբերի առկայության մասին (Ս. Եսայան, Մ. Պոգրեբովա): Ինչո՞ւ մն է խնդիրը:

Հայաստանի տարածքում ուրարտական թագավորության վարչական, տնտեսական և մշակութային խոշոր կենտրոնների (Կարմիր բլուր, Արին բերդ, Արգիշտիլսինիլի) պնդումներով վեր հանված հնագիտական համալիրներ (խնցեղեն, մետաղյա սպասք, ճարտարապետական կառույցներ և այլն) ժամանակին արժենվորվեցին «ուրարտական մշակույթ» հասկացության սահմաններում։ Դրա հետ մեկտեղ, նորահայտ նյութերի կուտակմանը զուգընթաց, ակնհայտ էր դառնում, որ այս հասկացության սահմաններից դուրս են մնացնել տարածաշրջանում պնդված և Ք.ա. VIII-VI դդ. սահմաններում թվագրվող այն համալիրների նյութերը, որոնք միանշանակ տարբերվում էին ուրարտական կենտրոններից հայտնաբերված նմուշներից։

Այս հակասությունը հաղթահարենու նպատակով Վ. Մարտիրոսյանի կողմից առաջին անգամ շրջանառության մեջ դրվեցին «տնդական մշակույթ», տնդաբնիկների՝ «նրկարի լայն տարածման փուլի մշակույթ» հասկացությունները։ Այս մոտենացումը կարծես թե ընդունելի մի լուծում էր և արտացոլում էր ուրարտական եքսպանսիայի ընթացքում տարածա-

շրջանում ձևավորված իրավիճակը: Սակայն վերջին երեք տասնամյակների ընթացքում ի հայտ եկան մեծ թվով նոր համալիրներ, որոնք, ըստ էության, «ուրարտական» և «տեղական» մշակույթների փոխներթափանցման (խաչասերման) արդյունք են, և հնարավոր չէ դրանք միանշանակ վերագրել այս երկու մշակույթներից որևէ մեկին:

Այս հանգամանքը հատկապես ցցուն երևում է խնցենդեն արտադրանքի նմուշների վերլուծության ժամանակ: Ընդ որում, ուրարտական կենտրոնների խնցենդենի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ «ուրարտական խնցենդեն» Զ.ա. IX/VIII դդ. սահմանից մինչև VII դ. վերջնը գործնականում տեխնոլոգիայի և ձևաբանության մեջ որևէ լուրջ փոփոխություն չի ապրում: Մրան հակառակ՝ տարածաշրջանի մինչուրարտական հուշարձաններից կամ շերտերից հայտնաբերված խնցենդենը նշված ժամանակահատվածում զգալի փոփոխություններ է արձանագրում:

Հարկ է նշել նաև, որ, եթե Զ.ա. VIII դ. առաջին կեսից, այսինքն՝ Ռուսա II-ի գահակալման շրջանից, տեսանելի են «ուրարտական» և «տեղական» մշակութային երևույթների մեկուսացված կամ սոսկ համատեղությամբ ի հայտ եկող դրսևորումներ (այսինքն՝ շերտերում կամ դամբարաններում ավանդական ուրարտական և ավանդական տնդական մշակութային հատկանիշների օրինակները հանդիպում են համատեղ), ապա ավելի ուշ թվագրություն ենթադրող համալիրներում (Կարմիր բլուր և համաժամանակյա հուշարձաններ) հանդիպում են ինչպես ուրարտական և տեղական մշակութային տարրերի նմուշներ, այնպես էլ այս երկու ավանդույթների խաչասերման հետևանքով ձևավորված նոր տիպի օրինակներ:

Ինչպես արդեն նշվեց, ներկայիս Հայաստանի մեծագույն մասը համապատասխանում է ուրարտական աղբյուրների Լքիոնի և Ուղուրի-Լքիոնի երկրներին, որոնք ուրարտական նվաճումից հետո՝ Զ.ա. VIII դ. սկզբին, դարձան ուրարտական պետության կարևոր մասներից մեկը: Այս իմաստով ուրարտական էքսպանսիայի համատեքստում Հայաստանի ներկարադարյան հուշարձանները հնարավոր է պայմանականորեն բա-

ժանճլ նրկու խմբի՝ 1. հուշարձաններ, որոնք ավերվել են ուրարտական արշավանքների ժամանակ և լքվել, հետևապես ներկայացված են միայն նախառարարտական նյութենքով, 2. հուշարձաններ, որոնք ավերվել և վերականգնվել են ուրարտական թագավորների կողմից ու ներկայացված են ինչպես նախա-, այնպես էլ բուն ուրարտական շերտենքով:

Վերն ասվածից ելնելով՝ հայ հնագետները ուրարտական պետության գոյության ժամանակաշրջանի հայաստանում տարբերակում են հիմնականում երեք մշակութային իրավիճակներ.

1. «լճաշեն-մեծամորյան» (մասամբ անվանված նաև «էթիոնյան»)՝ տարածքի բնիկ մշակույթը,

2. «քիայնական» (կամ «վանտոսայյան»)՝ հարավից (Վանից) ներմուծված մշակույթը,

3. երկուսի խաչանքման հետևանքով ք.ա. VIII դ. առաջին կենսից առաջացած տեղական «ուրարտական» մշակույթը: Ընդ որում, այստեղ պետք չէ մոռանալ նաև կիմերա-սկյութական մշակութային տարրերի առկայության հանգամանքը:

Հայ և օտարերկրյա հնագիտական տերմինաբանության տարբերությունը նրանում է, որ արտասահմանցի հնագետները մինչ օրս (որոշ բացառությամբ) սահման չեն տեսնում վերոհիշյալ տեղական, ներմուծված և խաչանքման մշակութային իրավիճակների միջև: «Ուրարտական» ասվածը նրանց համար մեկ ամբողջություն է: Սակայն նոր հնագիտական աշխատանքները Արևմտյան հայաստանում ցույց են տալիս, որ լեռնաշխարհի այդ հատվածներում ևս հիմնականում տիրել է նմանատիպ իրավիճակ, ինչ ներկայիս հայաստանի հանրապետության տարածքում: Հնտագա ուրարտագիտական ուսումնասիրությունները անպայմանորեն կհանգնեն ուրարտագիտական դպրոցների միջև առկա տերմինաբանական անհարթությունների վերացմանը: Այս իմաստով հատկապես կարևորվում է հայ և օտարերկրյա մասնագետների հնագիտական համագործակցությունը, որոնց թվում հատկապես հիշատակելի են վերջին ժամանակների հայ-իտալական արշավախմբի աշխատանքները Սևանի ավազանում (Ս. Հմայակյան) և հայ-ավստրիական արշավախմբի աշխատանքները Կոտայքի մարզում (Ք. Ավետիսյան):

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ուրարտական ճարտարապետության ուսումնասիրումն ընդհանուր առմամբ ընթացել է ուրարտական մշակույթի հնտագոտմանը զուգահեռ: Սակայն, որպես առանձին գիտաճյուղ, այն ձևավորվել է միայն XX դ. նրկորորդ կեսից:

Ուրարտական ճարտարապետության ամենավաղ նկարագրությունը պատկանում է Մ. Խորենացուն, որը Շամիրամին է վերագրում Վանի ամուր պարիսպները՝ պղնձակերտ դրոներով, ընդարձակ փողոցներով, ամբարտակներով, ջրանցքներով, բաղնիքներով, նրկիարկ ու նորահարկ ապարանքներով և ժայռափոր շինություններով: Խորենացու ճշգրիտ նկարագրությունները հիմք հանդիսացան նվրոպական արևելագետների (Ժ. Սեն-Մարտեն, Ֆ. Շուլց) համար՝ XIX դ. սկզբին սկսնելու ուրարտական մշակույթի հնտագոտությունը: Ակզրնական շրջանում մասնագետները բավարարվում էին հավաքնելով և մասամբ վերծանելով ուրարտական արձանագրությունները: Եվ միայն XIX դ. վերջներից սկսնեցին նաև հնագիտական աշխատանքները, ու մասամբ ուշադրություն դարձվեց ճարտարապետությանը:

1879 թ. Վանի արևելյան ծայրամասում գտնվող Թոփրաք քալե ամրոցում սկսվեցին հնագիտական առաջին կանոնավոր պեղումները, որոնք ընդհատումներով շարունակվեցին մինչ 1938 թ. (Ա. Քենյթըն, Ա. Ռենոլդս, Հ. Ռասամ, Կ. Լեհման-Հաուպտ, Վ. Բելը, Ն. Մառ, Հ. Օրբելի, Ս. Լեիք): Այս փոքրածավալ հնտագոտությունները, սակայն, իրենց առջև չեին դնում ուրարտական քաղաքաշինության ուսումնասիրման խնդիրներ, այլ բավարարվում էին առանձին կառուցվածքների բացահայտմամբ և արձանագրական նյութի հավաքմամբ ու վերծանմամբ:

Ուրարտական առաջին հուշարձանը, որ պեղվեց և ճարտարապետական տեսանկյունից հանգամանորմն ուսումնասիրվեց, Թոյշենբախնին էր (Կարմիր բլուր), որի նախնական հնտագոտությունը սկսվեց 1939 թ., իսկ կանոնավոր պեղումներ՝ 1939-1967 թթ., Բ. Պիտորովսկու ղմկավարությամբ: Այս պեղումները հնարավորություն տվեցին պարզելու ուրար-

տական քաղաքաշինության սկզբունքները՝ միջնաբնրդի և քաղաքի բնակելի թաղամասների փոխադարձ դիրքորոշումը, փողոցների և տների հատակագծային ցանցը, սոցիալ-տնտեսական շերտավորման խնդիրները ևն: Այս հարցերին են նվիրված Կ. Հովհաննիսյանի և Վ. Մարտիրոսյանի աշխատությունները:

Ուրարտական միջնաբնրդի ներքին տարածության կազմակերպման, պալատական և պաշտամունքային համալիրների ընդհանուր հատակագծման ուսումնասիրման համար արժնքավոր նյութենք տվնացին Էրեբունիի պնդումները, որ կատարվեցին 1950-1969 թթ., Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ:

Հիշարժան են Արգիշտիխինիլիի պնդումները: Այս հուշարձանի նախնական ուսումնասիրությունը սկսվել է քառուս XIX դ. առաջին կեսին, սակայն կանոնավոր հետազոտությունների հիմքը դրվեց միայն 1962 թ.՝ Վ. Մարտիրոսյանի, Բ. Առաքելյանի և Գ. Տիրացյանի ղեկավարությամբ: Արգիշտիրխինիլիի պնդումները խիստ հարստացրին ուրարտական ճարտարապետության մասին մեր ունեցած պատկերացումները, որոնք ամփոփված են հատկապես Կ. Ղաֆադարյանի աշխատություններում:

Միջնաբնրդով և քաղաքային պարսպով ամրացված ուրարտական բնակավայրի յուրօրինակ նմուշ է Արագած ամրոցը, որի պնդումները կատարվեցին 1954-1955 և 1980-ական թթ. (Կ. Հովհաննիսյան, Վ. Ավետիսյան) և նոր նյութենք տվնացին ուրարտական քաղաքաշինության վերաբերյալ:

Վերջին՝ հետխորհրդային տարիներին ևս շարունակում է ուսումնասիրվել ուրարտական ճարտարապետությունը: Այս առումով հատկապես կարևորվում են հայ-իտալական արշավախմբի աշխատանքները Սևանի ավագանում՝ սկսած 1994 թ. (Ս. Հմայակյան, Ռ. Բիշինե), որի ընթացքում ուսումնասիրվել են բազմաթիվ, այդ թվում՝ ուրարտական ամրոցներ: Բացառիկ նյութենք են ձեռք բերվել Օշականի Դիդի կոնդ բլրի վրա գտնվող, Ք.ա. VII դ. թվագրվող դյուակ-ամրոցի պնդումների ժամանակ (Ա. Քալանթարյան): 1998 թ. սկսած՝ շարունակվում են Էրեբունիի պնդումները (Ֆ. Տեր-Մարտիրոսով, Ա. Փիլիպոսյան): 1980-ական թթ.

ուսումնասիրվել են ուրարտական նրկու հուշարձաններ՝ Նովրին (Ս. Հմայակյան) և Արամուսը (Վ. Ավետիսյան): Այանիսի տիպի հուշարձանների հայտնաբերումը և ուսումնասիրումը (Ա. Զիլինզիրօղլու) Արևմտյան Հայաստանում լրացնում են մեր պատկերացումները ուրարտական պետության կենտրոնական և արևմտյան շրջանների ճարտարապետության մասին:

Ուրարտական ճարտարապետությունն ուսումնասիրելիս խոսքը հիմնականում քաղաքաշինության ընդհանուր սկզբունքների, ամրաշինության, բնակարանաշինության, մոնումենտալ կառույցների մասին է: Ուսումնասիրման համար հատկապես հարուստ նյութ են տալիս ուրարտական քաղմարթիկ ամրաշինական կառույցները: Ուրարտական միշտ ամրոցների նկարագրություններ ունի դեռևս Կ. Լեհման-Հառուպտը, որը կատարել է այս հուշարձանների դասակարգման առաջին փորձը՝ հիմք ընդունելով պարիսավների շարվածքների միջև ներած տարբերությունները: Հնագետ Ա. Իվանովսկին, որը 1893 թ. գիտարշավի ժամանակ ուղեկցել է նշանափոր ասուրագետ Մ. Նիկոլյակուն, ուսումնասիրել է միշտ ամրոցներ, պեղումներ կատարել Թաշքուրունում (Մենուախինիլ): Ուրարտական ամրոցներին (մասնավորապես Արագածին) անդրադարձել է Թ. Թորամանյանը՝ Հայաստանի տարածքի կիկլոպյան ամրոցներն ուսումնասիրելիս: Ուրարտական ամրոց-միջնաբերդների համընդիանուր համեմատական ուսումնասիրություն և դասակարգում է կատարել Կ. Հովհաննիայանը, որն ընդհանուր աղերսներ է նկատել ուրարտական և Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեղարյան ամրոց-բնակատեղիների միջև: Վերջին շրջանում աճել է հետաքրքրությունը Արևմտյան Հայաստանի և Պարսկահայրի ուրարտական ամրաշինական կառույցների հանդեպ, որոնց մեծ մասը նախնական հնտագութություններ են և տնդագրական քարտեզներ (Չ. Բյոնի, Վ. Քրոլ):

Բնակելի տներ պեղվել են դեռևս Կ. Լեհման-Հառուպտի կողմից Թոփիրաք քալեում, սակայն ուրարտական բնակարանային ճարտարապետության հիմնական ուսումնասիրությունը սկսվել է Թոնշեքահինի պե-

դրւմներով, որտեղ առաջին անգամ ի հայտ եկան բնակելի տների միշտ շարք ամբողջական հատակագծեր: Զնո՞նակի թնդնում, որտեղ պնդումներ են կատարել Չ. Բըրնին և Ռ. Լոուսոնը, հայտնաբնրվել է կանոնավոր, հավասարաչափ և փոխուղղահայաց հատակագծային ցանցով տեղադրված տիպարային բնակելի տների զանգվածային կառուցապատում:

Ուրարտական տաճարային ճարտարապետության ուսումնասիրումը կավել է դեռևս Թոփրաք քալեի տաճարի հայտնաբնրմամբ XIX դ. վնրջին: Սակայն ուրարտական տաճարաշինության վնրաբնրյալ հիմնական տվյալները ի հայտ եկան XX դ. նրկրորդ կեսից, նրբ պնդվեցին այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Ազնավոր թնդեն, Ալթըն թնդեն, Քայալը դերեն, Զավուշ թնդեն, Էրեբունին: Առավել լավ է ուսումնասիրված պալատական ճարտարապետությունը, հիմնականում Էրեբունիի, Թեյշեբահնիի, Ալթըն թնդենի, Քայալը դերենի, Աղիշենվազի կանոնավոր պեղումների հետևանքով (Թ. Օզյուչ, Չ. Բըրնի, Ս. Լոյդ):

Ինչ վնրաբնրում է ուրարտական դամբանային ճարտարապետության ուսումնասիրմանը, ապա, նթե մի կողմ թողնենք վիմափոր կառուցները, որոնք ուսումնասիրողների ուշադրությունը գրավել էին՝ ակած XIX դ., ապա բուն դամբարաններն ու թաղման ծեսը հետազոտվել են միայն XX դ. նրկրորդ կեսից սկսած (Չ. Բըրնի, Բ. Օզյուն, Ս. Հմայակյան, Ա. Փիլիպոսյան, Ի. Կարապետյան, Գ. Թումանյան):


Գրականություն (Պակամովթյուն եւ մշակույթ. ընդհանուր աշխատանքներ): Խաչատրյան 1933; Ղափանցյան 1940; Թորոմանյան 1942; Մարտիրոսյան 1971; Ադոնց 1972; Խաչատրյան 1998; Կարագեզնան 1998; Գրեկյան 2002; Пиотровский 1939; Пиотровский 1944; Пиотровский 1949; Пиотровский 1959; Меликишвили 1954; Пиотровский 1962; Мартirosyan 1964; Арутюняն 1964; Дъяконов 1968; Арутюняն 1970; Арутюняն 1985; Тирацյան 1988; Арутюնյան 2001; Lehmann-Haupt 1910-1931; Adontz 1946; Mashkur 1966; Van Loon 1966; Salvini 1967; Akurgal 1968; Azarpay 1968; Riemschneider 1966; Burney, Lang 1971; Kleiss, Hauptmann 1976; Lang 1978; Erzen 1979b; Frankel 1979; Barnett 1982; Vanden Berghe, De

Mayer 1983; Diakonoff 1984; Zimansky 1985; Haas 1986; Çilingiroğlu 1988; Merhaw 1991; Wartke 1993; Hmayakian 1995; Salvini 1995; Santrot 1996; Çilingiroğlu 1997; Zimansky 1998; Smith 2003; Seidl 2004

Գրականություն (Ուրարվու-Հայաստան խնդիրը): Խանզադյան 1979; Առաքելյան և ուր. 1988; Տիրազյան, Արեցյան 1990; Հմայակյան 1995; Մկրտչյան, Ավետիսյան 1995; Փիլիպոսյան, Մկրտչյան 2001; Ավետիսյան, Ավետիսյան 2006; Թումանյան 2008թ: Martirosyan 1954; Martirosyan 1961; Martirosyan 1964; Կոսնարեա 1977; Տիրազյան 1978; Եսայն, Погребова 1985; Zimansky 2001; Biscione et al. 2002; Tiratsyan 2003

Գրականություն (Ուրարվական ճարրարապետության ուսումնասիրման պարմությունը): Ղաֆադարյան 1984; Քալանթարյան, Մելքոնյան 2005; Пиотровский 1959; Forbes 1983

Լուսանկարներ: 1-6



1. Ուրարտական հիմնական հուշարձանների քարտեզ

1. Ալթըն թնփն;
2. Նորշուն թնփն;
3. Քայալը դերն;
4. Բաղնոց;
5. Ազնավոր թնփն;
6. Թեփ քալնսի;
7. Արծկն (Ադիշենվազ);
8. Ջնոնակի թնփն;
9. Օշական;
10. Մեծամոր;
11. Արգիշտիխինիլի;
12. Իգդիր;
13. Փոքրավան (Դովրի);
14. Աբովյան (Ելառ);
15. Թեյշենքախնի;
16. Երնքունի;
17. Ջրահովիտ;
18. Մենուախինիլի;
19. Խոր Վիրապ;
20. Մովինար;
21. Վերալսրամ;
22. Ռուսախինիլի (Բաստամ);
23. Տուշպա (Վան, Թոփրաք քալն);
24. Հայկաբերդ (Զավուշ թնփն);
25. Գիյիմլի;
26. Հաֆթավան թնփն;
27. Քալաթզաղ;
28. Հասանլու;
29. Մուջնախ (Մուսասիր);
30. Ազրաք թնփն;
31. Այանիս;
32. Պաթնոս;
33. Բալու


Ա. ԱՄՐՈՅ-ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Հայաստանի Հանրապետության, Իրանի (Պարսկահայք) և Թուրքիայի (Արևմտյան Հայաստան) տարածքում վերջին կես դարի ընթացքում ուսումնասիրվել են բազմաթիվ ուրարտական հուշարձաններ: Հայաստանում աշխատել են հիմնականում հայ և տու, Իրանում՝ իրանցի, գերմանացի և իտալացի, Արևմտյան Հայաստանում՝ թուրք և անգլիացի (ավելի քիչ՝ ամերիկացի) հնագետները: Ուսումնասիրություններն իրականացվել են պեղումների և վերգետնյա հնտախուզությունների ձևով: Հիմնական հուշարձանների պեղումները տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության և Արևմտյան Հայաստանի տարածքներում: Հյուսիսարևմտյան Իրանի տարածաշրջանը, որոշ քացառությամբ, ենթարկվել է հիմնականում վերգետնյա հնտախուզական և չափագրական ուսումնասիրությունների՝ գերմանացի և իտալացի հնագետների կողմից:

Ուրարտական պետության ողջ տարածքում պեղման են ենթարկվել հիմնականում ուրարտական կենտրոնների միջնաբնրդերը և ավելի քիչ՝ քաղաքային բնակատեղիները, որի հետևանքով մեզ ավելի ծանոթ է ուրարտական վերնախավային, քան զանգվածային մշակույթը: Ստորև ներկայացնում ենք ուրարտական ամենակարևոր մի քանի ամրոցների և բնակավայրերի նկարագրությունը:

ՏՈՒՇՊԱ (ՎԱՐ)

Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան կառուցվել է Վանա լճի արեալայան ափին՝ ժամանակակից Վան քաղաքի տարածքում: Այստեղ պահպանված բազմաթիվ սեպագիր արձանագրությունները և հուշարձանները նվիրապական գիտնականներին հայտնի դարձան 1822 թ., նրա Փարիզում լույս տեսավ Խորենացո «Պատմություն Հայոց»-ը, որտեղ Վան քաղաքը նկարագրվելիս հիշատակվում են Ասորեստանի թագուհի Ծամիրամի կողմից կառուցված շինություններն ու ձեռակերտ արձանագրությունները:



2. Տուշպա, ամրոցի պատը՝ ուրարտական շրջանի մնացուկներով

Այս տնդեմկությունները ճշտելու համար 1827 թ. Փարիզի ասխական ընկերությունը Վան է գործողում Երիտասարդ գիտնական Ֆ. Շուլցին, որը կարծ ժամանակում հայտնաբերում և պատճենահանում է անծանոթ լեզվով գրված մոտ 200 արձանագրություններ: Սակայն 1829 թ. Ֆ. Շուլցը սպանվում է քրդների կողմից: Նրա հավաքած նյութերը մնան ուշացումով հրապարակվում են Փարիզում 1840 թ.:

Ֆ. Շուլցի աշխատանքներից մինչև օրս բազմաթիվ գիտնականների կողմից ուսումնասիրություններ են կատարվել Վանում և շրջակայքում: Պեղված և կուտակված մեծ քանակությամբ նյութերը գրեթե ամփոփված չեն: Առաջին համեմատաբար ամբողջական աշխատությունը կատարվել է Բ. Պիոտրովսկու կողմից:

Միջնաբերդը կառուցվել է Վան քաղաքի ժայռությունում՝ բարձր ժայռի վրա: Այն ունի հսկա աշտարակներ և հզոր պարիսպներ, որոնք կա-

տուցվել են Ք.ա. IX դ.՝ Սարդուրի I-ի օրոք: Ամրոց կարելի է բարձրանալ թե՛ք արահետով: Նրա պարիսպները կառուցված են հսկայական քարն իմբերի կամ հարթեցված ժայռնի վրա բարձրացող հում աղյուսն շար-վածքով: Ներսում, զափոք, ոչինչ չի պահպանվել:

Ավելի մանրամասն ուսումնասիրություններ են կատարվել 1916 թ. Ռուսական հնագիտական ընկերության կողմից: Ամրոցի պատերը, որոնք պահպանվել են ստորին մասում, որոշ հատվածներում ունեցել են մինչև 20 մ բարձրություն: Հատկապես հնտաքրքիր են ժայռի հարա-վային մասում գտնվող ժայռափոր կացարանները, տարբեր չափերի խոր-շերը և սնապագիր արձանագրությունները: Վ. Օրբելին պեղել է արևմտյան խորշերից մեկը, ուր նա հայտնաբերել է Մքարեն հուշակոթող՝ 2,27 մ բարձ-րությամբ, որի վրա պահպանվել էր Սարդուրի II-ի տարեգրությունը: Վ. Օրբելին պեղել է նաև մի քանի համալիրներ, նրկու խորշեր՝ սնապագիր արձանագրություններով, ժայռնի վրա պահպանված հարթակներ: Տուշպան դժվարամատչնի էր թշնամու համար և պաշտպանված էր բնական ամրություններով, հսկայական պարիսպներով:

Վանից հյուսիս ձգվող Զրմ-զրմ դադ ժայռի լանջին պահպանվել է մի խորշ (բարձրությունը 5,18 մ), որին տեղացիներն անվանում են «Մհերի դուռ»: Սրա մասին կան քազմաթիվ առասպելներ: Այսպես, Ֆ. Շուլցի կողմից գրի առնված մի առասպելում պատմվում է, որ այդ դուռն ետևում կան անհաշիկ դահլիճներ, որում ապրում են դևեր: Մեկ այլ առասպելում նշվում է, որ «Մհերի դուռը» անվանում են նաև «Նրկադրեն դուռ» (բացվում է տարին մեկ անգամ՝ սուրբ Հովհաննեսի օրը): Իսկ Ա. Լե-յարդը, որը նույնպես տվել է «Մհերի դռան» նկարագրությունը, պատմում է մեկ այլ առասպել, ըստ որի՝ մի հռվիվ քննի է այդ դուռն մոտ և նրազում լսնի է դուռը բացնելու մոգական խոսքը: Արթնանալով բացնի է դուռը, վերցրել պարկով լի ուկին, բայց ներսում մոռացնի գավազանը: Նորից մտնելով ներս՝ այս անզամ նա մոռանում է մոգական խոսքները և չի կա-րողանում դուրս գալ: Բ. Պիոտրովսկին այս պատմությունը կապում է Սասնա ծռերի վերջին ներկայացուցիչ փոքր Մհերի առասպելի հետ:

Գրականություն: Mapp, Орбелի 1922; Пиогровский 1959; Heinz 1941; Öğün 1961; Korfmann 1977; Sevin 1980; Belli 1986; Tarhan 1993; Tarhan 1994; Sevin 1994b


Նկարներ: 2, հմմտ. նաև 51, 52, 53

Լուսանկարներ: 7-13


ԱՆՁԱՎ (ԱՆՁԱՖ)

Բացի քնական և ամրոցաշինական բարդ հանգույցային կառույցներից, Տուշպան ուներ նաև պաշտպանական ամրոցների մի ամբողջ համակարգ, որոնք օղակում էին քաղաքը «ծովափնյա» շրջաններից: Այդ պաշտպանական համալիրներն ուսումնասիրնեն Չ. Բըրնին և Օ. Բնլին: Դրանց թվին են պատկանում Ներքին և Վերին Անձավ ամրոցները:

Ներքին Անձավը գտնվում է Վան քաղաքից մոտ 17 կմ հյուսիս-արևելք և պաշտպանում է Տուշպայից դեպի հարավ-արևելք տանող ճանապարհը: Տնդադրված է ձվածև քարձունքի վրա և ունի ուղղանկյուն հատակագիծ: Ամրոցը հիմնադրվել է, հավանաբար, Իշպուխիի օրոք: Պարիսպներն ամրացված չեն որմնահնգերով կամ աշտարակներով: Միայն մուտքն է ամրացված 2 ոչ մեծ աշտարակներով: Այն զբաղեցնում է մոտ 0,5 հա տարածք և ծառայել է իբրև պահակակետ:



3. Ներքին Անձավ, ամրոցի հատակագիծը (ա), Զիվիստան, ամրոցի հատակագիծը (բ)



4. Վերին Անձավ, ամրոցի հատակագիծը

Վերին Անձավ ամրոցը գտնվում է Ներքին Անձավից հյուսիսարևմուտք և պաշտպանում է նույն ճանապարհը: Այս ամրոցը կառուցվել է ավելի ուշ՝ ըստ նրանույթին Մենուա արքայի օրոք: Բնրդի պարիսապները ամեն 10 մ վրա ամրացված են 2,5 մ երկարություն ունեցող որմնահեղերով: Ամրոցը կառուցված է բլրի վրա, որի ստորոտում նկատվում են պարսպապատքաղաքի հնտքեր:

Վանա լճի արևելյան ափին՝ Վան քաղաքից 5 կմ հյուսիս, գտնվում է փոքր ամրոցներից մեկը՝ Լեզքը, որը կառուցված է լճի երկայնքով և վերահսկում է հյուսիսից դեպի Վան տանող ճանապարհը: Այն ունի անափիկ դիրք, և միայն հարավարևմտյան մասում է հնարավոր մոտենալ ամրոցին: Վան քաղաքից 12 կմ հարավ գտնվում է Զիվիստանի ամրոցը, որը

տեղադրված է քարձունքի վրա՝ կրկննլով տեղանքի ձևը: Ունի ուղանկյուն հատակագիծ: Այս ամրոցը տարբերվում է մյուսներից նրանով, որ կառուցված է ոչ թե արհեստականորեն հարթեցված, այլ բնական քլրի վրա: Ամրոցի և միջնաբերդի հզոր պարիսպներից պահպանվել են միայն առանձին հենտրեր: Ամրոցի արևելյան մասում կա ժայռափոր ջրավազան: Բացի վնրը նշվածներից, Վան քաղաքի շրջակայրում տարբեր հնագործության վրա պահպանվել են Երիշատի, Անհավատի, Արծկեի, Հայկաբերդի, Դնլիշայի և այլ ամրոցներ:


Գրականություն: Եսայան 1995; Пиотровский 1959; Burney, Lawson 1960; Burney 1969; Burney, Lang 1971; Burney 1998; Belli 1992; Belli, Dinçol 1992; Belli 1999

Նկարներ: 3, 4

Լուսանկարներ: 5, 15-18

ՈՒՐԱՐՏՈՒԻ ԽԵԼԻ (Թ-ԱՓՐԱՔ ՔԱԼԵ)

Կառուցվել է Ուսուա I արքայի կողմից ժամանակակից վան քաղաքից հյուսիս-արևելք գտնվող Զըմ-զըմ դաղի բարձունքների վրա: Նոր քաղաքը ջրով մատակարելու նպատակով վանից արևելք կառուցվում է արհենատական լիճ, որից ջուր էր հոսում Ուսուայի քաղաքը: Կ. Լեհման-Հառապտի կարծիքով՝ Թոփրաք քալեի վրա գտնվող ամրոցը հանդիսանում է Ուրարտուի նոր մայրաքաղաքը, որը կառուցվել է Ուսուա I-ի կողմից Ք.ա. 735 թ.: Թիգլաթպալասարի ավերիչ արշավանքից հետո: Նրա կարծիքով՝ Ուսուան Խալդի տատեռ պատվին այստեղ կառուցվել է նոր տաճար:



5. Թոփրաք քալե, տաճարի հատակագիծը

Թոփրաք քալեի հնագիտական ուսումնասիրությունը սկսվել է 1879 թ., Մեծ Բրիտանիայի հյուպատոս Ա. Քենյթընի և ամերիկյան միսիոներ Ա. Ռենոլդսի կողմից: 1880 թ. նրանց է միանում հնագետ Վ. Ռասամը, որը մինչ այդ մասնակցել էր Նինվեի պեղումներին: Այստեղ նա հայտնաբերել էր Ասորեստանի արքա Սալմանասար III-ի պալատի դարպասները պատող հայտնի բրոնզն թիթեղները, ուր պատկերված էին նաև

արքայի արշավանքները դեպի Ռուսաստան:

Արշավախմբի պեղումների շնորհիվ Թոփրաք քալեում քացվնցին պարիսպների հատվածը և տաճարի մի մասը: Սակայն հնագիտական նյութերը սակավաթիվ էին. գտնվնցին միայն մի քանի քրոնզն և փղոսկրն արձաններ ու խնձեղներ: Ծուտով տնդարձիկների և գանձեր որոնողների կողմից սկսվեց հնավայրերի ավերումը: Գտնված իրենքը վաճառվնցին արտասահմանյան կյուպատուններին և դեսպանատների աշխատակիցներին: Այս փլատակներում հայտնաբերվել էին հսկայական թվով հոյակապ գտածոներ, այդ թվում՝ ոսկուց մեծ զահավորակ, որը կոտրվել և մաս-մաս վաճառվել էր, արձաններ, մետաղն իրեն:


Առաջին լուրջ արշավախումբը կազմակերպվեց 1898 թ., Կ. Լեհման-Հառուպտի և Վ. Բնիլի ղեկավարությամբ: Այս լայնածավալ աշխատանքների ժամանակ պեղվնցին բլրի տարբեր հատվածները՝ տաճարի տարածքը, ամրոցի առանձին մասերը, բնակավայրերը՝ մի շարք կացարաններով, ստորգետնյա սննյակների մնացորդները, պահենատային շինություններ և այլն: Ծառ հենտաքրքիր արդյունքներ տվեցին բնակավայրի պեղումները: Նրա կենտրոնում քացվեց մի կացարան, որում կար 500-600 լ տարողությամբ 25 կարաս: Վերջիններիս վրա կային դրանց տարողության մասին վկայող հինրոգլիֆ նշաններ: Կարասներից նրկուսի մեջ գտնվնցին գենքներ, ոսկյա և արծաթյա իրեն: Հատկապն հենտաքրքիր էր ոսկյա կալիկը, որի վրա պատկերված էին զահին նստած աստվածութիւն և նրա առջև կանգնած մի քուրմ:

Կացարանների ավերակները կրում էին իրենի հենտքեր: Գտնվնցին մեծ թվով ածխացած փայտի կտորներ, մի քանի կիսահալ մետաղյա իրեն, ինչը վկայում է, որ բնակավայրը կործանվել է հանկարծակի հարձակումից: Թոփրաք քալեից գտնվել են արժեքավոր իրեն՝ մետաքսի կտոր, լաջվարդի (լազուրիտի) բնկորներ, բազմաթիվ ուլունքներ, որոնք պատրաստված էին կիսաթանկարժեն տարբեր քարերից: Թոփրաք քալեի պեղումները տվեցին հսկայական թվով նրկարեն և քրոնզներ կացիններ, մուրճներ, նռաժանիններ, դանակներ, դաշուլներ, ծիասանձներ, դռան քրոնզներ փականներ, խոշոր զամենը և այլն: Գտնվել են նաև կարասներ,

որոնց մի մասի շուրջները զարդարված էին կենդանիների քանդակներով, կարմիր անգորապատ անոթներ, զավաթներ, թասներ, սափորներ:

Բնակավայրի հյուսիսարևելյան լանջում պեղվեց մի հարթակ: Այստեղ բացվեցին իրար վրա լցված մարդկանց կմախքներ, կենդանիների ոսկորներ և կոտրված անոթների բեկորներ: Հատկանշական է այն հանգամանքը, որ չի գտնվել մարդու ոչ մի գանգոսկը: Ելնելով այս հանգամանքից՝ Կ. Լեհման-Հառուպոր ենթադրում է, որ այստեղ կառուցվել է զոհաբերման հարթակ, ինչի մասին հիշատակվում է գտնված սնապագիր արձանագրությունում: Նրա կարծիքով՝ մարդկանց գլուխները թաղվում էին հատուկ վայրերում: Այս համատեքստում կարելի է տեսնել կիմերա-սկզբանական մշակութային աշխարհին բնորոշ տարրներ (Գ. Թումանյան):


Ավելի մանրակրկիտ ուսումնասիրվել են տաճարը և նրան հարող տարածքը: Տաճարն ունեցել է քառակուսի հատակագիծ ($13,8 \times 13,8$ մ)՝ չորս անկյունային որմնահենցերով: Տաճարի հիմնապատերը կառուցված են շախմատաձև դասավորված սև և սպիտակ սրբատաշ քարների չորս մնացորդ հաստությամբ շարվածքով, որի վրա էին բարձրանում աղյուսաշար պատերը: Սրբարանի դահլիճի (ցնլայի) կենտրոնում պահպանվել է ուղղանկյուն պատվանդան՝ նախատեսված արձանի տեղադրման համար: Տաճարի հատակը պատված էր խճանկարով: Հատակին բացվել են $0,2 \times 0,2$ մ նրկարությամբ և $0,3$ ու $0,4$ մ խորությամբ քառակուսի փոսեր: Վերջիններս ծածկված էին փայտն տախտակներով: Դրանցից նրկուսի մեջ նոր են բրոնզե թիթեներներ՝ ագուցված շեղանկյուն և ուղղանկյուն ոսկե դրվագագարդներով: Տաճարի մուտքի դիմաց գտնվել է մարմարյա զոհասեղան: Տաճարի բակը՝ 20×20 մ մակենթասով, խճապատված էր սև, սպիտակ, կլոր ու շեղանկյուն քարներով: Տաճարական համալիրը տարածվում էր բակում և բլրի լանջերին, որտեղ կառուցվել են մի շաբթ շինություններ: Տաճարից ոչ հեռու՝ բլրի հարավարևմտյան լանջին, մայր ապառաժում փորված 56 աստիճանները տանում են դեպի ժայռափոր սրահը: Այս սրահի նշանակությունը հայտնի չէ: Այստեղ ապառաժի մեջ պեղվել է փորվածք, որը կարող էր ծառայել որպես լողարան կամ դամբարան:



6. Թոփրաք քալի, տաճարի վերակազմությունը՝ ըստ Է. Աղուրգալի

Կ. Լեհման-Հառապտի և Վ. Բենքի պնդումները Թոփրաք քալեում մեծ նշանակություն ունեցան ուրարտական մշակույթն ու պատմությունն ուսումնասիրելու համար: Դրանք առաջին լայնածավալ պնդումներն են Ուրարտուի նոր մայրաքաղաքում և հնարավորություն տվյալներու քաղաքի կարևոր նշանակությունը: Այս ամրոցը, ինչպես վերը

նշվեց, կառուցվել է Ռուսա I-ի կողմից: Վերջինս այստեղ կառուցեց նաև տաճար: Ինչպես ցույց են տալիս կառույցի մնացորդները, տաճարը վերակառուցվել է Ռուսա III-ի կողմից: Դրա մասին վկայում են գտնված բրոնզե վահանները, որոնց վրա պահպանվել են սնապագիր արձանագրություններ: Կ. Լեհման-Հառլափի կարծիքով՝ ամրոցը կործանվել է հանկարծակի՝ ք.ա. 585թ. մարական ննրխուժման ժամանակ:



7. Թոփրաք քաղաք, շինության բրոնզե մողել, Քրիտանական թանգարան

Թոփրաք քաղաքում որոշակի աշխատանքներ են կատարել Հ. Օրբելին և Ն. Մատթ: Այսպես, Հ. Օրբելին 1911-1912 թթ. ձմռանը պեղումներ կատարեց Թոփրաք քաղաքի արևնյան լանջին, որտեղ գտնվեցին ցենքի ու ծառերի պատկերներով մարմարն սափորի բնկորներ և այլ իրեն: Բացի պեղումներից, Հ. Օրբելին տեղացի բնակիչներից մեծ թվով գտածոներ հավաքեց: 1916 թ., երբ Ռուսական հնագիտական ընկերության արշավախումբը նորից Վանում էր, Ն. Մատթ շարունակեց աշխատել Թոփրաք քաղաքում, իսկ Հ. Օրբելին՝ Վանում: Նրանց կողմից պեղված նյութերը պահպանվել են Երմիտաժում:

Գրականություն: Mapp, Орбели 1922; Пиотровский 1959; Lehmann-Haupt 1907; Lehmann-Haupt 1910-1931; Barnett 1950; Barnett 1954; Ögün 1961; Erzen 1962; Barnett 1972; Erzen 1976-1977; Erzen 1978b; Erzen 1979; Wartke 1990; Seidl 2000; Sevin 2006


Նկարներ: 5, 6, 7

ՍԱՐԴԱՐԻ ԽԵՆՔՆԵՐԻ (ՀԱՅԿԱԲԵՐԴ, ՉԱՎՈՒՇ ՋԵՓԵ)

Այս ամրոցը գտնվում է Վան քաղաքից 50 կմ դեպի հարավ-արևելք: Հուշարձանից ոչ հեռու պահպանվել է նախկին հայկական Աստվածաշնչն գյուղը (Չափուշ թենի): Ամրոցը կառուցված է ուրգազարթանի Բոլղար լեռնաշղթայի վրա, որը ծգվում է 7-8 կմ երկայնքով: Այն հարավարևմտյան կողմում աստիճանաբար իջնում է դեպի Վանա լիճը թափվող Խոշաք գետի հովիտը:

Հայկաբնրդի ամրոցն արդեն XIX դ. վնրջին գրավել էր գիտնական-ների ուշադրությունը: Դնօսս 1884 թ. Ս. Դագանցը Վիեննա է բնրում բնր-դից գտնված մի սնպազիր արձանագրություն, որը հրատարակում է Դ. Մյուլերը: Այստեղ խոսվում է Սարդուրի II-ի կողմից 15300 կապի տա-րողությամբ շտեմարանի կառուցման մասին: Հայկաբնրդի առաջին ուսումնասիրողը նդել է Կ. Լեհման-Հառիպողը, որն այնտեղ հնտախուզական պնդումներ է կատարել և գծագրել ամրոցի սինմատիկ հատակա-գիծը: 1916 թ. Հայկաբնրդ է այցելել Շ. Օքբելին և հավաքել վերգննյա նյութեր: 1956 թ. ամրոցը նորից հնտազոտում է Զ. Բըրնին, որը հրատարա-կել է համառոտ նկարագրություն հուշարձանի մասին: Ակսած 1961 թ.՝ այստեղ անընդմեջ պնդումներ է կատարել թուրք հնագետ Ա. Էրզենը՝ հրատարակելով պնդումների արդյունքներին նվիրված նորկու հատող:

Հայկաբնրդը տնդադրված է Բոլդաղ լեռնաշղթայի 2-րդ և 3-րդ ժայռագագաթների վրա և հիվանդ մակնրեսից 90-110 մ բարձր է: Բլուրների միջև ծագում է մի փոքրիկ գոզավորություն: Հուշարձանը կազմված է ընդհանուր պարիսպներով պաշտպանված վերին և ստորին բնրդներից: Վե-



Ցայկարմոն, ամրոցի ուղարձային հատվածի հատակագիծը

թին բնրդր հատակագծում ուղղանկյուն է, գրավում է 0,5 հա տարածություն: Այն գտնվում է ստորինից արևելք և վերջինից քարձը է 30 մ: Պարիսպները յուրաքանչյուր կողմից ամրացված են հզոր որմնահեղերով: Արևելյան և մասամբ արևմտյան կողմից պահպանվել է երկրորդ շարքը:

Վերին բնրդր կատարված պնդումների ժամանակ հայտնաբերվել է քարեն պատով շրջապատված, $4,5 \times 4,5$ մ չափերով քառակուսի հարթակ: Հետազոտողների կարծիքով՝ այն հանդիսացնել է սրբատեղի-տաճար: Հայկաբերդի հիմնական պնդումները կատարվել են ստորին բնրդրում: Վերջինս ծգվում է արևելք-արևմուտք ուղղությամբ, ունի նեղ, երկարավուն հարթակ՝ ամրացված հզոր որմնահեղերով: Այն պաշտպանված էր պարսպապատերով, որոնք ամրացված էին հարթեցրած ժայռաբեկորներով և նրանց վրա կառուցած հենապատերով:

Ամրոցի հատակագծում կրկնվում է տնդանքի կառուցվածքը: Հարավային կողմից այն ունի երկու աստիճանաձև նլուստ և փոքր-ինչ դեպի դուրս ծգվող պարիսպ: Հյուսիսային պարիսպը աննշան կորագիծ է: Բոլոր պարիսպները ամրացված են, բայց աշտարակների մնացորդներ չեն հայտնաբերվել:

Ստորին բնրդի արևելյան հատվածում կառուցվել են հայկաբերդի պալատական համալիրները, որոնք բաղկացած են քառակուսի կենտրոնական դահլիճից (31×31 մ մակերեսով), երկու կողմից հարակից պահենտային շինություններից և բաց բակից, ուր տնդադրված են սրբարանները: Չստ. Ա. Էրգենի՝ այս պալատական համալիրները նույն են երեք հարկանի: Բազմահարկության մասին են վկայում պնդումների ժամանակ հատակի վրա նկատված երենք՝ մենքը մյուսի վրա փլուզված տանիքների հետքները:

Ուրարտական կիրառական արվեստում կան բազմահարկ շենքների պատկերներ, որոնց թվում հատկապես հիշարժան է Վանից գտնված թիթենող՝ նռահարկ շենքների պատկերներով:

Պալատական շենքներից դեպի արևելք պնդվել է ջրագիծ՝ քարեն տաշտով: Զուրը փոքր առվակով դուրս էր բնրդրում ամրոցից: Ստորին ամրոցի կենտրոնական հատվածում պնդվել է տաճար: Այն ունեցել է քառակու-

սի հատակագիծ (դրսից 10×10 մ, ներսից $4,5 \times 4,5$ մ): Ցնլայի ճակատը կառուցված էր հարթ մշակված բազալտն խոշոր քարերով: Տաճարի ներսի պատերը ներկված են կապույտ գույնով: Մուտքի ծախ անկյունում պահպանվել է սննդագիր արձանագրություն: Նրանում նշվում է, որ ամբողջկառուցնել է Սարդուրի II-ը և անվանել Սարդուրիինիլ: Արքան կառուցնել է նաև Իրմուշինի աստվածությանը նվիրված տաճար: Գ. Ղափանցյանի կարծիքով՝ Իրմուշինի նշանակում է «հիվանդություն», հետևաբար Իրմուշինին հանդիսացնել է բժիշկներին հովանափորող աստվածություն:

Այս տաճարի հյուսիսարևելյան պատից ոչ հնորու հայտնաբերվել է մանր քարերով պատված, $21,5 \times 21,5$ մ չափերով մի հարթակ: Արևելյան մասում գտնվել են ապիտակ գույնով ներկված աղյուսի հենոքներ, մի քանի զոհասնդաններ, իսկ հյուսիսում՝ քարե սեղան: Տաճարի հարավային հատվածում հայտնաբերվել է 24×20 մ չափերով դահլիճ, որի տանիքը հենակում էր հզոր մույթերի վրա: Դահլիճի չորս պատերը պահպանվել են ոչ ամբողջովին: Դրանք զարդարված են նղել որմնանկարներով: Տաճարին կից կառուցվել են ամրոցի պահենատային շինությունները: Սննյակներից մեկում հայտնաբերվել են 200 խոշոր կարասներ, որոնք կիսով չափ թաղված են նղել հողի մեջ:

Ամրոցի ստորին բներդից քիչ հնորու՝ $27,5 \times 17,5$ մ չափերով բլրակի վրա, պենզել է յուրօրինակ մի միջնաբերդ: Հնտաքրքիր շինությունների թվին է պատկանում նզրային ամրոցը: Այն շրջապատված է ինքնուրույն պարիսպներով՝ ստորին բներդի ներսում կազմելով առանձին շենք: Այստեղ գտնվեցին Սարդուրի II-ի սննդագիր արձանագրությունները: Դրանք վկայում են կառուցված պարիսպների մասին: Շինության հարավային մասում քացված ներկու սննյակներում հայտնաբերվեցին հարուստ հնագիտական նյութեր՝ բրոնզե սաղավարտներ, զենքներ, կապարներ: Դրանց վրա կային նվիրատվական արձանագրություններ:

Հայտնաբերվել են նաև 2-րդ հարկից թափված որմնանկարների հենոքներ: Երկրորդ հարկի առկայության մասին հաստատում են պատերին կից տնղաղոված խոշոր մույթերը, ինչպես նաև քացված աստիճան-

ննրի մնացորդները:

Հայկաբնրդի վնրին և ստորին ամրոցները իրարից անջատվում են պարիսպներով: Երկու ամրոցների միջև ընկած տարածքն ունի 12 մ լայնություն և 110 մ երկարություն: Ա. Էրգենը պնդել է մի հատված, որտեղ, ըստ նրա, հաստատագրվել է երեք մշակութային շնրտ: Դրանցից I-ը թվագրվում է Զ.ա VII դ. առաջին կենով, II-ը՝ Զ.ա. VII դ. երկրորդ կեն- VI դ. առաջին կենով, իսկ վերջին՝ երրորդ շնրտը կազմված է եղել հայկական միջնադարյան դամբարանադաշտից:

Զ.ա. VII դ. շնրտերում բացվել են արտաքին պարիսպներին կից բազմաթիվ կացարաններ, որոնք ունեցել են 3-4 մ լայնություն և 6-9 մ երկարություն: Դրանց հարթ տանիքները ծածկված են եղել գերաններով և եղնգնով: Պնդվել է նաև մի ավելի մեծ կացարան՝ 9,4 մ լայնությամբ և 17,9 մ երկարությամբ: Սրա պատերը, ինչպես մյուսներինը, շարված են քարեն հիմքի վրա, իում աղյուսով: Մենյակի կենտրոնում հայտնաբերվել է խոշոր մույթ: Բոլոր կացարանների պատերը ուժնեղ հրդեհից դարձել են վառկարմիր:

Դեպի արևելյան ընկած 1-ին, 2-րդ և 3-րդ հարթակների վրա պնդվել է ութ սենյակ և մեկ խոշոր դահլիճ: Մենյակները հատակագծում ուղանկյուն են կամ քառակուսի, ունեն հարթ տանիք, իսկ դահլիճն ունեցել է մեկը մյուսից 2,5 մ հեռավորության վրա գտնվող հինգ սյուն, որոնցից պահպանվել են 35 սմ տրամագծով սյունախարիսխները:

Նեղինակի կողմից հրատարակված նյութենքը բաղկացած են մի քանի խնցանոթներից, բրոնզե թասից, ննտալաքներից, ոսկով ձիասանձներից և երկու կնիքներից: Երկաթեն ննտալաքները, որոնք հայտնաբերված են յոթ օրինակով, բաժանվում են երկու տիպի՝ տերեվաձև՝ պոչուկի վերին հատվածում փոքրիկ խնձորակներով, և երկար՝ կլորավոր պոչուկներով: Բացի երկաթեն օրինակներից, գտնվել են մի քանի բրոնզե ննտալաքներ, որոնք տերեւաձև են և ստորին մասում ունեն կարճ ճանկեր: Ննտալաքներից մեկի վրա պահպանվել է երկտող կարճ սենագիր («Խալդի աստծուն (տիրակալին) նվիրեցի»): Ավելի մեծ թիվ են կազմում այդտեղ գտնված սկզբանական բրոնզե երկերը ու նորաքեն ննտալաքները: Նման

ննտապաքներ հայտնի են Էրեբունիից, Արգիշտիլսինիից, Կարմիր բլուրից, Արագածից, Հայկաբերդից և այլ հուշարձաններից:

Գտնվել են նաև ծիասանձնրի առանձին մասնը: Դրանցից նրկուար ուկրից պատրաստված տափակ այտապաններ են, որոնք կենտրոնական մասում ունեն նրենք անցք: Վերին պահպանված մասնը ունեն նոր զնուակոր անզդաղութիւն: Նման այտապանները խիստ բնորոշ են վաղ սկզբանական մշակույթին: Գտնվել են նաև վարազի ժանիքներից պատրաստված նրենք անցքերով այտապաններ:

Ոչ մեծ խումբ են կազմում հայտնաբերված ուկրե գործիքները: Դրանք հիմնականում ներկայացված են տարբեր ձևերի իլիկի գրիփիկներով, գործվածք վարսելու կտուտիչներով, խոշոր ճարմանդներով և ոչ մեծ օղակներով:

Համեմատաբար մեծ թիվ են կազմում խնջանոթները: Որոշ անոթների վրա պահպանվել են վարպետի նշաններ: Հայկաբերդից գտնված իրենի մյուս խումբը ներկայացված է բազալտն և պորֆիրիտն քարն թասներով: Դրանցից երկուսը տափակ բազալտն թասներ են, որոնք ունեն ոչ բարձր նստուկ: Ավելի շքեղ է սև, կանաչավուն նրանգավորումով պորֆիրիտից թասը, որն ունի ներ օղակածն հատակ: Գտնվել է նաև բրոնզն թաս, որն ունի փոքր-ինչ լայնացող իրան և կտրված շուրջ: Հատակն ունի ներս ընկած նստուկ, նզրերը զարդարված են ուղղահայաց, ներճշկված գծերով:

Հայկաբերդի ամենահենտաքրքիր նյութների թվին են պատկանում կնիքները: Այսպես, Հ. Օքբելու հայտնաբերած կնիքներից մեկի վրա պատկերված էր ձեռքները վեր բարձրացրած թևավոր կին, որից աջ պատկերված է ուլ, իսկ ձախից՝ ծառ: Երկու կողմերում աղոթքի դիրքով կանգնած են մարդիկ: Բ. Պիոտրովսկին գտնում է, որ այստեղ պատկերված թևավոր կինը գազանների և բույսների տիրուիկին է: Հ. Օքբելու գտած երկրորդ կնիքի վրա պատկերված են զոհաւանդան և գլխատված մարդ, որի մարմինը մաշկված է: Ա. Էրգենի կողմից հրատարակված երկու կնիքներից մեկը ունի կշռաքարի ձև: Մրա կողային մակերեսը բաժանված է չորս շնչանկյուն քիջների, որոնցից յուրաքանչյորում տնդադրված են այծերի գլուխ-

ննրի և նիզակննրի պատկերննր, շրջանակի մնջ՝ թևավոր էակ, խիստ ոճավորված կենդանիննր: Երկրորդ կնիքը պրիզմայի ձև ունի և պատրաստված է սև քարից: Կնիքի մի կողմում սխնմատիկ կերպով մարդ է պատկերված, նրկրորդ կողմում՝ զլի վրա կանգնած աղնողնավոր: Երրորդ կողմում ի հայտ է գալիս մի մարդ՝ կանգնած կարիճի վրա: Վերջին՝ չորրորդ կողմում ձևքնրը պարզած մարդը կանգնած է առյուծի վրա: Այս բոլոր մոտիվննրը ծածախակի են հանդիպում ուրարտական բրոնզի գոտիննրի վրա, ուր առյուծի վրա կանգնած պատկերննրը խորերդանշում են Ուրարտուի գերազույն աստվածություն Խալդիին, իսկ զլի վրա կանգնածննրը՝ պատերազմի և ամպրոպի աստվածություն Թնյշնբային: Առավել հետաքրքիր է կարիճի վրա կանգնած մարդը: Հաշվի առնելով Բ. Պիոտրովսկու և Գ. Ղափանցյանի կարծիքը՝ կարելի է ենթադրել, որ այս էակը Իրմուշինի աստվածությունն է:

Հայկաբնրդի պնդումննրը հնարավորություն տվյալին պարզաբանել նրա անկման պատճառննրը, որոնք կրկնում են ուրարտական շատ հուշարձանննրի՝ Թոփրաք քալեի, Արգիշտիխինիլիի և, հատկապես, Կարմիր բլուրի պատմությունը: Հայկաբնրդի անկման մանրամասննրի մասին են վկայում նրա պարհսպննրի տակ հայտնաբերված մի քանի հազար սկզբութական ննտապարննրը:

Գրականություն: Եսայան, Քիլիմջան 1991; Başaran 1989; Erzen 1976-1977; Dinçol 1977; Erzen 1978; Erzen 1978b; Erzen 1979; Dinçol 1987; Erzen 1988

Նկարներ: 8

ԱՅԱՆԻՄ

Այանիսի ամրոցը գտնվում է Վան քաղաքից 38 կմ հյուսիս՝ համանուն գյուղի տարածքում, Վանա լճի ափին, Սիփան լնոան դիմաց: Ամրոցը տնդադրված է լնոնաբրի գագաթին և շրջապատված է հզոր պարսպապատերով: 150x450մ չափերով ամրոցն ունի ուրարտական և միջնադարյան շերտեր: Պաշտպանական պատերն ամրացված են աշտարակներով և որմնահենցերով: Պարսպապատերի քարերը մշակված են ժապավենաձև նզրագծման մեթոդով (ռուստովկա), որը բնորոշ է ինչպես քաղաքային, այնպես էլ ռազմական ճարտարապետության սկզբունքներին:


Ամրոցի հարավարևելյան հատվածում հայտնաբերվել է Ռուսա II-ի 14 տողանոց սնպազիր արձանագրությունը, որտեղ նշվում է քաղաքի անունը՝ «Ռուսախինիլի - Էհրուրու լնոան առջև»: Բացի դրանից, հիշատակվում է տաճարների և պալատական համալիրների կառուցման մասին: Պեղումների ժամանակ բացվել են պալատական շինություններ՝ պահեստ-մթերանոցներով, տաճարային համալիրներ՝ քակներով և կացարան-մառաններով:

Ամենուր հաստատագրվել են հրդեհի հնտքեր: Դրանք այրված շինությունների, գնրանների բնկորներ են, որոնք թափվել են պատերի հետ, հրդեհի արդյունքում:

Տաճարային համալիրն ունի 30×30 մ² մակերես, շրջապատված է տասը որմնասյուններով, իսկ կենտրոնական հատվածում տնդադրված է $12,75 \times 12,75$ մ չափերով տաճարը, որն ունի մուտք, նախասրահ և $4,58 \times 4,62$ մ գնլլա: Տաճարը և գնլլան, ինչպես նաև հարթակը, զարդարված են խորաքանդակ պատկերներով, իսկ մուտքի հատվածը պատված է 88 տողից կազմված սնպազիր արձանագրությունով: Որմնաքանդակները ներկայացնում են կենդանիների և մարդկանց պատկերների ներդաշնակ ամբողջականություն, որը նման է ուրարտական որմնանկարների այուժնենրին: Հայտնաբերված հնագիտական գտածոների մեջ հատկապես արժեքավոր է ումբոն-այուծի բրոնզաձույլ գլուխը: Ռուսա II-ը Սուսի տաճարը կառուցել է թշնամի նրկըների դեմ հաղթանակ տանելու



9. Այանիս, ամրոցի տնդագրական քարտեզը և հատակագիծը



10. Այանիս, արևմտյան պահեստասեմյակները

կապակցությամբ և նվիրաբերել է Խալդ աստծուն: Հնագիտական նյութն աչքի է ընկնում առատությամբ և շքնղությամբ: Դրանք բրոնզից և երկարից, ոսկուց, արծաթից, կիսաթանձնկարժեք քարերից պատրաստված արտեֆակտների հավաքածուներ են: Հատկապես հետաքրքիր են Սուսի և բակի սյունաբանով համալիրները: Տաճարը և բակը ամբողջովին լցված էին բազմաթիվ առարկաներով՝ վահաններ, սաղավարտներ, սրեն, դաշույններ, կապարձներ, նենտեր, նիզակներ, ծիասանձներ, կաթսաններ և այլն:

Գրականություն: Çilinigiroğlu 1994; Çilingiroğlu, Salvini 1995; Çilinigiroğlu, Salvini 1997; Çilingiroğlu, Salvini 1999; Çilingiroğlu, Salvini 2001; Stone, Zimansky 2004; Çilinigiroğlu 2006

Նկարներ: 9, 10

Լուսանկարներ: 4, 19-22

ՆԵՐՔԻՆ ԽՆՉՈՂ (ՔԱՅԱԾ ԴԵՐԵ)



Ներքին խնձոր ամրոցը գտնվում է պատմական հայաստանի Տուրուբերան աշխարհի հարք զավառում՝ Մշողաշտում, ժամանակակից Վարտող քաղաքից 16 կմ հարավ-արևելք, Արածանիի աջ ափին:

Ամրոցի ուրարտական անունը հայտնի չէ: Այն կոչվել է հայկական Ներքին խնձոր գյուղի անունով, որը 1915 թ. հետո վնրանվանվել է Քայալը դեռև: Ամրոցի 1964-1965 թթ. պնդումների նախնական արդյունքները հիմքածառ են Չ. Բըրնիի կողմից:

Ներքին խնձոր ամրոցը կառուցված է 150 մ բարձրություն ունեցող բլրի և դարավանդների վրա: Այն ունի երկու միջնաբնրդ: Վերին միջնաբնրդը զբաղեցնում է բլրի գագաթն ու լանջերը, ստորինը՝ բլրի ստորին հատվածը և իջնում է մինչև գնտը: Երկու միջնաբնրդները միանում են սալապատ ճանապարհով: Քաղաքային թաղամասները զբաղեցնում են բլրի շրջակա տարածքները: Ամբողջ համալիրը 40 հա է:

Վերին միջնաբնրդում բացվել են աշտարակներով և որմնահեղեղնորով ամրացված դարպասները: Ամրոցի ամենաբարձր կետում բացվեց տաճարը: Այն ունի քառակուսի հատակագիծ՝ $12,5 \times 12,5$ մ արտաքին չափերով: Տաճարի պատերի հաստությունը 3,2-3,3 մ է: Անկյունային որմնահեղեղնը 0,5 մ առաջ են պատերից: Մուտքի լայնությունը 2 մ է: Ցեղանոնի $5,5 \times 5,5$ մ չափերը: Խորքում պահպանվել է քարեն պատվանդան: Դատելով տաճարի պատերի հաստությունից՝ այն իրենից ներկայացրել է բարձր աշտարակածն շինություն, որի պատերը շարված են եղել աղյուսից՝ քարեն հիմքի վրա: Որոշ աղյուսների վրա պահպանվել են կապույտ ներկի հետքեր: Տաճարի ներսը ծածկված է եղել որմնանկարներով:

Տաճարի առջև բացվել են ընդարձակ սալարկված բակի հետքեր: Մուտքի մոտ գտնվել է ուղղանկյուն-պրիզմայածն, $2 \times 1,35 \times 0,6$ մ չափերով քարեն կառույց: Նրա վերին հատվածում պահպանվել է փորված քիվ: Կառույցը ունեցել է ծիսական արարողությունների համար նախատեսված ավագանի կամ խարսխի (որի կենտրոնական մասում դրվել է կողըն) գործառույթ:



11. Քայալը դնեմ, ամրոցի (ա) և տաճարի (բ) հատակագծները

Ներքին խնձոր ամրոցի տաճարը նմանություն ունի ուրարտական շատ տաճարների հետ: Ինչպես ցույց նն տալիս ուսումնասիրությունները, Թոփրաք քալնի, Ալեքս թեփենի (Ճմին), Հայկաբերդի, Բաստամի ուրարտական տաճարները ունեն միևնույն հատակագծային կառուցվածքը՝ փոքր զելաննը (5×5 մ, $4,5 \times 4,5$ մ, $5,2 \times 5,2$ մ, $5,8 \times 5,8$ մ)` զոհասեղաններով կամ արձանի համար նախատեսված պատվանդաններով, չորս որմնահենցներ, պատերի գրեթե նույն հաստությունը ($3,2 \times 3,2$ մ), քառով կամ աղյուսով պատած քակ, կից զոհարաններ կամ այլ շինություններ:

Զ. Բըրնին ննթադրում է, որ ուրարտական տաճարների տանիքները, քացառությամբ Էրեբունիի տաճարների, նղել են նրկթենք: Նա ննթադրում է, որ Ներքին խնձորի տաճարի տանիքը նման է Կյուրոսի դամբարանի տանիքին՝ տարբերվելով վնրջինից միայն փայտեն ծածկով:

Ինչ վնրաբերում է նրկթենք տանիքներին, ապա ուրարտական հնագիտական ոչ մի կառուցում, քազի Մուսասիրի տաճարից, նրկթենք տանիքի հնտքենը չեն գրանցվել:

Վնրին միջնաբերդի ստորին դարավանդի վրա պնդվել է 25 խոշոր կարասներով պահենստային սենյակ: Զ. Բըրնին, դատելով շնրտագրությունից, կարծում է, որ պահենստային սենյակը նղել է նկուղային հարկում, որի վրա բարձրացրել են բնակելիները: Տաճարից ոչ հեռու գտնվել է ևս մի մթերանոց:

Վնրին ամրոցի պեղումները ցույց տվեցին, որ Ներքին խնձոր ամրոցը մի եզր շինություն էր՝ իր պալատական, տաճարային, տարբեր պահենստային համալիրներով, և մեծ նշանակություն ունի ուրարտական ամրոցաշինության ու քաղաքաշինության ուսումնասիրության համար:

Հայտնաբերված հարուստ հնագիտական նյութենքը քաղկացած են տարբեն աշխատանքային գործիքներից, զենքներից, զարդերից և քաղմազան խեցենենից: Աշխատանքային գործիքները ներկայացված են նրկաթեն մանգաղով և նրկաթեն կացնի բնկորով, որոնք իրենց գուգահեններն ունեն Թոփրաք քալնում, Արգիշտիխինիլիում, Խզդիրում և այլ հուշարձաններում:

Ավելի առատ են ներկայացված զենքները: Տաճարի տարածքում գտնվել են ներկաթեն պոչուկավոր ննտասլաքներ, որոնց գլխիկները տեղածն կամ նշածն են: Գտնվել են նաև սպառազինության այլ նմուշներ: Դրանցից մեկը կենտրոնական ուսուցիկ մասով և լայն, ուղիղ նզրերով, 67 սմ տրամագծով բրոնզի վահան է: Ներսի կողմից, ինչպես բոլոր այս տիպի վահանների մոտ, ամրացված են մեկ խոշոր և նրկու փոքր բռնակներ: Նման անգարդ, մոտ 1 մ տրամագծով վահան հայտնի է Կարմիր բլուրից: Գտնվել է նաև փայտե մարտական վահան՝ 9,2 սմ բարձրությամբ ուսմբոնով (բրոնզն սրածայր ելուստ): Կիսակլոր ներկաթեն ծողերը, որոնք ամրացված էին փայտե վահանին, նրան տվել են ավելի մեծ ամրություն: Սպառազինության այս տեսակին են պատկանում բրոնզն թիթենդներից պատրաստված հինգ կապարճները, որոնք զարդարված են ուսուցիկ գծերով:

Կենցաղային մնտարյա իրենքի թվին է դասվում բրոնզն կաթսայի բնկորը, որն ունի 0,3 մ տրամագիծ և որի ուսերը դեպի վեր նեղանում են, ապա լայնանալով՝ կազմում են փոքր-ինչ դուրս ճկված շուրթ: Բացի կաթսայի բնկորից, գտնվել է նաև ներկաթեն տապակա: Այն ունի 0,2 մ տրամագիծ, 0,15 մ ներկարությամբ պոչուկ, որին ամրացվել է փայտե բռնակը:

Գտնվել են նաև կահույքի մասներ և կահույքը զարդարող մի շարք իրեն: Դրանց մեջ ամենամեծ խումբն են կազմում արթունների կամ սեղանների փայտե ուղքերին հազզվող բրոնզն ծայրակալները: Սրանք իրենցից ներկայացնում են սնամեջ, ստորին մասում փակ խողովակներ, կամ առյուծի ու ցլերի ուղքերի տեսք ունեցող սնամեջ պահանակներ: Վերջիններս, հազզվելով կահույքի փայտե ուղքերին, ամրություն և գնդեցիկ տեսք են տալիս դրանց: Տաճարի տարածքում գտնվել են մեծ գլխիկով խոշոր գամեր՝ գորգներ կախելու համար, որոնք հայտնի են նաև Ծոփիաք քալեից, Կարմիր բլուրից և այլն: Բազմաթիվ են տակառածներ և գնդածներ ուղունքներ՝ պատրաստված շաղախից (մեկը ջնարակված), փղոսկրից, ագաթից և սերդոյիկից:

Ուրարտական արվեստի լավագույն նմուշներից է 6,4 սմ բարձրությամբ, 9,3 սմ ներկարությամբ առյուծի բրոնզն ծուլածո արծանիկը: Այն

պատկերված է նստած, առջևի նրկու թաթենրը ճգփած վիճակում: Գլուխը քանդակված է բոլոր մանրամասներով: Բաշրը ընդգծված է խորը գծնրով, ականջները սնդմված են գլխին: Բաց նրախում նրեւում են ժանիքները: Աղյուծի արձանի ստորին մասը կիսով չափ սնամեջ է, գլուխը և ոտքնրը՝ հոծ: Այս քանդակի ստույգ համեմատականն է կապանի շրջանի Սզնակ գյուղի օրինակը, որը տարբերվում է ավելի մնած չափներով: Կապանի օրինակն ամբողջութին հոծ է: Ներքին խնձորի և Սզնակի աղյուծների արձանների ստորին մասում կան նռանկյունի փոսիկներ, որոնցով նրանք հազգվել են ինչ-որ առարկայի վրա:

Հնտարքրական են տնաարաններով զարդարված բրոնզե գոտու բնեկորները: Այստեղ երեք մարտակառքների թափրում պատկերված են երեք քական զինվոր: Սովորաբար ուրարտական մարտակառքների թափրերում պատկերված են լինում երկու զինվոր: Այս հանգամանքը վկայում է, որ Ներքին խնձորի գոտու վրա առաջին անգամ ի հայտ է զայխ ծանր մարտակառք: Պատկերված զինվորները կրում են սրածայր սաղավարտներ և ննտ-աղնդներ: Նրանք պայքարում են աղյուծի դեմ: Աղյուծներից մեկը սպանված է, մյուսը հարձակվում է թափրում կանգնած զինվորների վրա: Աղյուծներից մեկը ուրիշը, չնայած մահամերձ է, թաթով բռնլ է անիվի ճաղից: Զինվորներից մեկը ստիպված ձեռքով նրան նտ է շպրտում անիվից:

Նկարազարդ է նաև տաճարի բակում գտնված բրոնզե թիթենի փոքր բնեկորը (2,4x2,5 սմ չափներով), որի վրա պատկերված է թևավոր ծի: Այստեղ գտնված նյութերի ամենամեծ խումբը կազմված է խնցենդնից: Ինչպես նշվեց, պնդումների ընթացքում գտնվել են բազմաթիվ կարասներ, որոնք ունեն տարբեր ձևեր ու զարդամուտիվներ: Գրեթե բոլոր կարասների վզներին կան հինրոգլիֆ նշաններ, որոնք ցույց են տալիս դրանց տարրությունը: Բացի հինրոգլիֆ նշաններից, կարասների վրա պահպանվել են տիկի և սափորի պատկերներ, որոնք հավանաբար ցույց են տալիս, թե ինչ է պարունակում այս կամ այն անօթը:

Ելնելով կարասների ձևերից՝ դրանք կարելի է բաժանել մի քանի տիպի: Կարասները մեկը մյուսից տարբերվում են իրանների ճգվածությամբ

կամ ուսուցիկությամբ, վզերի բարձրությամբ և շուրջենի դուրս մկվածությամբ: Այս կարասներն ունեն 1,75-2 մ բարձրություն, 1-1,3 մ լայնություն: Կարասների վզերից ններք անցնում են ուսուցիկ բոլորանախներ՝ երբեմն ներ փորագիր գծերով: Մեծ մասի իրանները զարդարված են լայն ուղղանկյուններով և նուանկյուններով, որոնց զագալքները վեր ու վար են ուղղված: Բացի կարասներից, թասերից, սափորներից, գտնվել է նաև մի յուրահատուկ գավաթ: Այն ունի երկար, սնամեջ ոտք, ուսուցիկ իրան, լայնացող շուրջեր: Գտնվել է նաև խոշոր կավճ ծագար: Հետաքրքիր է տաճարում գտնված կարմրադարչնագույն անոթի բնեկորը, որի վրա ծի է պատկերված:

Ներքին խնձոր ամրոցի պարիսանների, հատակագծի մանրամասների և գտածոնների վերլուծությունը Զ. Բըրնիին հնարավորություն է տվել նզրակացնելու, որ ամրոցը կառուցվել է Ք.ա. IX դ. վնրջին կամ VIII դ. սկզբին և կործանվել է մարա-սկյութական արշավանքների ժամանակ՝ Ք.ա. VII դ. վնրջին-VI դ. սկզբին:

Գրականություն: Եսայան, Աքաջյան 1991; Lloyd, Burney 1965; Burney 1966; Burney 1998

Նկարներ: 11, 35


ՃՄԻՆ (ԱԼԵ-ՀՆ ՁԵՓԵ)

Ճմինի ամրոցը գտնվում է Երզնկա քաղաքից 26 կմ դեպի արևելք՝ մոտ 60 մ բարձրություն ունեցող բլրի գագաթին: Այստեղ, սկսած 1956 թ., կանոնավոր պեղումներ է կատարել Թ. Օզյուչը: Յափոք, պեղումների ընթացքում ամրոցի ուրարտական անվանումը հաստատող որևէ արձանագրություն չի գտնվել: Ամրոցից ոչ շատ հեռու գտնվում է հայկական Ճմին գյուղը: Ճմինի պեղումները մեծապես նպաստեցին ուրարտական ճարտարապետության, մշակույթի և արվեստի ուսումնասիրությանը:

Բացի Թ. Օզյուչից, որը հրատարակել է նրկիատոր աշխատություն խնդրո առարկա հուշարձանի մասին, մի շարք գիտնականներ, ինչպիսիք են Վ. Քլայսը, Թ. Ֆորբսը, Մ. Վան Լունը, Դ. Բարնետը, փաստագրել են ամրոցի պատմությունը: Նեղինակներն անդրադարձել են հուշարձանի պաշտպանական, պալատական և տաճարային համալիրների ճարտարապետությանը, նյութական մշակույթին:

Ճմինի միջնաբերդը կառուցվել է բլրի գագաթին: Նրա պաշտպանական կառույցները քիչ են ուսումնասիրվել: Ամրոցի պարիսպները նրկիարկանի են՝ զրահապատ շարվածքով: Մինչև 40 տ քարն զանգվածների միջուկը լցված է քարահողային լիցքով: Այս տեխնիկան ավելի բնորոշ է հին կրկնույան ամրոցաշինությանը և վկայում է այն մասին, որ ք.ա. VIII դ. Ուրարտուում շարունակվում էին հայկական լեռնաշխարհի բրոնզ-նրկաթենդարյան շինարարական մշակույթի ավանդույթները: Պարիսպների քարն իհմքի վրա կառուցվել են հում աղյուսով շարված մինչև 12 մ բարձրությամբ պատճերը: Այսպիսի շափերը ուրարտական ամրոցաշինության համար նգակի են, քանի որ պարիսպների պատճերի հաստությունը սովորաբար տատանվում է 2,5-5 մ միջև: Պարիսպները ամրացված են իրարից 11մ հեռավորության վրա տեղադրված ուղղանկյուն որմնահենցներով, որոնք պատճերից առաջ են գալիս 1 մ: Նրանք ունեն 1-2,25 մ լայնություն: Սովորաբար ուրարտական որմնահենցների նրկարությունը տատանվում է 5-7 մ:

Ավելի լավ պեղված ու մանրամասն ուսումնասիրված են տաճարը, բակը և պալատական շինությունների մի մասը: Ճմինի տաճարը, որը տե-




12. Ալեքս թնիկ, միջնաբնորդի հատակագիծը

դադրված էր քակի խորքում, հատակագծում քառակուսի է՝ $13,9 \times 13,9$ մ արտաքին չափերով: Տաճարի հիմքը կառուցված է սրբատաշ անդնդիտից, որի վրա պահպանվել են հում աղյուսի պատճերը: Տաճարի չորս անկյունները եզրագծված են որմնահեղեղով: Պատճենը ունեն $4,35$ մ հաստություն, որի հետևանքով ցեղան ավելի փոքր է ($5,2 \times 5,2$ մ): Մուտքն ունի երկու տասիհճան, որոնց երկու կողմում դրված են փոքր անցքեր ունեցող սրբատաշ քարն սալեր: Այս անցքերում, հավանաբար, դրվել են նիզակներ:

Մուտքից դեպի ցեղան ընկած տարածքում կառուցվել է $1,5$ մ լայնությամբ և $3,8$ մ երկարությամբ միջանցը: Ցեղայի հատակը կավածնի է, և հնարավոր է, որ հնում այն ծածկված է նղեն խսիրով կամ զորգով: Բոլոր պատճերի տակ պահպանվել են ննդ, սրբատաշ քարից կառուցված նըստարաններ: Ցեղայի խորքում գտնվում է $1,9 \times 1,45$ մ չափերով քարել պատվանդան: Հաշվի առնելով պատվանդանի չափերը՝ կարենի է ենթադրեն, որ նրա վրա դրված արձանը, հավանաբար, մեծ ծավալ է ունեցել: Պատվանդաններ պահպանվել են նաև ուրարտական այլ հուշարձաններում Ներքին խնձորում, Էրեբունիում, Թոփրաք քաղաքում և այլուր: Սակայն դրանցից ոչ մեկում արձաններ չեն գտնվել: Պատվանդանի դիմաց՝ հատակին, գտնվել են երկու երկաթեն և երկու բրոնզե մականի գլուխներ, նետալաքներ, գավազանի գլուխներ, սաղավարտներ, վահաններ, փղոսկրյա զարդեր և այլն: Ցեղայի պատճերը պահպանվել են $1,15$ մ քարձրությամբ: Ներքի կողմից հում աղյուսը ծածկված է սվաղի հաստ շերտով, որի վրա կարմիր, կապույտ, սպիտակ, սև և դարչնագույն գույներով պատկերված են երկրաչափական և բուսական նախշազարդեր: Զնայած տաճարի անվան Վերաբերյալ որևէ արձանագրություն չի պահպանվել, այնուամենայնիվ իրավամբ ենթադրվում է, որ տաճարը նվիրված է նղեն Խալդիին:

Տաճարը տնդադրված է ընդարձակ, 17×27 մ չափերով քակի խորքում: Չորս կողմից այն շրջապատված է նղեն սյունաշարով, որից պահպանվել են $0,2$ մ քարձրությամբ և $0,7$ մ տրամագծով քարել սրբատաշ սյունախարիսխները: Հատակը սալապատված է մանր քարերով: Այու-

նաշարի հարավային հատվածում հատակի վրա, գտնվել են բրոնզե սաղավարտներ, վահաններ, երկարեն ու բրոնզե նիզակներ, փղոսկրյա իրենք, հավանաբար կահույքին պատկանող ոսկու բարակ թիթենդներ, սնդան՝ նրենք բրոնզե ոտքընդուռ և դրան բրոնզե շղթա: Բակը բոլոր կողմերից օղակված է 2,5 մ հաստությամբ պատճեռով: Այստեղ գտնվել են նրենք զոհասնդաններ՝ գլխավորը՝ տաճարի մուտքի դիմաց, երկրորդը՝ բակի մուտքի դիմաց և երրորդը՝ հետին մասում: Կարծիք կա, որ վերջիններս զոհասնդաններ չեն, այլ անկանոն քարենքի շարվածք, որոնք եզրապատճեն են տաճարի սրբազն ծառները (Գ. Թումանյան):



13. Ալթըն թնկին, տաճարի վերակազմությունը՝ ըստ Թ. Օգյուշի

Անկասկած, կրոնածիսական կարևոր նշանակություն ունեն նաև բակի արևմտյան մասում պեղված նրենք ուղղանկյուն սենյակները ($6,5 \times 5,6$, $5 \times 14,5$ և $6,5 \times 5$ մ չափենքով): Նրանք իրար և բակին միացված են դրներով: Այս սենյակների պատճեռը, ինչպես տաճարում, ծածկված են սվաղով, որի վրա պահպանվել են որմնանկարների հետքեր: Տաճարից դեպի արևմուտք պեղվել են պալատական համալիրին պատկանող տարբեր չափենրի չորս սենյակներ: Հարևանությամբ բացվել է նրկրորդ բակը:


ՃՄԻՆ (ԱԼԹ-ԸՆ ՁԵՓԵ)

Ճմինի ամրոցը գտնվում է Երզնկա քաղաքից 26 կմ դեպի արևելք՝ մոտ 60 մ բարձրություն ունեցող բլրի գագաթին: Այստեղ, սկսած 1956 թ., կանոնավոր պնդումներ է կատարել Թ. Օզյուչը: Ցավոք, պնդումների ընթացքում ամրոցի ուրարտական անվանումը հաստատող որևէ արձանագրություն չի գտնվել: Ամրոցից ոչ շատ հեռու գտնվում է հայկական Ճմին գյուղը: Ճմինի պնդումները մեծապես նպաստեցին ուրարտական ճարտարապետության, մշակույթի և արվեստի ուսումնասիրությանը:

Բացի Թ. Օզյուչից, որը հրատարակել է նրկիատոր աշխատություն խնդրո առարկա հուշարձանի մասին, մի շարք գիտնականներ, ինչպիսիք են Վ. Քլայսը, Թ. Ֆորբսը, Մ. Վան Լունը, Դ. Բարնետը, փաստագրել են ամրոցի պատմությունը: Հնդինակներն անդրադարձել են հուշարձանի պաշտպանական, պալատական և տաճարային համալիրների ճարտարապետությանը, նյութական մշակույթին:

Ճմինի միջնաբերդը կառուցվել է բլրի գագաթին: Նրա պաշտպանական կառույցները թիւ են ուսումնասիրվել: Ամրոցի պարիսապները նրկիարկանի են՝ զրահապատ շարվածքով: Մինչև 40 տ քարե զանգվածների միջուկը լցված է քարահողային լիցքով: Այս տեղանիկան ավելի բնորոշ է հին կիկլոպյան ամրոցաշինությանը և վկայում է այն մասին, որ Ք. ա. VIII դ. Ուրարտուում շարունակվում էին հայկական լնոնաշխարիք բրոնզ-նրկաթենդարյան շինարարական մշակույթի ավանդույթները: Պարիսապների քարե հիմքի վրա կառուցվել են հում աղյուսով շարված մինչև 12 մ բարձրությամբ պատճերը: Այսպիսի չափերը ուրարտական ամրոցաշինության համար նզակի են, քանի որ պարիսապների պատճերի հաստությունը սովորաբար տատանվում է 2,5-5 մ միջև: Պարիսապները ամրացված են իրարից 11 մ հեռավորության վրա տեղադրված ուղղանկյուն որմնահենցներով, որոնք պատճերից առաջ են գալիս 1 մ: Նրանք ունեն 1-2,25 մ լայնություն: Սովորաբար ուրարտական որմնահենցների նրկարությունը տատանվում է 5-7 մ:

Ավելի լավ պնդված ու մանրամասն ուսումնասիրված են տաճարը, բակը և պալատական շինությունների մի մասը: Ճմինի տաճարը, որը տե-




12. Ալեքս թնդն, միջնաբերդի հատակագիծը

դադրված էր քակի խորքում, հատակագծում քառակուսի է՝ $13,9 \times 13,9$ մ արտաքին չափներով: Տաճարի հիմքը կառուցված է սրբատաշ անդեզիտից, որի վրա պահպանվել են հում աղյուսի պատերը: Տաճարի չորս անկյունները նգրագծված են որմնահեցներով: Պատճենը ունեն $4,35$ մ հաստություն, որի հետևանքով ցնկան ավելի փոքր է ($5,2 \times 5,2$ մ): Մուտքն ունի երկու աստիճան, որոնց երկու կողմում դրված են փոքր անցքներ ունեցող սրբատաշ քարե սալեր: Այս անցքներում, հավանաբար, որվել են նիզակներ:

Մուտքից դեպի ցնկան ընկած տարածքում կառուցվել է $1,5$ մ լայնությամբ և $3,8$ մ երկարությամբ միջանցք: Ցնկայի հատակը կավածենի է, և հնարավոր է, որ հնում այն ծածկված է եղել խսիրով կամ գորգով: Բոլոր պատճենի տակ պահպանվել են նեղ, սրբատաշ քարից կառուցված նըստարաններ: Ցնկայի խորքում գտնվում է $1,9 \times 1,45$ մ չափներով քարե պատվանդան: Հաշվի առնելով պատվանդանի չափները՝ կարծիք է ենթադրել, որ նրա վրա դրված արձանը, հավանաբար, մեծ ծավալ է ունեցել: Պատվանդաններ պահպանվել են նաև ուրարտական այլ հուշարձաններում Ներքին խնձորում, Էրեբունիում, Թոփրաք քալեում և այլուր: Սակայն դրանցից ոչ մեկում արձաններ չեն գտնվել: Պատվանդանի դիմաց՝ հատակին, գտնվել են երկու երկաթեն և երկու բրոնզե մականի գլուխներ, նետասլաքներ, գավազանի գլուխներ, սաղավարտներ, վահաններ, փղոսկրյա զարդեր և այլն: Ցնկայի պատճերը պահպանվել են $1,15$ մ քարձրությամբ: Ներսի կողմից հում աղյուսը ծածկված է սվաղի հաստ շերտով, որի վրա կարմիր, կապույտ, սպիտակ, սև և դարչնագույն գույններով պատկերված են երկրաշափական և բուսական նախշազարդեր: Չնայած տաճարի անվան վերաբերյալ որևէ արձանագրություն չի պահպանվել, այնուամենայնիվ իրավամբ ենթադրվում է, որ տաճարը նվիրված է եղել Խալդիին:

Տաճարը տնտեսապես է ընդարձակ, 17×27 մ չափներով քակի խորքում: Չորս կողմից այն շրջապատված է եղել սյունաշարով, որից պահպանվել են $0,2$ մ քարձրությամբ և $0,7$ մ տրամագծով քարե սրբատաշ սյունախարիսխները: Հատակը սալապատված է մանր քարներով: Այու-

նաշարի հարավային հատվածում՝ հատակի վրա, գտնվել են բրոնզն սաղավարտներ, վահաններ, նրկաթենու բրոնզն նիզակներ, փղոսկրյա իրենք, հավանաբար կահույքին պատկանող ոսկու քարակ թիթենիներ, սնդան՝ նրենք բրոնզն ոտքերով և դռան բրոնզն շղթա: Բավոր բոլոր կողմերից օդակված է 2,5 մ հաստությամբ պատերով: Այստեղ գտնվել են նրենք զոհասնդաններ՝ գլխավորը՝ տաճարի մուտքի դիմաց, նրկրորդը՝ քակի մուտքի դիմաց և նրրորդը՝ հետին մասում: Կարծիք կա, որ վնրջիններս զոհասնդաններ չեն, այլ անկանոն քարերի շարվածք, որոնք նզրապատել են տաճարի սրբազն ծառերը (Գ. Թումանյան):



13. Ալթըն թնիկ, տաճարի վնրակազմությունը՝ ըստ Թ. Օզյուչի

Անկասկած, կրոնածիսական կարևոր նշանակություն ունեն նաև քակի արևմտյան մասում պնդված նրենք ուղղանկյուն սենյակները ($6,5 \times 5,6$, $5 \times 14,5$ և $6,5 \times 5$ մ չափերով): Նրանք իրար և քակին միացված են դրներով: Այս սենյակների պատերը, ինչպես տաճարում, ծածկված են սվաղով, որի վրա պահպանվել են որմնանկարների հետքեր: Տաճարից դեպի արևմուտք պեղվել են պալատական համալիրին պատկանող տարրեր չափերի չորս սենյակներ: Հարևանությամբ քացվել է նրկրորդ քակը:

Ալթըն քնիկի պալատական և տաճարական համալիրների միշտը շինությունների պատուի պատկերազարդարվել են որմնանկարներով:

Գրականություն: Barnett, Gökce 1953; Steinherr 1958; Özgürç 1961; Özgürç 1964; Özgürç 1966; Özgürç 1969; Özgürç 1969b; Kutlu 1969; Özgürç 1989; Summers 1993



Նկարներ: 12, 13, 35

ԷՐԵԲՈՒՆԻ (ԱՐԻՆ ՔԵՐՄ)

Էրեբունի ամրոցը կառուցվել է Արգիշտի I-ի կողմից իր տիրակալության հինգերորդ տարում՝ Ք.ա. 782 թ.: Այդ ամրոցի գոյության մասին հայտնի էր Արգիշտի I-ի Խորխորյան տարեգրությունից, ըստ որի՝ ամրոցի կառուցման համար նա վերաբնակեցրել էր Խաթեն և Ծուպանի նրկրներից գերված 6600 զինվորների:

Էրեբունի ամրոցը գտնվում է Երևանի հարավարևելյան ծայրամասում Նոր-Արենց և Վարդաշեն թաղամասերի միջև գտնվող Արին բնրդ բլրի գագաթին: Այս բլուրը գիտնականներին հայտնի է դեռ 1894 թ.-ից: Հնագետ Ա. Իվանովսկին Նորքի բնակիչ Պ. Տեր-Ավետիսյանից գննց Արին բնրդի ստորոտում գտնված մի բազալտն սնապագիր արձանագրություն, որը վերծանվեց և հրատարակվեց Մ. Նիկոլսկու կողմից: Այս արձանագրությունում պատմվում էր Արգիշտի I-ի կողմից կառուցված հացահատիկի 10000 կապի տարրությամբ շտեմարանի մասին: Ա. Իվանովսկին այստեղ մասնակի պնդումներ կատարեց, որից հետո նրկար ժամանակ բլուրը մնաց չուսումնասիրված: Միայն 1950 թ. սկսվեցին այս կարևոր հուշարձանի կանոնավոր պնդումները՝ Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Պնդումները կատարվում էին Արին բնրդ բլրի վրա, ուր գտնվում է միջնաբնրդը: Բլրի շրջակայրում գտնված նյութենքը՝ խնցնդեն իրենք, կառուցների պատեր, կացարանների հատակներ և այլն, հնարավորություն տվեցին պարզեցնությունը: Ամրոցի մոտ 8 հա տարածքը շրջապատվեց հզոր պարիսպներով: Մոնուխտ բազալտն ծայրի վրա շինարարները բարձրացրին և հարթեցրին հսկայական քարեն զանգվածներ: Շարվեց նրկու մնաց բարձրություն ունեցող գնտնախարիսխ (ցոկոլ), և ապա բարձրացվեց ութմետրանոց պարսպապատը՝ հում առյուսից: Պարիսպը, յուրաքանչյուր 8 մ հնուավորության վրա, ամրացվեց հինգմետ-

Պնդումների առաջին տարում պարզվեց նաև այս ամրոցի անունը: Համապատասխան արձանագրության մեջ ասված էր. «Խալալի աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս հզոր բնրդը կառուցեց. նրա համար սահմանեց Էրեբունի անունը»: Ամրոցի մոտ 8 հա տարածքը շրջապատվեց հզոր պարիսպներով: Մոնուխտ բազալտն ծայրի վրա շինարարները բարձրացրին և հարթեցրին հսկայական քարեն զանգվածներ: Շարվեց նրկու մնաց բարձրություն ունեցող գնտնախարիսխ (ցոկոլ), և ապա բարձրացվեց ութմետրանոց պարսպապատը՝ հում առյուսից: Պարիսպը, յուրաքանչյուր 8 մ հնուավորության վրա, ամրացվեց հինգմետ-



14. Էրեբունի, այոնազարդ բակը (Վերակազմություն) (ա), միջնաբնողի հատակագիծը (բ)

բանց որմնահեղնքով: Եռանկյունաձև հատակագծով ամրոցի ամբողջ տարածքը զբաղեցնում էին տարբեր նշանակության համալիրներ: Այսպես, միջնաբերդի արևմտյան հատվածը կառուցապատված էր աշխարհիկ և պաշտամունքային շինություններով: Հյուսիսարևելյան և հարավային հատվածները զբաղեցնում էին տնտեսական նշանակության շինությունները: Պեղումների ընթացքում բացվել են բազմաթիվ շինություններ՝ պալատներ, տաճարներ, բնակելի կացարաններ, պահեստներ, միջանցքներ և այլն:

Ամրոցի մուտքը գտնվում է բլրի հարավային զառիվայր լանջին: Մուտքը պաշտպանված է հզոր աշտարակներով, որից դեպի բակ կարելի է հասնել սանդուղքներով:

Ընդարձակ բակը (17x19 մ) ծածկված էր մանր գնտաքարերով: Դեպի բակն էին ուղղված ամրոցի նրեք նշանավոր կառույցների՝ Խալդիի տաճարի, պալատի և տնտեսական համալիրների ճակատները: Բակի արևմտյան կողմում գտնվում էր Խալդ աստծո տաճարը: Այն իրենից ներկայացնում էր նրկու ուղղանկյուն դահլիճներ՝ նրկու ոչ մեծ կից սենյակներով: Դահլիճներից մեկի հատակը ծածկված էր փայտու մանր տախտակներով, իսկ հատակի տակ բացվեցին տուֆից կառուցված ջրատար խողովակներ: Տաճարի պատերին կից պնդվնակավածների նստարան: Այս նստարանի հարավային մասում կառուցված էր նոռաստիճան, նրեքմնտրանց զոհասեղանը: Սևազած պատի վրա գտնվեցին փայտածիկի հետքեր: Տաճարի գլխավոր ճակատը զարդարում էր 12 այուներից կազմված նախարարականը: Փայտու այուները կանգնեցված էին քառակուսի քարեն խարիսխների վրա: Տաճարի պատերը զարդարված էին հարուստ որմնանկարներով, իսկ կապույտ առաստաղը զարդարում էին ոսկեգույն աստղերը: Տաճարի հարավային կողմում կառուցվել է 5x6 մ չափերով ուղղանկյուն աշտարակ՝ «զիկուրատ», որը կարելի էր բարձրանալ աղյուսն աստիճաններով: Այս աշտարակի վրա էր հենքում նախարարակի հարթ տանիքը: Ցավոք, շինության մնացորդները լիակատար վերականգնման հնարավորություն չեն տալիս: Համեմատելով Խալդիի տաճարի աշտարակը առաջավորասիական տաճարների հայտնի զիկուրատների հետ՝

կարենի է պատկերացնել նրա ձևը: Զիկուրատները միաժամանակ հանդիսանում էին սրբարաններ և աստղադիտարաններ, որոնց գագաթին քամբերը գուշակություններ էին անում:

Բակի հյուսիսային կողմում գտնվում էին պալատական շինությունները: Կենտրոնական հատվածը կազմում է 17×14 մ տարածություն գրադացնող այունազարդ բակը՝ նրկայնական կողում հնգական, իսկ լայնական կողում չորսական այուններով: Պալատի մուտքի մոտ գտնվում էր «պահակների» սենյակը: Պալատի դահլիճը ուներ $17 \times 7,5$ մ չափեր: Նրա հյուսիսային պատին բացվեցին երեք, իսկ հարավայինում՝ երկու որմնախորշեր: Դահլիճի տանիքը հարթ էր և ուներ փայտն ծածկ: Բոլոր պատճերը հարդարված էին բազմագույն որմնանկարներով, որոնք ավարտվում էին հատակից մոտ երկու մետր բարձրության վրա: Դրանցից ցած պատճերը ծածկված են նղել գորգներով, որոնք կախվելու համար քարերի մեջ խփվել են խոշոր, կլորավուն գլխիկներ ունեցող գամերի: Որոշ անցքեր այժմ էլ պարզ են լուսում են: Արգիշտիի պալատում առանձնակի տեղ էր գրավում բարձրաստիճան հյուրերի ընդունման համար նախատեսված այունազարդ դահլիճը: Այնտեղ մտնելու համար անհրաժեշտ էր այունազարդ բակից անցնել նեղ և երկար մի սրահով, որից հետո այցնելուների առջև բացվում էր վնիաշուր շրադակից:

Պատճերը և կավածենի նստարանները սպիտակեցված էին: Հատակը ծածկված էր կապտավուն ավաղով: Վերջինիս վրա բացվեցին այունների վարդագույն խարիսխները: Հյուրերին սպասարկելու համար դահլիճին կից կառուցվել են հինգ իրար հաղորդակից սենյակներ:

Պալատին անմիջականորեն կից՝ արևմտյան կողմում, պեղվեց Սուսի տաճարը: Այն իրենից ներկայացնում էր հատակագծում ուղղանկյուն մի սրահ, որի արտաքին չափերն են $10 \times 13,5$ մ, իսկ ներքինը՝ 5×8 մ: Ներքին տարածքը բավականին փոքր է, ուստի այն կարող էր սպասարկել սահմանափակ թվով մարդկանց: Տաճարն ունի հարթ ծածկ և, լսու երեսույթին, լուսավորվում էր երդիկի օգնությամբ: Տաճարի հիմնաքարերը շարված են վարդագույն տուֆից, իսկ նրա մուտքը՝ լավ տաշված բազալտն բնկորներից: Մուտքի մոտ պահպանվել է սնապագիր արձանագրու-

թյուն, որի վրա ընթերցվում է հետևյալը. «Իվարշա աստծուն Արգիշտին՝ Մենուայի որդին, այս տունը՝ Սուսին կառուցնց»: Այսպիսով, ըստ արձանագրության, Սուսի տաճարը նվիրված էր Իվարշա աստվածությանը: Գ. Մենիքիշվիլու կարծիքով՝ այն կարող էր ունենալ լուվիական ծագում: Ն. Հարությունյանի պնդմամբ՝ Սուսի տաճարը նվիրված է նղել Ազա նրկրի (Արարատյան դաշտ) համապատասխան աստվածությանը:

Արգիշտի I-ի կողմից կառուցվել էր նաև հսկայական դահլիճմառանը: Այն պնդվել է բակի արևելյան կողմում Խալդի տաճարի դիմաց: Երեք կողմից այս դահլիճը շրջապատված էր 15 ընդարձակ սենյակներով: Դեպի դահլիճ տանող միջանցքում գտնվեցին փայտե դրան մնացորդներ: Մոտ 500 մ² տարածք ունեցող դահլիճը նրկայանակի առանցքով ունի հինգ խոշոր սյուներ: Հսկայական խարիսխների վրա պահպանվել է սեպագիր արձանագրություն՝ «Արգիշտին՝ Մենուայի որդին, այս տունը կառուցնց»:

Այս հանդիսավոր դահլիճի պատճերը ծածկված էին աշխարհիկ և պաշտամունքային ոճի որսնանկարներով: Ի տարբերություն Էրեբունիի շատ շինությունների՝ դահլիճն իր գոյության ընթացքում զգայի փոփոխություններ է կրել, որի մասին կան տարբեր կարծիքներ: Ա. Դեմսկայան, Ս. Խոջաշը, Ն. Տրուխտանովան և Կ. Հովհաննիսյանը գտնում են, որ դահլիճն ի սկզբանն ծառայել է իբրև զինու մառան: Կ. Հովհաննիսյանը նշում է նաև, որ պաշտոնական դահլիճը գինու պահեստի է վերածվել արևմենյան ժամանակաշրջանի վերափոխումների ժամանակ: Ս. Եսայանը գտնում է, որ դահլիճի վերակառուցումը տեղի է ունեցել ուրարտական ժամանակաշրջանում: Դահլիճի հատակը հետագայում բարձրացվել է մեկ մետրով, որի տակն են մնացնել կարասներն ու այսն խարիսխները: Կարասների վերին մասների ջարդված բնկորներով ծածկվել է նոր հատակի մակերեսը: Այստեղ պնդված շերտում հանդիպում են աքնմենյան ժամանակաշրջանի խնդեղնեն նյութենք:

Դահլիճից հյուսիս ընկած տարածքը զբաղեցրեն են կայազորին հատկացված շինությունները: Այստեղ պնդվել են ինչպես կացարաններ, այնպես էլ բաց բակեր և զինավարժություններ կատարելու համար նախա-

տնսկած ընդարձակ սրահներ:

Լինելով ուրարտական նահանգապետի նստավայրը՝ Երեքունին միաժամանակ համարվում էր Ազա նրկրի ռազմավարչական կենտրոնը: Որմնանկարներով զարդարված պալատներն ու տաճարները, պատճերին կախած շբնդ բրոնզն վահանները, կապարճները, սաղավարտները վկայում են քաղաքի հզորության և հարստության մասին:

Պաշտամունքային և աշխարհիկ շինությունների հետ մենքտեղ, Երեքունիում մնած տեղ են գրավում տնտեսական նշանակության համալիրները: Այստեղ կառուցվել են հացահատիկի հսկայական շտեմարաններ: Սեպագիր արձանագրությունները հաղորդում են այդպիսի շտեմարանների՝ այսպես կոչված «արի»-ների մասին, որոնք կառուցվել են Արգիշտի I-ի, Սարդուրի II-ի և Ռուսա III-ի կողմից:

Այս շտեմարաններից պեղվել են հինգը, որոնցում հացահատիկի պահպանման համար ստեղծվել էին համապատասխան պայմաններ: Այսպես, շտեմարաններից մեկի հատակը կազմված էր 30 սմ քարձրություն ունեցող քարն շարվածքից: Վերջինիս վրա լցված էր հինգսանտիմենտրանց խճի շնոր, որի մակերեսին կար 5-7 սմ հաստությամբ կտրտված և տոփանված հարդ՝ շտեմարանը խոնավությունից պահպանելու համար:

Բացի հացահատիկի շտեմարաններից, Երեքունիում քացվել են զինու վեց մառան, որ տեղադրվել են մոտ 200 լուշոր կարասներ: Դրանցից մի քանիսը ունեն տարածության մասին սեպագիր և հինքրոգլիֆ նշաններ:

Երեքունիի պեղումներից գտնվել է սակավաթիվ, բայց քավականին հնտարքիր նյութ: Նյութի սակավությունը քացատրվում է նրկու հանգամանքով: Երեքունին, շատ ուրարտական ամրոցների նման, չի կործանվել պետության անկման ժամանակ, այլ հարատենել է նաև աքնմենյան շրջանում՝ դառնալով այդ տերության կարևոր վարչական կենտրոններից մեկը: Բնականաբար, նոր տերենքը ամրոցը զգայի փոփոխության են ննթարկեն, ինչի արդյունքում հին նյութները ոչնչացեն են: Բացի այդ, Զ.ա. VII դ. վարչական կենտրոնը Երեքունիից տեղափոխվում է Թեյշերակին:

Այստեղ են տարբում բոլոր թանկարժեք իրենք՝ վահաններ, սաղավարտներ, ծիասաններ, մնացած սպասք և շատ այլ իրենք:

Գտնված նյութերի մեջ զգալի տեղ է գրավում խնցեղենը, հատկապես կարասները: Դրանք ունեն նեղ հատակ, դեպի վեր լայնացող իրան, փոքր-ինչ նեղացող վիզ և լայն, դուրս մկված շուրթ: Կարասների հատակը պատրաստում էին դուրզի վրա և ապա ձեռքով բարձրացնում իրանը: Կարասները գարդարված են ուղարկյունիններով և նուանկյունիններով, իսկ վզի տակ կրում են տարբեր ուսուցիկ նախշագոտիններ: Ծատ կարասների վրա կան դրանց տարրողության մասին վկայող սեպագիր կամ հինդրոզիֆ արձանագրություններ, որից պարզվում է, որ սրանց տարրողությունը հասնում էր 600-1750 լ: Կային ավելի փոքր կարասներ, որոնց տարրողությունը 400-600 լ էր: Դատնլով որոշ կարասների հատակին պահպանված զորենի, զինու և քնջութիւննացորդներից՝ դրանք օգտագործվում էին ինչպես հեղուկ, այնպես էլ հացահատիկ պահելու համար: Պեղումների ընթացքում գտնվել են մնած թվով միականթ սափորներ: Սրանք ունեն տարբեր չափեր՝ սկսած 0,5-ից, մինչև 5 լ տարրողությամբ: Այս կարմրավուն անոթներից շատերի կանթերին կան տարրողության հինդրոզիֆ նշաններ: Եզակի նմուշներ են սկահակները: Նրանք ունեն կլորավուն իրան, լայն վիզ և դուրս մկված շուրթենք: Գտնվել են նաև լայն փռված իրանով, գլանած ոտքերի վրա կանգնած սկահակներ: Հնտաքրքիր են տարբեր ձևերի թասերը, սկուտենդները և քրնանները: Դրանց տրամագիծը տատանվում է մի քանի սանտիմետրից մինչև կես մետր: Հիշարժան են նաև մոտ կես մետր բարձրություն ունեցող գընդած անոթները: Միջնաբերդի պեղումների ընթացքում գտնվել է նաև դուրզի մնած անիվ, որի կենտրոնում կար անցք՝ առանցքի շուրջը պտտվելու համար:

Էրեբունիի պեղումներից հայտնաբերվել են ոչ մնած թվով տարբեր մնացած իրենք: Երկաթեն իրենքի մեջ հարկ է նշել դաշույնների և սրերի բնկորները, մանգաղների մասերը, օղակածն ծիասանները: Գտնվել են նաև նրկաթեն նետալաքներ: Բացի ուրարտական նետալաքներից, Էրեբունիում ի հայտ են եկել բազմաթիվ սկյութական բրոնզն նետալաքներ: Բրոնզնձուլման մասին են վկայում այստեղ գտնված քարից և կավից

պատրաստված տարբեր ծևերի հալոցները և կաղապարները, որոնք օգտագործվում էին պարզունակ իրեն ծովելու համար: Ամրոցի պնդումներից գտնվել են ամենատարբեր մնտայա զարդեր: Դրանց թվին են պատկանում բրոնզն գլանաձև ուլունքները, ատամնավոր մակերևույթ ունեցող ապարանջանները, մատանիները: Հնտաքրիիր են նաև տարբեր ծևերի կոճակները և ճարմանդները, թիթենից պատրաստված շիգեները (ֆիբուլաներ): Այս խմբի մեջ աչքի է ընկնում ուղղանկյուն շրջանակի մեջ, որի վերին մասը զարդարված է նոաստիճան աշտարակների տեսք ունեցող քիվով: Շրջանակի մեջ պատկերված է դեպի ներքև լայնացող հագուստ կրող մի զինվոր: Վերջինս կրում է լայն գոտի և սրածայր կոշիկներ, զլիսին՝ կլորավուն զլիսարկ, իսկ ուսերից կախված են նրկու ժապավենն: Նա ծախ ծնոքին ունի վահան, իսկ աջով բռնել է նրկար նիզակ: Մարտիկի կողքին կանգնած է խոշոր նոջյուրներով այժ: Բրոնզն ծովածոն նյութերի մեջ առանձնակի տեղ է գրավում զի ոչ մեծ արձանիկը: Կենդանին պատկերված է կանգնած դիրքով լայն տարածված ուղերով (պոչը կոտրված է), խոշոր, կեռ նոջյուրներով, զլուխը պատկերված է քոլոր մանրամասներով: Էրեբունիում գտնված իրենի շարքում առանձնակի տեղ են գրավում ուկրեն իրերը (ուլունքներ, ննտապարներ, այտապաններ, ծիասաններ): Հատկապես հնտաքրիիր են ուկրեն շրատուփերը: Դրանցից մեկը գլանաձև է, արտաքին մակերներ զարդարված է ութ զարդագուտիներով, որոնք նախշազարդված են նուանկյունիներով և շրջանակներով: Մյուս շրատուփն ուղղանկյուն է: Նրա կափարիչը զարդարված է բոլորանախշով և զիգզազած գծերով: Պնդումներից գտնվել են նաև քարից, բրոնզից և ուկրից պատրաստված գլանաձև, կոնաձև և կշռաքարի ձև ունեցող կնիքներ, որոնք զարդարված են ամենատարբեր պատկերներով: Կնիքներից մեկի վրա փորագրված է ծառի տակ կանգնած դիմակով մարդ, վայրի այժ, որի վրա նրկու շուն են հարձակվում: Մեկ այլ կնիքի վրա պատկերված է նոջներավոր կենդանի և անգղաղուծ, իսկ մյուսի վրա՝ շքեղ նոջներու: Բացի ուրարտական կնիքներից, այստեղ գտնվել են նաև ասորենստանյան կնիքներ: Դրանցից մեկի վրա պատ-

կերպած է այծին ննտահարող նրկար մազերով, սեպածև մորուքով մի ննտածից: Բացի կնիքներից, պահպանվել են նաև բազմաթիվ դրոշմներ: Հանդիպում են վազող թռչունների, նղնիկի, նապաստակի, ձիու և արևի պատկերներ:

Ամրոցը իր գոյությունը պահպանել է թերևս մինչ Ք.ա. I դ., ինչի մասին վկայում է այստեղից գտնված Օգոստոս կայսեր դրամը:

Գրականություն: Իսրայելյան 1971; Հովհաննիայան 1973; Օգանեսյան 1961; Դեմսկայ 1968; Օգանեսյան 1968; Օգանեսյան 1968Ե; Եսայան 1969; Խօջաշ և ճր.1979; Օգանեսյան 1980; Hodjasch 1980; Hodjasch 1982; Hodjash 2000


Նկարներ: 14, 36, 39, 40

ԹԵՅՇԵԲՄԱՆԻ (ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ)

ԹԵՅՇԵԲԱՀՆԻ ամրոցը գտնվում է Երևան քաղաքի հարավարևմտյան մասում՝ Հրազդան գետի ձախ ափին: Ամրոցի շուրջը՝ մոտ 150 հա տարածքի վրա, սկսված են այս ուրարտական քաղաքի մնացորդները:

1936 թ. նրկարարան Ա. Դեմյոլիսինը բլրի հարավարևմտյան լանջին գտավ բազալտն քարի մի բներ: Վերջինս կրում էր սնապագիր արձանագրություն, որտեղ կարդացվում էր Արգիշտիի որդի Ռուսայի անունը: Հետախուզական աշխատանքները պարզեցին, որ բլուրը ծածկված է հին շինություններով: Հրդեհից հուշարձանը կարմիր գույն էր ստացել, որի պատճառով մոտակա գյուղի բնակիչները այն կարմիր բլուր էին անվանում: Հաշվի առնելով հետախուզական աշխատանքների արդյունքները՝ 1939 թ. նրենք արշավախումք համատեղ սկսեցին կարմիր բլուրի կանոնավոր պեղումները՝ Պետական Էրմիտաժի (Ը. Պիոտրովսկի), Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի (Կ. Ղաֆարյան) և ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի (Ս. Տեր-Ավետիսյան) կողմից: Հայրենական պատերազմի տարիներին պեղումները ընդհատվեցին և վերսկսվեցին 1945 թ.՝ շարունակվելով մինչև 1971թ., ակադեմիկոս Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ:

Երկարամյա պեղումների շնորհիվ պարզվել, որ հայտնաբերվել է Ռուսա II-ի կողմից Զ.ա. VII դ. առաջին քառորդում կատուցված ամրոց և քաղաք: Ամրոցը, որն ընդգրկում էր բլրի գագաթը, մի մոնումենտալ շինություն է՝ 4 հա մակերեսով: Այն նրկարկանի մի հսկայական շենք է, որի պահպանված նկուղային համալիրները բաղկացած են 150 սենյակներից: Ամրոցի հյուսիսային ու արևելյան ճակատները համընկնում են կտրտված ժայռության վրա: Ամրոցի հյուսիսային մասը պահպանված է մեծ որմնահեղերով, իսկ անկյունները՝ ավելի խոշոր աշտարակներով: Շենքի արևմտյան ճակատը նայում է դեպի ընդարձակ քակը, որն ամրացված է կրկնակի պարիսպներով: Այն ունի նրկու մուտք: «Քիմնական»՝ հարավային մուտքի դարպանները նրկու կողմից պաշտպանված են հսկայական աշտարակներով, իսկ նրկորդ՝ հյուսիսային կողմի մուտքը ավելի փոքր է, որով անցնում էին մարտակառքները և հեծյալները: Այն ունի դուռ՝ հետիւնի հա-



15. Կարմիր բլուր, միջնաբնրդի հարավային և կյուսիսարևելյան մուտքերը
(վերակազմույցուն) (ա), միջնաբնրդի հատակագիծը (բ)

մար: Հզոր պարիսպներն ունեն քարե հիմքներ և հում աղյուսն պատելորոնք ամրացված են աշտարակներով ու որմնահենցերով: Բացի դրանից ամրոցի պաշտպանական համակարգն ուներ որոշակի առանձնահատկություն: Եթեն հակառակորդը ներխուժենք ամրոցի բակը, նա կհանդիպի միջնաբերդի պարիսպներին: Միջնաբերդի մտնելու համար պետք կենտրոնական մուտքի մոտ կառուցված պանդուսով (թերամուտքը բարձրանային դեպի առաջին հարկի տանիքը, որտեղից կարմիր էր անմշապնյա մտնել երկրորդ հարկ):


Պալատական շինությունների և տաճարների պատճերը զարդարվեն որմնանկարներով (որսի տեսարաններ, աստվածների նրբենք, տարրեկենդանիների պատկերներ, արևի սկավառակներ և այլն): Որմնանկաների պահպանված բնկորների վրա նկատվում են նաև այլ զարդարանալիքներ՝ շրջանակների մեջ առնված խաչեր, խաչաձևվող գոտիներ, վարդակներ, թևափոր աստվածների դեմքներ, աղյուծների և թռչունների պատկերներ: Հրդեհի ենտևանքով որմնանկարների գույները փոխվել են Ուսումնասիրությունների շնորհիվ պարզվեց, որ դրանք նկարվել են սպատակ ֆոնի վրա՝ սև, վառ և բաց կարմիր, վարդագույն ներկերով: Բացի որմնանկարներից, այդ շինությունների պատճերը զարդարված են նոր տարրենք գործվածքներով:

Պեղված 150 նկուղային սենյակները ծառայեն են իբրև մթերանու պահեստներ և մառաններ: Երկրորդ հարկը, որտեղ գտնվել են նահանգապետի, բարձրաստիճան գինվորականների և քրմների պալատներ սենյակները, տաճարները, լրիվ ոչնչացնել են:

1946 թ. հաջողվեց որոշել նաև ամրոցի անունը, երբ 11-րդ սենյակը դրան մոտ գտնվեց դրան բրոնզե փականը՝ սենյակիր արձանագրությամբ, որի վրա կարդացվում էր՝ «Շուսայի՝ Արգիշտիի որդու, Թնյշերսի քաղաքի ամրոց»: Մինչ այդ գտնվել էր նաև Թնյշերա աստվածության բրոնզե արձանիկը:

1949-1955 թթ. պեղումների ժամանակ միջնաբերդում բացվեցի յոթ մառաններ: Դրանցում հայտնաբերվեց 400 կարաս՝ մոտ 4500000 ընդհանուր տարրությամբ, գնտնի մեջ կիսով չափ թաղված: Բաց

Միջնաբնրդից, կարասներ գտնվել են նաև քաղաքի մի շարք տներում: Գտնված խաղողի կորիզները և չամիչի մնացորդները հնարավորություն են տալիս պնդելու, որ այստեղ աճել են Ուկենատ (Խարջի), Մախալի, Արարատ (Հաշաբաշ), Քիշմիշ (Սազելի, Երևան), ինչպես նաև սև խաղողի մի քանի տեսակներ:



16. Կարմիր բլուր, N 25 և 28 գինու մատանների հատակագծեր (ա, բ)

Միջնաբնրդի նրկորդ հարկում բացվեց մի այլ մեծ և առանց տանիքի մառան (50-րդը): Այստեղ տեղադրված են նոր մոտ 150 կարասներ, որոնցից պահպանվել էին միայն հատակները: Գինին պահպել է

բացօթյա պայմաններում, ինչի հետևանքով ստացվել է շատ բարձր որակի խմիչք: Ընդ որում, այս չափերի գինի ստանալու համար անհրաժեշտ էր մշակն 300-350 հա խաղողի այգիներ:

Թեյշեբահնիի բնակիչները, բացի խաղողի մշակումից, զբաղվել են նաև այգեգործությամբ և բանջարանոցային կուլտուրաների մշակմամբ, որի մասին վկայում են ամրոցի տարբեր սենյակներում գտնված սալորի, նռան, խնձորի, բալի, ընկույզի և ձմեռուկի սնթամբներն ու կորիզները, պտուղների ածխացած մնացորդները: Զարգացած էր նաև երկրագործությունը: Պեղումների ժամանակ հայտնաբենրվել են մեծ թվով շտեմարաններ: Միայն ամրոցի հարավային մասում պեղվել են ավելի քան 10 խոշոր շտեմարաններ: Բներքը լցնելուց առաջ դրսները փակվում և կնքվում էին, իսկ հացահատիկը լցվում և հանվում էր տանիքներում արված հատուկ անցքերից: Շտեմարաններում պահպում էր ավելի քան 750 տոննա հացահատիկ: Գտնվել են տափակ և մանրահատիկ ցործն, գարի և կործկ:

Գարին և կործկը լայնորեն օգտագործվում էին նաև զարնջուր պատրաստելու համար: Դրա մասին են վկայում ամրոցում գտնված սիգարածն անոթները, որոնց մեջ պահպանվել էին զարու և կործկի մնացորդներ: 1958 թ. ամրոցի նկուղային մասում պեղվեց զարնջորի պատրաստման շինությունը: Արհեստանոցում գտնվեցին տուֆից պատրաստված խոշոր տաշտեր, որոնց մեջ թրջվում էր զարին կամ կործկը: Օգտագործված ջուրն ամրոցից դուրս էր բնրվում քարե խողովակներու: Հայտնաբենրվեց ավելի քան 40 անոյթ՝ զարնջուր պահնլու համար:

Թեյշեբահնիում պեղվել է երեք սենյակից բարկացած մեծ արհեստանոց-ձիթհան՝ քնջութիւններ ստանալու համար: Գտնվել են տուֆն խոշոր տաշտ, խողովակ, փայտե մամլիչ: Սենյակի հատակը ծածկված էր վառված քնջութիւնուպով և աղանձով՝ 25-30 սմ հաստությամբ:

Կարմիր բլուրի պեղումների ժամանակ գտնվել են տարբեր կենդանիների ոսկորներ: Վենդանաբան Ա. Դալը այդ ոսկորները բաժանում է երեք խմբի. 1. կենդանիների ամբողջական կմախրներ, որոնք միջնաբների հրդենի ժամանակ մնացել են փլված ծածկերի տակ, 2. ոսկորներ, որոնք օգտագործված սննդի մնացորդներ են,՝ 3. զոհաբերությունների հե-

տևանքով խիստ այրված ոսկորներ: Գտնվել են նաև ավանակների, ջորի-ների, այծերի, խոզերի, ձիերի, վայրի կենդանիների ոսկորներ: 26-րդ սննյակի պեղումներից ի հայտ եկան 35000 խոշոր և մանր նղջնրավոր անասունների ոսկորներ, որոնք կուտակվել էին ամրոցի մեկդարյա գոյության ընթացքում: Այս հսկայական նյութերի մեջ բացակայում էին խոշոր նղջնրավոր անասունների գլխի և ստորին վնրջույթների ոսկորները: Ինչ վնրաբերում է մանր նղջնրավոր անասունների ոսկորներին, ապա սրանցից շատերի իրանի վնրին մասնը, գլուխը և նոջյուրները հավաքվել են ամրոցում գտնվող տաճարներում, տարբեր պահենստասենյակներում, ինչը վկայում է նրանց գոհաբերությունների մասին: Կարմիր բլուրի արհենստանոցներում գտնվել են մեծ քանակությամբ իլիկների ոսկրեն և քարեն գլխիկներ, ջուղիակի դազգահների բազմաթիվ նրկաթեն ծանրոցներ:

1952 թ. այսպիսի մի մեծ արհենստանոցում գտնվեցին ավելի քան 300 նրկաթեն տակառածև ծանրոցներ, որոնց մեջ պահպանվել էին գործվածքների և թնդերի հետքեր: Կարմիր բլուրում գտնված գործվածքները հիմնականում բրդից էին:

Կարմիր բլուրում զարգացած էր կաշնգործությունը: Այդ մասին է վկայում 1955 թ. գտնված կավեն սալիկի արձանագրությունը, ուր խոսվում է Թեյշեբախինի ուղարկված 224 հորթի, 172 ոչխարի և 18 այծի կաշվից պատրաստուկների մասին:

Անասնապահական մթնքքների վնրամշակման մասին վկայում են քազմաթիվ խնոցիների բնկորները: 1970-1971 թթ. պեղումների ժամանակ Թեյշեբախինիում բացվեցին պանրագործական նրեք սննյակներ՝ կաթ և ջուր պահենլու բազմաթիվ մեծ կարասներով և խոշոր կավեն չաննրով հանդերձ: Սննյակներից մեկում գտնվեց խոշոր քարեն չան, որի մեջ, ըստ երևույթին, քամվել էր պանիրը, իսկ առաջացած շիճուկը ամրացից դուրս էր հանվել չանին միացած քարեն խողովակներով:

Բացի նրկրագործական և անասնապահական մթնքքների վնրամշակումից, Կարմիր բլուրում զարգացած էին տարբեր արհենստներ: Առանձնակի ծաղկում էր մնտաղագործությունը: Գտնվել են մանգաղներ, դանակներ, նղաններ, որոնք, որպես կանոն, նրկժանի կամ նռա-

ժամի են: Երկաթեն գործիքների թվին են պատկանում նաև մեծ քանակությամբ տարբեր սնապածներ և տափակ կացինները, լայն և նեղ դրները, սղոցները, բահենրը, ուրագները և այլն:

Երկաթից են պատրաստվել նաև օղակածները, զամենը, խողովակները: Կարմիր բլուրում բազմազան են երկաթեն զենքի տեսակները: Դրանց թվին են պատկանում երկսայր դաշույնները, որոնք ունեն միակոփ դաստակներ: Այստեղ գտնվել են նաև երկաթեն երկսայր սրեր: Մրանց դաստակները զարդարված են բրոնզե օղակներով: Գտնվել են նաև այդ սրերի կաշվեն պատյանների բրոնզե ծայրակալները: Բազմաթիվ են նաև նետասլաքները, որոնք հայտնաբերվել են բրոնզե կապարճներում: Դրանք բաժանվում են երկու խմբի՝ նշածն և տերևածն գլխիկներով, երկար՝ քառակող կամ կլոր պոչուկներով: Հայտնաբերվել են նաև բազմաթիվ տերևածն խողովակակոթառնիզակներ և նեղ, երկար սայրով մարտական կացիններ:

Ի հայտ են նկել նաև հսկայական թվով բրոնզե իրենք, որոնց զգալի մասը, անկապած, բնրված է եղել Երեբունիից և այլ հուշարձաններից, ինչի մասին վկայում են Ձ.ա. VIII դ. թագավորների արձանագրությունները: Քաղաքում և ամրոցում հայտնաբերվել են բազմաթիվ հալոցներ, կաղապարներ, հնոցներ, 20-25 սմ երկարություն ունեցող բրոնզե ծուլակտորներ: Կաղապարներում ծուլվում էին կարճ նիզակները, տերևածն և նշածն նետասլաքները, գուրգերը, զրահի մասերը, մարտական վահանների ումբոնները, հասարակ բրոնզե գոտիները և այլ զենքեր: Տեղում էին ծուլվում նաև շքնի և պարզունակ զարդեր՝ օճագլուխ ապարանջանները, մատանիները, օղները, ճարմանդները, ականջօները, տարբեր ձևերի շքանդներ՝ քանդակված թոշնի ֆիգուրներով: Արհենստանոցների արտադրանք էին աթոռների, սննդանների ոտքերը զարդարող պարզունակ գլանածներ, ցլների և առյուծների ոտքերի ձևեր ունեցող շքնի ծայրակալները, հասարակ խոհանոցային կաթսաները, թասերը և կենցաղային այլ առարկաներ:

Կարմիր բլուրը այն բացառիկ հուշարձաններից է, որտեղ պահպանվել են հսկայական թվով բարձրարվեստ բրոնզե իրենք: Դրանց մեջ

աշքի են ընկնում առյուծների և զլերի պատկերներով զարդարված վահանները, պաշտամունքային և մարտական տեսարաններով նախշագարդ սաղավարտները, ռազմական պատկերներով կապարձները, բրոնզի արձանները, որոնցից ամենաշքնդր Թեյշեբա աստծո արձանն է, շքեղ բրոնզը:


Թեյշեբաինիում խիստ զարգացած էր խնջնգործությունը: Խնջնգործ վարպետները կավից պատրաստում էին տարբեր առարկաներ՝ արձանիկներ, սափորիկներ, կարասներ, ձագարներ, ծիթաճրագներ, գարնչուր մշակներ և պահենլու անոթներ, գավաթ-ծխամաններ, հաց թխներ և բույսեր տապակներ սաջ-տապակարաններ և, վնրջապես, բարձր արվեստով և շքնդրությամբ պատրաստված սպասք: Պաշտամունքային, ծիսական արարողությունների ժամանակ լայնորեն օգտագործվում էին ճշորավոր կոշիկների ծև ունեցող կավեն գունազարդ գավաթները, միքանի փողանի անոթները (Կերնոսներ), շքեղ գավաթ-ծխամանները, «ասկոս» կոչվող թռչնաձև անոթները և այլն: Ընդ որում, կավանոթներ պատրաստելիս բրուտ վարպետները հաճախակի ընդօրինակում էին մնտադն անոթների ձևերը:

Թեյշեբաինի նկուղներում բացվել են երեք ընդարձակ սենյակներ, որոնք նդեմ են խնջնենի պահենստներ: Դրանցից միայն մեկում գտնվել են 2-6 լ տարրողությամբ 1036 միականք սափորներ, մեծ քանակությամբ թասեր, ծիթաճրագներ և ավելի քան 200 տարբեր ձևերի անոթներ (կճուծներ, գավաթներ, բրնձաններ): Խնջանոթների թվում մեծ տեղ են գրավում կարասները, որոնք օգտագործվում էին գինի և հացահատիկ պահենլու համար:

Կարմիր բլուրում գտնված խնջնենը իր ձևով և նախշազարդումով բաժանվում է մի քանի խմբի: Առաջին խմբին են պատկանում կարմիր անգորապատ, լավ փայլնցված անոթները: Խնջնենին երկրորդ՝ ոչ մեծ խումբն են կազմում գունազարդ անոթները: Երրորդ խումբը կազմում են սև փայլնցված անոթները: Այս խմբի նզակի նմուշներից է խոշոր չափի սև-փայլնցված անոթը: Այն ունի 50 սմ բարձրություն, որի ուսերին կան

ցլերի նրեք գլուխների քանդակներ:

Բացի խնգանոթներից, Կարմիր բլուրի պնդումներից գտնվել են նաև կտու քանդակներ: Դրանց թվին են պատկանում 25-րդ պահեստային սրահում գտնված բազմագույն արձանիկները: Դրանք պատկերում են ծնկնակերպ, մորուքավոր մարդկային ֆիգուրներ, որոնք առաջ մնենած աջ ձեռքին պահում են նիզակներ կամ ճյուղներ: 28-րդ պահեստային սենյակի արձանները փոքր-ինչ կորված են: Նրանք ունեն կարիճի պոչ, դեմքները ներկված են սպիտակ, աշքերը՝ կարմիր, մորուքը և մազերը՝ գորշ, իսկ գլխարկները՝ վառ կապույտ գույնով: Կարմիր բլուրի միջնաբների քակում գտնվել են ցլի և ծիու արձաններ:



17. Կարմիր բլուր, կացարաններից մնկը

Կարմիր բլուրի պնդումները ցույց են տալիս, որ այստեղ զարգացած է նղել նաև քարի մշակումը: Ամրոցի պարիսպների և սենյակների հիմքերը շարվում են ճնորված բազալտից, որոնց գնտնավարիսխների բարձրությունը հասնում է 2 մ, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 4-5 մ: Քարե-

շարվածքների վրա պատճերը կառուցում էին հում աղյուսից, որոնք պատրաստվում էին հիմնականում ամոռանը: Կավը դարմանի հետ խառնելուց հետո կաղապարներում լցնելով՝ ստանում էին անհրաժեշտ չափի (51,8x35x14 սմ, 51,8x51x14 սմ, 35x35x14 սմ) աղյուսներ: Հարկ է նշել, որ միայն միջնաբնրդի կառուցման ընթացքում օգտագործվել են մի քանի միլիոն աղյուսներ, ինչը պահանջում էր զգալի չափով ժամանակ և աշխատութ: Շինարարության ընթացքում, բացի հիմքից և գնտնախարիսխներից, նրկրորդ հարկի տանիքի և առաջին հարկի հարթակների վրա տեղադրում էին հղկված բազալտն քիվնը: Քիվնը շարված էին լավ տաշված բազալտն խոշոր քարն ուղղանկյուն բլոկներով, իսկ հատուկ հարթակների վրա տեղադրված էին ոչ մեծ, նույն քարներից շարված աշտարակներ: Այս շինությունների արտաքին պատճերը զարդարված էին բազմաթիվ խոշոր վահաններով, սաղավարտներով, կապարճներով:

Տարբեր քարտառսակներից պատրաստվում էին տաշտեր, կիսախողովակներ, տարբեր ձևի աղորիքներ, սանդեր ու սանդկոթենր, կոպիտ և լավ հղկված թասեր, սրոցաքարեր և այլն: Ներմուծված կամ տեղում պատրաստված քարն իրենի թվին կարելի է դասել կենդանիների գլուխները (նրախնները բաց աղյուծներ, գրիֆոններ, ծիեր), որոնք հայտնի են Թոփրաք քաղենում, Կարմիր բլուրում և Ալթըն թենինում: 1955 թ. Կարմիր բլուրում գտնվեցին ճարպաքարից պատրաստված նրկու շքատուփներ: Դրանցից մեկը գդալածն է, նլուստներով հարդարված, իսկ կափարիչին փորագրված են կենաց ծագի նրկու կողմներում կանգնած թևավոր ոգիների պատկերներ, որոնք ունեն թռչնի գլուխներ: Ծառի վրա պատկերված է արևի սկավառակը: Կափարիչի նլուստի վրա պահպանվել է արակած կենդանու պատկեր: Կարմիր բլուրում գտնված նրկրորդ քարն տուփն ունի ոչ քարձր զլանածն անոթի տեսք: Նրա կողենը զարդարված են որսի տեսարաններով, ուր պատկերված են հեծյալ, կանգնած զինվոր, ծնկաչոր աղեղնավոր, այծ, աղյուծ, թռչուն և նղջնրու: Կափարիչի վրա կան նստած աղյուծի, զլի և նղջնրվի պատկերներ:

Կարմիր բլուրում գտնվել են քարն բազմաթիվ կոնածն և զլանածն կնիքներ, որոնց վրա փորագրված են մարդկանց, թռչունների, աղյուծն-

րի, ձիերի, այծերի, տատղերի կամ կիսալուսինների առասպելական պատկերներ:

Թնյշերահիում տարածված արհեստներից էր փայտամշակումը: Ամրոցի և քաղաքի շենքերի կատուցողների ամենադժվարին խնդիրներից մեկն Արարատյան դաշտում ծածկի համար անհրաժեշտ փայտի հայթայթումն էր: Անտառանյութը, հավանաբար, բնրվում էր Սարիդամիշի և Կաղզվանի անտառներից: Փայտի մնացորդները վկայում են, որ այս տեղում օգտագործվել են սոճի, բարդի, կաղնի և հաճարենի: Ստացված զերաններով ծածկվում էին տանիքները, տախտակներից պատրաստվում էին պատուհաններ և դրներ: Փայտը լայնորեն օգտագործվում էր սայլերի, մարտակառների, գութանի, արորի և այլ գյուղատնտեսական գործիքների պատրաստման համար: Բացի ատաղծագործներից, կային նաև կահույք, որոնք զբաղվում էին կահույք և այլ իրեն պատրաստելով: Գտնվել են կահույքի մնացորդներ, որոնց մի մասը զարդարվել է ոսկրով և հարդիքներով, գդալներ, շերեփներ, սափորներ: Պեղվել են քազմաթիվ մնացորդներ, ուրագներ, դրւեր, սղոցներ, որոնք վկայում են զարգացած փայտամշակման մասին:

Արվեստի փայլուն նմուշներ են վահանները և սաղավարտները: Արգիշտի I-ի արձանագրությամբ բրոնզն վահանի (որը պատրաստված է նոր Էրեբունի քաղաքի համար) կենտրոնական կոնաձև նլուստի վրա նրեր շարքներով պատկերված են աշյունների և ցլերի պատկերներ: Ստորին գոտում կա 28 առյուծ, միջին գոտում՝ 20 ցուլ, իսկ վերին՝ ննդացող մատում՝ 8 առյուծ: Ելուստի վերին հատվածը զարդարված է 38 ծաղկաթենրթներից կազմված վարդյակով: Նույն Արգիշտի I-ի արձանագրությամբ բրոնզն սաղավարտի ճակատային մասը զարդարված է 11 կենաց ծառների պատկերներով, որոնք տնդադրված են նրկու շարքով: Շարքներում ծառների կողմնաբանում, մենքը նույնականացնեն պատկերները: Առաջինները պատկերված են նոշերավոր սաղավարտներով և թևնրով զգեստներով: Ծառերի մոտ կանգնած մյուս պատվածները, ի տարբերություն նախորդների, ունեն մորուքներ և խոշոր թևներ: Բոլորի աջ ձնոքները վեր են բարձրացված, իսկ ձախում փոքրիկ դույլեր կան: Ծառերի մասին առաջին հայտնաբերությունը կատարվել է 1936 թվականի Հայաստանի պատմագիտության ազգային թանգարանում:

որ շրջագծված են առյուծի գլուխներ ունեցող չորսական վիշտապօծերի պատկերներով: Սաղավարտի քունքի և ծոծրակի մասերը զարդարված են մարտակառքների և հեծյալների նրկշարք պատկերներով:

Թեյշեբահնիի միջնաբերդից դուրս՝ դեպի հարավ և արևմուտք գտնվող շուրջ 150 հա տարածքով բնակատնիի պեղումները իրականացրել են Վ. Սորոկինը, Կ. Հովհաննիսյանը և Հ. Մարտիրոսյանը: Այն կառուցված էր մեկ միասնական նախագծով, հատակ ընդգծված իրապարակով, փողոցներով և տարբեր թաղամասերով: Քաղաքը պաշտպանված էր հզոր, նրեր մետր հաստությամբ պարիսամներով և որմնահեղեցներով: Քաղաքի պեղված առանձին թաղամասերը վնրականգնում են նրա ընդհանուր պատկերը:

Հատուկ նախագծով կառուցվել են քաղաքի կենտրոնական թաղամասի շինությունները: Այստեղ բացվել են երեք փողոցներ: Դրանցից մեկը, որն ունի 5,57 մ լայնություն, սկիզբ առնելով միջնաբերդի առջև ընկած լայն իրապարակից, ճգփում է մոտ 200 մ դեպի արևմուտք՝ Խլդարունի (Քրագդան) գետի ուղղությամբ: Մյուս փողոցը կառուցված էր առաջինին գուգահենը: Երրորդ փողոցը՝ 9,46 մ լայնությամբ, հատում էր նշված երկու փողոցները:

1948-1950 թթ. պեղումների ընթացքում բացվեցին գլխավոր փողոցի երկու կողմերում ընկած թաղամասերը՝ բաղկացած իրար հարող մի քանի շենքերից, սենյակներից և մեկ բակից: Այս կացարաններում չեն գտնվել սննդամթենրի պաշտպաններ և կենդանիներ պահենլու համար առանձին շինություններ: Այստեղ բնակվել են զինվորներ, որոնք չեն ունեցել սնվական տնտեսություն և ապրել են պետության հատկացումներով:

1956 թ. գլխավոր փողոցի հարավային կողմում բացվեց մի մեծ շինություն, որն ուներ 400 մ² մակերեսով բնակելի և ընդարձակ տնտեսական կառույցներ: Բնակելի երեք սենյակները կառուցված էին գլխավոր փողոցին գուգահենո, նրանց կցված էին տնտեսական շինություններ և բակ: Տընտեսական սենյակներում բացվեցին խոշոր կարասներ, սիգարածն անորխներ և բազմաթիվ թասեր: Սենյակի հատակին պեղվեցին հացահատիկի հորենք: Բացի պահենստային սենյակներից, շենքը ուներ գոմ, որ կա-

րելի էր պահել 15-18 խոշոր նողերակոր անաստն: Ինչպես երևում է, այս տեղ բնակվել է քաղաքի հարուստ բնակիչներից մեկը:

Հնտագա պեղումներից պարզվեց, որ այս հարուստ տնտեսություն ունեցող տունը իր բնույթով միակը չէ: Նրանցից ոչ հնուու բացվեցին նրեք առանձին շինություններ, որոնք իրենց առանձնահատկություններով նման էին «հարուստ ուրարտացու» տաճք՝ տարբերվելով միայն հատակագծով և սննյակների քանակով: Այս շինություններում գտնվել են քարե օջախներ, տանիքները պահող սյուների խարիսխներ, քազալտե խոշոր աղորիքներ, տարբեր չափի կարասներ և խնցեղեն: Գտնվել են նաև շան, խոյի, խոզի, այծի, ձիու ոսկորներ: Ընդեմք հետնամասում հայտնաբերվել են պահենստային շինություններ:

Այս ունեոր բնակիչների թաղամասից ոչ հնուու բացվեցին մի քանի այլ շենքներ, որոնք իրենց նախագծով և շինարարական տեխնիկայով խիստ տարբերվում էին վնրոհիշյալ կառույցներից: Դրանց պատճերը շարված էին մանր գնտաքարենրով: Այստեղ ապրել են չքավոր խավերը:

Հնտաքրքիր ճարտարապետական հուշարձաններ հայտնաբերվել ցին քաղաքի հարավարևմտյան թաղամասում, որը մյուսներից բաժանվում էր պարսպով և ոչ խորը ծորակով: Այստեղ նկատվել են վեց խոշոր շինությունների հետքներ, որոնք խիստ տարբերվում էին քաղաքի մյուս շինություններից: Այդ շինություններից պեղվել է միայն մեկ խոշոր շենք՝ 2000 մ² ընդհանուր տարածքով: Նրա արտաքին խոլ պատճերը զարդարված էին որմնահենցներով և անկյունային փորք աշտարակներով: Վ. Մարտիրոսյանը նշել է, որ այս կառույցը, ինչպես և ամբողջ թաղամասը, պատկանել է քաղաքի ուղղամամաշական քարձր խավին:

Գրականություն: Պիոտրովսկի 1950; Պիոտրովսկի 1952; Պիոտրովսկի 1955; Օգանեսյան 1955; Սորոկին 1958; Պիոտրովսկի 1959; Մարտիրոսյան 1961; Մարտիրոսյան 1964; Եսայն 1969; Պիոտրովսկի 1970; Ռյանցիլեյն 1975; Salvini 1979

Նկարներ: 15, 16, 17, 31, 34


ԱՐԳԻՇՏԻԽԻՆԻԼԻ (ԱՐՄԱՎԻՐ)

Արգիշտիխինիլի ուսումնասիրության պատմությունը սերտորեն կապված է հնտագայում նրա տարածքում կառուցված Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արմավիրի հետ։ Մ. Խորենացին հաղորդում է Հայկի թոռան՝ Արամայիսի կողմից Արմավիրի կառուցման մասին։ «Արամայիսը իր բնակչության համար տուն է շինում գնտի ափին՝ մի բլրի վրա, և իր անունով կոչում է Արմավիր, իսկ գետը կոչում է Երասխ՝ իր թոռան՝ Երաստի անունով»։

Խորենացու մոտ պահպանված ավանդությունները Արմավիրի մասին հնտաքրքրություն են առաջացնում նվրոպական գիտնականների մոտ։ Արդեն XIX դ. առաջին կեսին Արմավիրով հնտաքրքրվում են Կնրապորտենրը, Ժ. Սեն-Մարտենը, իսկ ավելի ուշ՝ Ա. Շանտրը։ Արմավիրի ուսումնասիրության գործում մեծ դեր են խաղացել նաև Էջմիածնի վանական գիտնականները։ Նրանց հետ է կապված այստեղ գտնված սնապագիր արձանագրությունների հրատարակումը և Արգիշտիխինիլիի հայտնագործումը։ Այդ գործում հատկապն մեծ է Մ. Սմբատյանի դերը, որը, հավաքելով սնապագիր արձանագրությունները, հրատարակում էր դրանց պատճենները։

Այս նյութենքը, ինչպես նաև Խորենացու հիշատակությունը Արմավիրում կառուցված հնեանոսական տաճարների և նրանց մեջ կանգնեցված հոյակապ արձանների մասին, հիմք ծառայեցին, որպեսզի Թիֆլիսում կայացած 5-րդ հնագիտական համագումարի համար նյութենք նախապատրաստելու նպատակով 1880 թ. հնտախուզական պեղումներ կատարվեն Արմավիրում։ Արշավախումբը, Ա. Երիցյանի և Ա. Ռուբոսյանի ղավակությամբ, հնտագուտենց տարբեր ժամանակներին վնրաբնրող մի քանի դամբարաններ և մասնակի պեղումներ կատարեց բլրի գագաթին ու ստորոտին։

Արգիշտիխինիլի-Արմավիրի պեղումները վնրսկավեցին միայն 1962 թ.։ Նոր Արմավիրում հ. Մարտիրոսյանը սկսեց ուսումնասիրն Արգիշտիխինիլին, իսկ Արմավիրում Բ. Առաքելյանը հնտագուտում էր ինը Արմավիրը։ Հնտագայում արշավախումբը ղեկավարեց Գ. Տիրազյանը։



18. Արգիշտիխնիլի, միջնաբնորդի վնրակազմությունը (ա), ընդհանուր հատակագիծը (բ),
միջնաբնորդի հատակագիծը (գ), սիսուացիոն հատակագիծը (դ)

Միջնաբերդի կառուցղական հատկանիշների և տեղանքի ծավալատարածական առանձնահատկությունից նկատվում է կացարանները բաժանվում են միմյանց հաղորդակից երեք համալիրների միջև: Միջնաբերդի առաջին համալիրը ներկայացված է վեց շինություններով (N 1, 2, 3, 4, 11, 21), որոնք ընկած են միջնաբերդի հարավարևմտյան հատվածում: Երկրորդ համալիրը պեղված է 1-3-րդ համալիրների միջև՝ հյուսիսարավ կողմնորոշումով, և ներկայացված է 8 շինություններով (N 5, 6, 7, 8, 9, 10, 19, 20): Երկրորդ համալիրը տեղադրված է հյուսիսային հատվածում և ներկայացված է N 12, 13, 14, 15, 16, 17, 18 կացարաններով:

Պեղումներից գտնվել են մետաղն և քարն առարկաներ, խնգեղեն:

Գրականություն: Ավետիսյան 1996; Ավետիսյան 2001; Ավետիսյան 2002; Ավետիսյան, Ավետիսյան 2006; Օգանեսյան 1958

Նկարներ: 25, 26

ԱՅԼ ԱՄՐՈՑՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

Արծկե (Աղիլջեվազ) եւ Քեֆ քալեսի (Burney, Lawson 1958; Bilgiç, Öğün 1964; Bilgiç, Öğün 1965; Bilgiç, Öğün 1967; Bilgiç, Öğün 1967b; Öğün 1967; Işık 1984; Salvini 2004)

Բասկամ (Kleiss 1973b; Kleiss 1974; Kleiss 1975; Kleiss 1976; Kleiss 1979; Kleiss 1979c; Kleiss 1988b; Kleiss 1996)

Չիլքայա (Çilingiroğlu 1987; Çilingiroğlu 1988b; Çilingiroğlu 1991)

Գիյիմլի (Հիրկանիս) (Erzen 1973; Erzen 1974)

Պաթմոս (Balkan 1961; Orthmann 1966)

Զեռնակի թեփե (Nylander 1966; Sevin 1975)


Մուսասիր (Boehmer 1973; Boehmer, Fenner 1973)

Արամոս (Ավետիսյան 2001; Ավետիսյան 2005; Avetisyan, Allinger-Csollich 2006)


Դովրի (Հմայակյան 2005)

Նկարներ: 27, 28, 29, 30, 31, 32


Լուսանկարներ: 29-30




27. Բաստամ, ամրոցի բնդիանուր հատակագիծը (ա),
մուտքի հատակագիծը (բ), սյունազարդ դահլիճի համալիրը (գ)



28. Բաստամ, հյուսիսային շինությունը



29. Ազնավոր թնդն, ամրոցի հատակագիծը




30. Ջննակի թնգին, տան հատակագիծ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ճԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱԽԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերոհիշյալ, ինչպես նաև մի շաբթ այլ հուշարձանների հնագիտական նյութը հնարավորություն է ընծառում համակարգելու մեր գիտելիքները ուրարտական ճարտարապետության, քաղաքաշինական աշխարհացրի, քնակարանային, մոնումենտալ, վիմափոր, ջրամատակարաման կառույցների և շինարարական տեխնիկայի առանձնահատկությունների մասին։ Այդ առանձնահատկությունները տարիների ընթացքում ընդհանրացրել են հիմնականում երեք մասնագետներ՝ Կ. Հովհաննիայանը, Վ. Զլայսը և Տ. Ֆորբսը։

Քաղաքաշինություն: Ուրարտական քաղաքները հիմնականում փլոված էին քարծր բլուրների ստորոտներում, որոնց գագաթներին վեր էին խոյանում նրանց պարսպապատ միջնաբերդները։ Միջնաբերդի իշխող քարծր դիրքը իրենց առաջ փոփած հարթավայրերի նկատմամբ նպատակ ուներ տեսադաշտում պահելու այն ճանապարհները, որոնք տանում էին դեպի տվյալ քնակավայրը։ Մյուս կողմից, բլուրների գագաթները պարփակող պարիսպները քնակավայրերի պաշտպանության երաշխիքն էին։ Բներդների հնտագա հզորացումն արտահայտվում էր մի քանի շաբթ արտաքին պաշտպանական պարիսպների կառուցումով։

Ուրարտական քաղաքները ուրարտական և տարենստանյան սեպագիր արձանագրություններում նշվում են ՈՒՐՈ գաղափարագրով (ուրարտ. patari)։ ՈՒՐՈ-ն նշանակում էր «քնակավայր»՝ անկախ նրա մեծությունից և բնույթից։ Միայն այսպես կարենի է հասկանալ ուրարտական արքաների կողմից մեծաքանակ ՈՒՐՈ-ների գրավման հանգամանքը։ Այսպես, օրինակ, Սարդուրի II-ը հաղորդում է, որ ինքը մեկ օրում Իգանի նրկրում գրավել է 200 քաղաք և 35 բներ։ Ինչպես նրեւում է նշված թվերից, ավելի քիչ թվով բներներ էին գրավվում, քան քաղաքներ, հետևապես միշտ չեն, որ քաղաքներն ունեին բներդներ։ Բներդները կազմում էին այն միջուկը, որոնց շուրջը փոփած էին քաղաքները։ Այդ հաստատվում է քազմաթիվ բներդների, մասնավորապես Անիաշտանիա բներդի օրինակով, որն իր շուրջն ուներ 17 քաղաք։



31. Ուրարտական ամրոցների հատակագծներ, Զիշ քալեսի (Ուրմիայի մոտ) (ա), Ջնակի թնձն (բ), Խոչնախնի, հարավային դարպանների վերակազմությունը (գ), Դավալու (դ), Բաստամ (Ե), Արգիշտիխնիլի, արևմտյան միջնաբնողը (կ), Արագած (լ)

Սակայն, բացի քաղաքներից, նրանց տարածքում էին գտնվում նաև ոտզման ջրանցքներ, մշակվող դաշտներ, այգիներ, անտառներ, որոնք կազմում էին գյուղատնտեսական խոշոր միավորումներ: Նրանցում ամրացված էր միայն կենտրոնական քաղաքն իր բնրդով (E.GAL): Այդ ամբողջ տարածքը կոչվում էր, ըստ նրեւոյթին, ասսու, որը հայերեն մոտավորապես կարելի է թարգմանել որպես «մարզ»: Նման միավորումն արտահայտում էր թերևս տնտեսական մի ամբողջ համակարգ: Տարածական առումով այն պատկերում էր կենտրոնական ամրացված քաղաք՝ իր E.GAL-ով, որի շրջակա տարածքներում փոփած էին URU-ները կամ գյուղական այն միավորումները, որոնք կազմում էին այդ համակարգի տընտեսական հիմքը:

Միայն այդ կենտրոնական քաղաքների մակերեսները, պնդումների տվյալների համաձայն, կազմում էին 100-200 հա: Արտակարգ մեծ չափերի էր հասնել Արգիշտիխինիին՝ 400-500 հա տարածքով, որի սահմանների մեջ են մտնել նաև քաղաքի մոտակա գյուղական բնակավայրերը:

Քաղաքների տարածքները արտահայտում են նաև քաղաքների ազգաբնակչության քանակը: Թեյշեբախնին, օրինակ, իր կառուցապատման խտությամբ, նրան այն համեմատելու լինենք համանման քաղաքների հետ, պնդոք է ունենար մոտ 20 հազար բնակիչ:

Ուրարտական քաղաքների պատմական կազմավորումը, մասնավորապես նրանց տեղի ընտրության տեսակենտիզ, համաձայն ասորենստանյան աղբյուրների, պայմանավորված էր քաղաքների այնպիսի փոխադարձ դասավորությամբ, որոնք իրար առնչվում էին տեսողական կապով: Ռազմական կամ այլ վտանգի դեպքում քաղաքների բարձր բլուրների վրա գտնվող միջնաբերդներից, որոնք պահպանում էին տեսողական այդ կապը, վտանգն ազդարարվում էր խարույկներից քարձրացող կրակի պայմանական նշաններով, որով փոխադարձաբար համաձայնցվում էին քաղաքների անհրաժեշտ ռազմական գործողությունները: Սարդուրի Ռ-ի մի արձանագրությունից երևում է, որ ուրարտական ամրացված վայրերը, այդ ձևով կապակցվելով իրար հետ, կազմում էին մեկ շղթայածն համակարգ: Այսպիսով, ուրարտական քաղաքաշինական ծրագիրը թելա-


դրվում ու պայմանագրվում էր հիմնադրվող քաղաքների ոչ միայն տարածքների արժեքագորման տնտեսական հանգամանքներով, այլև տվյալ տարածքի համակարգում նրանց ռազմավարական դիրքով:

Սակայն ամեն դնապքում չէ, որ հնարավոր էր քաղաքների միջև տնտեսական կապ ստեղծել: Նման դնաքների համար, որպես կապակցող անհրաժեշտ օղակներ քաղաքների միջև, վեր էին խոյանում աշտարակածներ՝ սահմանափակ ննդրին տարածությամբ, ինչպիսիք էին Ազգաք թենքեն (Իրան), կամ սովորական աշտարակներ, որոնք պատկերված են ուրարտական արվեստի տարրենք նմուշների վրա՝ նրանց վեր խոյացող և կրակ պատկերող նիզականման նշանով:

Ռազմական միջոցառումներ ճնշնարկվում էին նաև քաղաքների ննդրին տարածքներն ապահովելու համար, եթե այնտեղ ննդրխութեան թշնամու զորաբանակները: Այդ դնաքների համար է, որ քաղաքների հատվածները բաժանվում էին հզոր պարիսպներով, որոնց նպատակն էր խափանել քաղաք ննդրխութած թշնամու ազատ տնտեսաշարժենքը և դրանով ստիպել ծանր մարտեր մղել ամեն մի թաղամասի համար:

Եթե դիտարկենք ուրարտական քաղաքների թաղամասների կամ առանձին շենքների հատակագծենք, չափները, սենյակների քանակը, ինչպես նաև շենքների դիրքը փողոցների նկատմամբ, կարծիք է պատկերացում կազմել սոցիալական տարրենք խավերի տնտեսաշխաման սկզբունքների մասին այդ քաղաքներում: Այս հարցի մասին հատկապնու առատ նյութ են տալիս Թեյշեբախի պեղումները: Այնտեղ վնրնախավի քնակները կառուցված են սնկցիոն սկզբունքով, բավական ընդարձակ ննդրին տարածություններով ու սյունազարդ սենյակներով և դրանով իսկ որոշակիորեն արտահայտում են իրենց պատկանելությունը:

Պեղումները ապահով պատկերացում չեն տալիս քաղաքների բարեկարգման մակարդակի մասին: Առանձին տնտեսկություններից կարծիք է միայն ննդրադրել, որ նրանցում նդեմ են ջրմուղներ, ջրամբարներ, կամուրջներ, զբոսայգիներ ու բաղնիքներ: Պահպանվել են նաև ասորեստանյան արքաների ուղղակի վկայությունները ուրարտական քաղաքների հրապարակներում վեր խոյացող արձանների մասին:



32. Գյուղերի հատակագծեր, Դուչքազի (ա), Թուրքի թնկի (բ), Քալս քամանա (գ)

Ուրարտուում կային թագավորանիստ, վարչատնտեսական, ռազմական, ինչպես նաև պաշտամունքային նշանակության քաղաքներ: Թագավորանիստ քաղաքների թվին են պատկանում Երկրի մայրաքաղաքներ՝ Արծաշկուն, Տուշպան, Ռուսախնիլիխ (Թոփրաք քալեն): Տուշպան նոր է ուրարտական պնտության կենտրոնը այդ պնտության զարգացման գրեթե ողջ ժամանակաշրջանում: Կա տեսակետ, ըստ որի՝ Ռուսայի օրոք Տուշպային, որպես Երկրի կենտրոնի, փոխարինել էր Ռուսախնիլիխն:

Վարչատնտեսական նշանակության քաղաքները կազմում էին Երկրի քաղաքների հիմնական մասը: Այդպիսի քաղաքներն իրենց միջնաբերդի շուրջն ունեին մի միասնական տնտեսական միավորում կազմող բազմաթիվ բնակատեղիներ: Նման միավորումն ուներ նաև դաշտերի արհենտական ոտզման համար անհրաժեշտ համակարգ: Այդ համակարգի կազմի մեջ էին մտնում նաև ջրանցքները, թունելները, ինչպես նաև արհենտական մեծ ջրամբարները: Մթերքների զգալի մասը սովորաբար վնրամշակվում էր տեղերում, ուր այդ նպատակի համար գոյություն ունեին համապատասխան արհենտանոցներ, որից հետո արտադրանքը տեղափոխվում էր մայրաքաղաք Տուշպա: Կարմիր բլուրի միջնաբերդում հայտնաբերված են ծիթեան և մառան: Արհենտանոցների զարգացմանը նպաստում էր Երկրում հայտնի բոլոր անհրաժեշտ նյութերի առկայությունը (փայտ, քար, կավ, մնացած): Ուրարտական վարչատնտեսական խոշոր քաղաքներն էին Արգիշտիխնիլիխն, Թեյշեբախնիխն, Ալթըն թենիեն, Օշականը և մյուսները, որոնք իրենց պարսպապատված միջնաբերդներով, շրջակա բազմաթիվ գյուղական ավաններով կազմում էին գյուղատնտեսական հզոր համակարգներ՝ ստեղծելով քաղաքաշինական առումով տարածական միասնական համակարգ:

Ռազմական հենակետ քաղաքները ևս կարևոր նշանակություն ունեին ուրարտական քաղաքաշինական համակարգում: Ուրարտացիները ստեղծեցին յուրահատուկ կառուցներ՝ զորանոցներ, ախոռներ, մըրգադաշտեր, լճակներ (ռազմական ծինրին լողացնելու համար), բներքեր, ռազմական ճամբարներ ու քաղաքներ: Ռազմաստրատեգիական բոլոր

կառուցներն իրենց տնիսնիկական մակարդակով միանգամայն համապատասխանում էին հարակից նրկրների նույնատիպ կառուցների բոլոր սկզբունքներին: Ուրարտական հենակները քաղաքները սպառագինված էին քավականաշափ լավ, ինչի մասին կարելի է նգրակացնել Սարգոն II-ի տարեգրություններից, որը նաև հայտնում է, թե Ուրարտուում տեսալ է հզոր ու գեղեցիկ բներդներ՝ 120 շերտ աղյուս ունեցող պատճերի բարձրությամբ (կազմում է շուրջ 18 մ): Բներդներն ունենին 2-3 շարք պարիսպներ՝ իրենց աշտարակներով ու որմնահեղեղներով և տնդ-տեղ էլ իրենց առջևում փորված խրամատներով: Այդպիսիք են Ուայախ, Արգիշտիունա, Կալւանիա, Տարուի ու Տարմակիսու բներդները: Ինչպես պարզում են Արին բներդի պնդումները, ուրարտական ամրոցները լավ էին հարմարեցված՝ նրկարատև պաշարումներին դիմանալու համար, քանի որ նրանցում գտնվում էին ցորենի մեծ շտեմարաններ և ջրավազաններ: Ուրարտական ամրոցները համարյա միշտ կանգնած էին բարձր բլուրների վրա կամ նգրագծված էին խոր ճորենի միջով հոսող գետների ոլորապտույտներով և պաշտպանված էին անմատչելի, ուղղագիծ ապառաժ ափերով: Այդպիսի ամրոցներից էին Էրեբունին, Բաստամը (Ռուսակինիլի), Զերնակի թենին, Ազրաք թենին ևն:

Պաշտամունքային քաղաքներից են ուրարտական դիցարանի գերազույն նրբորդության՝ Խալդիի, Թեյշեբայի ու Շիվինիի պաշտամունքային կենտրոնները: Ուրարտական գերազույն աստվածության՝ Խալդիի պաշտամունքային կենտրոնը Մուսափր քաղաքն էր կամ Արդինին, ինչպես այն անվանում են ուրարտացիները, որը գտնվում էր Ռեսանդուզ քաղաքի շրջակայրում: Թեյշեբա աստվածության պաշտամունքի կենտրոնը կումենու քաղաքն էր՝ Վանա լճից հարավ-արևելք, Վերին Զաք գետի միջին հոսանքի շրջանում: Շիվինիի պաշտամունքի կենտրոնը մայրաքաղաք Տուշպան էր:


Ուրարտական քաղաքները ենարավոր է դասակարգել նաև ըստ հատակագծային հորինվածքի տարբերության: Դրանք են ազատ հատակագծումը, նրկրաշափական կանոնավոր զանցի համակարգը, խառը կառուցապատումը և դարավանդային համակարգը: Ազատ հատակա-

գծման սկզբունքը ամենատարածվածն էր և զարգանում էր տարերայնորեն, որի հնտևանքով բնակատնինների փողոցները ստեղծվում էին տնամենց տարածքներում: Տվյալ սկզբունքը հատկապնա բնորոշ է գյուղական բնակատնինների համար (Արագած, Թուրքի թնիքն, Ջալն քամանա): Կանոնավոր ցանցի համակարգի համար դասական օրինակ կարող է հանդիսանալ Զնրնակի թնիքն: Սակայն ուրարտական քաղաքաշինությանը հատկապնա բնորոշ էր խաղլկառուցապատման սկզբունքը:

Յուրահատուկ է ուրարտական քաղաքների տեղադրությունը լեռնային շրջանների տեղանքի մեջ թերությունների պայմաններում: Նման տարածքներում քաղաքներն ունեին իրենց կառուցների աստիճանածե փոխանցումները, որոնք, ի վերջո, կարծես ստանալով տեսական հիմնավորում, դառնում էին քաղաքաշինական հաստատուն օրենքներ: Այսպիսին է Հայկաբնրդը, որն ունի նրենք արտաքին պարիսպներ՝ մենքը մյուսից քարձրադիր տեղում: Դրանց նույի տարածությունները մինչև համապատասխան նիշը լցված էին հողով՝ ընդլայնելու համար բնրդի օգտակար մակերեսը: Այդպիսին է նղեն Մուսասիր քաղաքի կառուցապատումը, որը նույնպես գտնվում էր լեռնային շրջանում:

Ուրարտական քաղաքներում առավել հրատապ էր հողային ֆոնդի խնայողաբար օգտագործման պրոբլեմը, որը բխում էր քաղաքների պաշտպանության ռազմավարական սկզբունքներից: Բազմահարկ բնակելի շենքների առկայության հանգամանքը հավանաբար հողատարածությունների խնայողաբար օգտագործման սկզբունքի արգասիքն էր:

Բնակարանային ճարրարապետություն: Ուրարտուում բնակելի տների կազմավորումը մի դեպքում որոշվում էր բնակիչների անհատական պահանջներով, մյուս դեպքում այդ կազմավորումը թենլադրվում էր բնակիչների հասարակական կենցաղի ուրույն վիճակով: Վերջինս վերաբնրում է այն դեպքներին, երբ բնակիչները գինվորական, ինչպես նաև վարչական մարմինների քարձրաստիճան գործիչներ էին, որոնք չունեին սեփական տնտեսություն և ներթակա էին պետական պարենավորման: Այս իրավիճակն Ուրարտուում ստեղծեց բնակելի տաճ այնպիսի տիպեր, որոնք պետական իշխանության և նրա պահանջների արգասիքն էին:



33. Միջնաբնակացների հատակագծերի տեսակներ (ա-ի)


Նման բնակելի տների հատակագծային հորինվածքները խարսխվում էին ճարտարապետության բնագավառում առաջացող նոր, այն է՝ «տիպային» լուծումների սկզբունքների վրա, իսկ դրա հետ մեկտեղ առաջ էին գալիս նաև բազմաբաժանմունք ու բազմահարկ, ամեն առումներով խելական քաղաքատիպ բնակելի շենքներ:

Ուրարտուի բնակարանային ճարտարապետության մասին առաջին տեղեկությունները պահպանվել են Խորենացու մոտ և վերաբերում են Տուշպային: Վերջինս, ըստ պատմահոր հաղորդումների, բավական մեծ, բարձկարգ, անառիկ մի բնրդաբաղաք էր՝ բազմաթիվ երկիարկ և նոահարկ շենքներով: Վանի մոտ գտնվող Թոփիրաք քալե քաղաքի պեղումներից հայտնաբերված քրոնզն հարթաքանդակը, որը պատկերված է նոահարկ բնակելի մի տուն, հաստատեց Խորենացու հայտնած տեղեկության հավաստիությունը: Ներկայումս, քաջի տվյալ հարթաքանդակից, ուրարտական բազմահարկ շենքներն իրենց տեսանելի մնացորդների ձևերով հայտնի են Կարմիր բլուրի, Արագածի և Բաստամի միջնաբերդներում:

Ուրարտուի բնակելի ճարտարապետության մասին հայտնի տեղեկությունները պարզում են բնակելի տների հետևյալ նրենք դասերը՝ առանձնատներ, բնակելի տներ՝ խմբային կառուցապատումներով, և միահարկ ու բազմահարկ սեկցիոն տներ:

Առանձնատներն իրենց մեջ միավորում էին բնակելի, տնտեսական, պահեստային սենյակներ, ընտանի կենդանիների համար հատկացված համապատասխան հատվածներ և կառուցվում էին ավանդական՝ հում աղյուսի պատերով, քարե գետնախարիսխների վրա, հարթ ծածկերով, վերևի լուսավորությամբ, իսկ ամբողջությամբ վերցրած՝ ներկայացնում էին պարսպապատված ներքին տարածություններ՝ իրենց արտաքին միակ դրնով: Տան մեջ էր գտնվում նաև նրա պաշտամունքային անկյունն իր համապատասխան կուտքով: Հայտնի օրինակների թվին են պատկանում Արգիշտիխսինիլիի, Արագածի, Թոնշերախնիի մենատները:

Բնակելի տները՝ խմբային կառուցապատումներով, ունեցել են բազմաթիվ բնակելի, տնտեսական, պահեստային սենյակներ, դահլիճ, բակ՝ տնտեսական կարիքների և առանձին հատված՝ ընտանի կենդանիներ



34. Բնակելի տներ, Թնյշերախնի, միջնաբնրդի զինվորականների տները (ա),
Թնյշերախնի, բնակելի տների վերակազմությունը (բ), Արգիշտիլսինիի, ոչ ուրարտական շրջանի
առատների տներ (գ), Արգիշտիլսինիի, առանձնատներ (դ-է), Ազնվական ուրարտացու» տունը (ը),
Թնյշերախնի, մնձ սեկցիոն շինությունը (թ)

պահելու համար: Այսպիսի տներն ունեին փայտյա հարթ ծածկ, քարն պատճե հում աղյուսի վնրելի շարքներով, այսինքն՝ կառուցված էին ուրարտական ճարտարապետության ավանդական սկզբունքներով: Նման տների դասական օրինակները հայտնի են Թեյշեբախնիից և Բաստամից:

Ինչ վնրաբնրում է սնկցիոն բնակնելի տներին, ապա սրանք ստեղծվել են բնակիչների կենցաղի անհատական պահանջների ընդհանրության հաշվառումով, ինչը պայմանավորված էր այնպիսի ապրենակներպով, երբ բնակիչը չուներ մասնավոր տնտեսություն և ննթակա էր պետական պարենավորման: Ներկա դեպքում, հավանաբար, դրանք պետական ծառայության մեջ գտնվող ռազմիկներ էին: Սնկցիոն տների հատակագծային լուծումների տիպական սկզբունքները անակնկալ հորինվածքներ չեն Հին Արևելքի ճարտարապետության համար: Դրանք հիմնականում մի շարք միատիպ սենյակներից և մի քանի սնկցիաններից բաղկացած մեկ կամ մի քանի հարկանի համալիրներ են՝ համանման պայմաններում գտնվող բնակիչների (օր.՝ ռազմական հրամանատարների) համար: Հիմքներ կան ննթադրելու, որ սրանք գորանոցային շենքներ (ուրարտ. barzudibiduni) պիտի լինեն: Նմանատիպ ճարտարապետության նմուշներ հայտնի են Թեյշեբախնիից (պեղումներ), Թոփրաք քալնից և Քեֆ քալնսիից (պատկերագրություն):

Մոնումենտալ կառույցներ: Մոնումենտալ կառույցները ուրարտելենում միջազնտքրյան օրինակով տրվում են E.GAL գաղափարագրով: Այն նշանակում է «Մեծ տուն», որի տակ հասկացվում է հասարակական կամ հոգևոր շինություն: Այդ նույն գաղափարագիրը, որին կցվում էր «ամրացված» մականունը, միաժամանակ արտահայտում էր «ամրոց» կամ «միջնաբնրդ» հասկացությունը: Սնպազիր արձանագրություններում պալատները հաճախ ենթատակվում են պաշտամունքային կառույցների հետ մեկտեղ: Ուրարտական E.GAL-ները իրենց նշանակությամբ, ինչպես հաստատում են վիմագրական ու հնագիտական նյութերով, քածանքում են նրենք հիմնական խմբի՝ վարչատնտեսական, ռազմական ու պաշտամունքային:

Առաջիններում կառույցների հիմնական մասը ծառայում էր ներկա-

յացուցական և արտադրական կարիքներին: Նրանցում գործում էին արհեստանոցներ: Այստեղ պահպում էին օյուղատնտեսական մթերքներ, որոնց զգալի մասը հավաքվում էր տեղի ազգաբնակչությունից՝ որպես տուրք, իսկ մյուս մասը հավաքվում էր պալատներին ննթակա մշակվող հողներից:

Ուրարտական պալատներն ու բնրդերը իրենց մոտակա և հնոսավոր մատուցներում ունեին նաև այնպիսի կառույցներ, որոնք, որպես նրանց ռազմական առաջակալներ, իրենցով պատնշում էին այդ E.GAL-ները: Պալատների պաշտպանությանը մննապնս օժանդակում էր նաև լեռնային տնդանքը, որի հետևանքով այդ կառույցների հատակագծային հորինվածքները, ռացիոնալ կերպով կապվելով տնդանքին, ստեղծում էին ճարտարապետական ծավալների մտածված փոխանցումներ և օգտագործման համապատասխան հնարավորություններ: Այդ են հաստատում նման ձևերով կառուցված միջնաբնրդները (Վանա ժայռ, Հայկաբնրդ, Ալթըն թնդին, Քաստամ, Կարմիր բլուր ևն): Կառուցապատման համանման սկզբունքները հայտնի են դեռևս խնթական ճարտարապետությունից, իսկ նրանից խիստ տարբերվում են Միջագետքի՝ արհեստական հարթակների վրա վեր խոյացող մոնումենտալ շենքների կառուցողական սկզբունքները:

Անդրադառնալով մոնումենտալ կառույցներով միջնաբնրդների տարածական ձևերի հորինվածքների ճարտարապետական արտահայտություններին՝ կարող ենք դրանք դասակարգել ըստ նրենք տիպների՝

1) միջնաբնրդ՝ առանձին կանգնած շենքների համալիրային կառուցապատումով (Տուշպա, Էրեբունի, Ալթըն թնդին, Քայալը դեմք),

2) միջնաբնրդ՝ կառուցապատված միասնական ծավալի ձևով (Արգիշտիխնիլի, Թնյշեքախնի, Արագած),

3) միջնաբնրդ՝ նզրագծային կառուցապատումով և վեր խոյացող ծավալային միջուկով (Ներքին Անձավ, ուրմիական ամրոցներ):

Վերջին տասնամյակների պնդումները զգալիորեն ընդլայնեցին մեր պատկերացումները ուրարտական պալատների ճարտարապետության մասին: Պարզ դարձավ, որ ուրարտական պալատները մոնումեն-

տալ կառույցներ էին՝ հաճախ նրկիարկ, որմաննկարներով գարդարված ներքին տարածություններով, այունազարդ բակերով ու դահլիճներով, ինչպես նաև բազմաթիվ օժանդակ սենյակներով։ Մեր այսօրվա գիտնիքները ուրարտական պալատների վնրաբերյալ հնարավորություն են տալիս տարբերակներ նրկու տիպ՝

1) նրկու բակ ունեցող շինություններ, որոնց շուրջ տարածվում են տարբեր նշանակության սենյակներ։ Ընդ որում, այդ բակերից մենքը պետք է, և նրա շուրջ խմբավորված են պալատի բոլոր ամենակարևոր սենյակները (Էրեբունի),


2) պալատական համալիր, որի միջուկը այունազարդ դահլիճն է (Արգիշտիխինիլի, Բաստամ, Ալթըն թենփին):

Միջնաբերդների տարածքում, որպես պալատական համալիրի կարևոր տարր, հիմնականում գոյություն են ունեցել պահեստներ՝ իրենց մեծածավալ կարասներով հանդերձ, որոնք նախատեսված են նդել գինու, հացահատիկի և այլ սննդամթերքի պահպանման համար։


Ինչ վնրաբերում է պաշտամունքային շինություններին, ապա ուրարտական խոշոր տաճարները հավանաբար ընդարձակ համալիրներ էին, որտեղ պաշտամունքային կառույցները միավորվում էին աշխարհիկ, տնտեսական, արտադրական ու պահեստային շենքների հետ։ Քրմների գործունեությունը տաճարներում չէր սահմանափակվում միայն կրոնական ծիսակատարություններով։ Տաճարներն էլ իրենց հերթին միայն նյութական արժեքներ չեին պարունակում իրենց մեջ, այլև հանդիսանում էին ռազմական հզոր կենտրոններ։ Նրանցում գործում էին զենք պատրաստող արհեստանոցներ։

Այս իմաստով ուրարտական տաճարները լիովին նույնանում են հինարևելյան տաճարներին, որոնք ոչ միայն հոգևոր, այլև նյութական արժեքների շտեմարաններ էին, որտեղ գտնվում էին նաև արհեստանոցներ։ Նման գործառույթներ են ունեցել նաև հետագայի՝ անտիկ և հելլենիստական ժամանակաշրջանների տաճարները։

Ուրարտական ճարտարապետությունը ստեղծել է տաճարային կառույցների մի շարք ձևեր, որոնք, բազի բազմաթիվ սենյակիր արձանա-




35. Տաճարներ, Ալյեն թեմին (վերակազմություն) (ա-զ), Թայալը դմբի, հատակագիծը (η), Ակերք թեմին, մուտքի վերակազմությունը (օ), Ալյեն թեմին, հատակագիծը (զ), Քաք քալսի, ներքին տևաքը (վերակազմություն) (է).



36. Տաճարներ, Մուսասիր (ա), Էրեբունիի Խալեջիի տաճարի հատակագիծը և
վերակազմությունը (բ), Էրեբունիի Սուսի տաճարի հատակագիծը (գ), Էրեբունիի Հռո
տաճարի հատակագիծը (դ), Թաշրուրուն, տաճարի ներքին տեմպլը, վերակազմություն (է),
Թաշրուրուն, տաճարի հատակագիծը (լ)

գրություններից, հայտնի են նաև պնդումներից գտնված օրինակներով: Մելքոնյանը հիշատակվում են այդպիսի կառույցների հնույալ տարբերակները՝ E - տուն (Աստծո) - տաճար, E.BAR - տաճար, iaranı - մատուռ, šištile - աստվածների դարպաս: Պաշտամունքային է նղեն նաև այն կառույցը, որը սեպագրներում հիշատակվում է susi անունով: Հավանաբար նույն գործառույթն են ունեցնել նաև sirihani և adunisini կառույցները, որոնք հիշատակվում են Կարմիր բլուրում հայտնաբերված սեպագրներում: Պաշտամունքային կառույց էր նաև burgana-ն, որը տաճարներին կցված բուրգ էր. ըստ որում, դրանցից առաջինը կարող էր առնչվել նաև գիննեգործությանը (Գ. Թումանյան):



37. Սրբարաններ, Ալեքն թնկն, բագրոյա սրբարանը (ա),
թոփիաք քալի, կնիքի պատկեր կոթողի առջև կատարվող նվիրաթերման ծննով (բ),
որմնախորշ՝ արձանագրությամբ՝ Ռեզայինի և Ուշնոյնի միջև (ց)

Զնայած ուրարտական սեպագրներում նշված են տաճարների մի շարք տեսակներ, սակայն դրանց հնագիտորեն ուրվագծված ձևերը իրենց


հատակագծային եռինվածքով նրեքն են՝

1) քառակուսի հատակագծով տաճարներ (հիմնական ու տարածված ձևն է՝ Ալթըն թնդին, Թոփրաք քալե, Ազնավոր թնդին, Քայալը դերե, Վերախրամ, Դանաթլու և նույնական առանցքով տաճարներ),

2) ուղղանկյուն հատակագծով, երկայնական առանցքով տաճարներ (Երեքունիքի Սուսի տաճարը, Մուսասիր),


3) ուղղանկյուն հատակագծով, լայնական առանցքով տաճարներ (Երեքունիքի Խալդիի և Ջեֆք քալեսի տաճարները, նման են խուռի-խնթական աշխարհում տարածված բիթ-հիլանի կոչված շինություններին):

Վիմափոր կառույցներ: Ուրարտուն լեռնային երկիր էր, հետևապես վիմափոր կառույցները կազմում են նրա շինարվեստի մի զգալի մասը։ Այդ կառույցներն ունեն նույնին նույնին կիրառված տառվածությունը։ Աիրափինին։ Դրանց թվին են պատկանում ժայռափոր սանդուղքները, խորշենրը, պաշտամունքային ու թաղման կարիքներին նվիրված արհեստական քարայրները, թունելները և այլն։ Վիմափոր կառույցներում ուրարտացիները, հաղթահարելով ապառաժ լնու, մշակել են այն՝ որպես նրկրաչափական հստակ ձևների ճարտարապետական դրսնորումներ։




38. Մուսասիր, տաճարի վերակազմությունը՝ նախ Վ. Քայսի

Ժայռային կառույցների ամենապարզ ձևներից են սանդուղքները, որոնք առնչվում են պաշտամունքային կամ աշխարհիկ նշանակության




39. Ուրարտական զարդանկարներ, Էրեբունի (ա-մ)



40. Ուրարտական գաղդանկարներ, Էրմետինի (ա-թ)

շինություններին: Վերնրկրյա սանդուղքների առավել ուշագրավ օրինակ-ները գտնվում են Տուշպայի, Վերին Անձավի, Բուտանկայայի միջնաբնրդերում և այլուր: Ստորգետնյա սանդուղքների հետաքրքիր օրինակներ են հայտնի Թոփրաք քալեում, Միանդարում, Քալե Այդարում:



41. Բարձրաքանդակներ. Աղիջնվագ (վերակազմություն) (ա), Թնֆ քալեսի (բ)

Ժայռային հաջորդ պարզ կառուցներն են խորշերը, որոնց առավել մշակված ձևները ունեցել են պաշտամունքային նշանակություն և կոչվում են “Աստվածների դրսներ”, ինչպիսիք են օրինակ Աշրութի դուռ՝ Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող Սալսանն (Աշոտակերտ) գյուղում, Մենքի դուռ, Բուտանկայայի դուռ և Մյուսները: Բուտանկայայի խորշի առջև՝ ժայռի հարթեցված մակերեսի վրա, տեսանելի են բրոնզե զոհարանի ուժերի հետքերը միայն, որով հաստատվում է այս կառուցների պաշտամունքային նշանակությունը:

Վիմափոր կառուցների առավել նշանակալից մասը գտնվում է Վան քաղաքի միջնաբնրդի շրջակայրում: Այս կառուցները հավանաբար ունեին տարբեր գործառույթներ, այդ թվում նաև պաշտամունքային: Այս իմաստով հետաքրքիր է ժայռի հյուսիսային կողմում գտնվող այն քարայրը, որը կրում է Մենուա արքայի արձանագրությունը, ուր հիշատակվում է širšin կոչված կառույցը, որտեղ պահվում էին զոհաքերությունների համար մատուցվող սրբազն կենդանիները: Դատելով կառույցի ձևից՝ համոզվում ենք, որ այն լիովին համապատասխանում է արձանագրության մեջ նրան վնրագրվող նշանակությանը: Թնրևս պաշտամունքային նպա-

տակի համար էր ծառայում մի այլ վիմափոր, որը գտնվում է Քայազնոտում և բացառիկ է նրանով, որ նրկիարկանի է:

Վիմափոր կառույցների մի զգալի մասը եղել են դամբանային համալիրներ (Փոքր Խորխորյան վիմափորը, Քայալը դերենի դամբարանը, Ալթըն թնդենի դամբարանները ևն):

Ոռոգման ջրանցքներ: Ջրանցքաշինությունը Ուրարտուում գտնվում էր կենտրոնական իշխանության ձևորում: Այս իմաստով հատկապես հիշարժան է Մենուա արքայի գահակալման ժամանակաշրջանը, որի թողած արձանագրություններից 14-ը վերաբերում են ջրանցքաշինությանը:

Ջրանցքները (ուրարտ. pil) նրկում կազմում էին բավականին լայն ցանց: Բացի գնտերից, ջրանցքներ էին նաև ջրային այն պաշարները, որոնք գոյանում էին լեռնային աղբյուրներից, լճակներից, ինչպես նաև լեռների ծալքներում մթնոլորտային տեղումներից կուտակված ջրերից: Ուրարտական ջրանցքները ճարտարապետական առումով կառույցների բավական զարգացած համակարգներ էին: Նրանք անցնում էին նրկարանական դժվար հաղթահարների տեղանքներով, ուղղածից ժայռերի ստորոտներով, թունելներով, նրբեմն էլ ստորգետնյա արհեստական ուղիներով կամ դաշտավայրերով:

Ուրարտական ջրանցքներից պահպանվել են բազմաթիվ, նույնիսկ առ այսօր գործող կառույցներ, որոնց թվում են Շամիրամի ջրանցքը, Մարանդի ջրանցքը, Խոտանալուի ջրանցքը, Հոկտեմբերյանի ջրաբաշխական ցանցը ևն: Ջրաբաշխական համալիրների մեջ մտնող առավել նշանակալից ջրամբարներից է Քնչիշ գյոլը:

Ուրարտական քաղաքներում խսնլու ջրի մատակարարման գործը բավականին բարվոր վիճակում էր գտնվում: Այդ են հաստատում տարբեր տեղերում հնագիտական հնտագուտությունների ընթացքում ջրատար խողովակների, ինչպես նաև տարբեր չափերի ջրամբարների մնացորդների հայտնաբերումները: Դրանցից է Զիվիտանի ջրամբարտակը, որը կնրտված է միջնաբերդի ժայռի խորության մեջ, կամ Արգիշտիխինիլիի խոշոր ամբարտակը: Երեքունիի միջնաբերդում է հայտնաբերվել


ուրարտական ջրատար համակարգի լավագույն օրինակը: Ջրամատակարարումն այստեղ իրացվում էր ինքնահոս ջրատարով, հետևապես ջուրը միջնաբերդ էր հասնում նրա նիշից շատ ավելի քարձր դիրքում գտնվող աղբյուրներից, որոնք մոտ 10 կմ հեռու էին գտնվում: Չուրը քաղաք էր բնրվում տուֆե խողովակներով, ստորգետնյա ճանապարհներով: Ուրարտական քաղաքներում ջրատար ցանցը, քացի քարն խողովակներից, ունեցել է նաև կավե խողովակներ (Քայալը դեռև):

Շինարարական գեիսնիկա: Ուրարտական կառույցների հիմնական շինանյութը, քացի քարից (քազալտ, տուֆ) ու փայտից (սոճի, կաղնի, հաճարենի, կաղամախի), նաև կավն էր ու նղեզնը: Կավից էին պատրաստվում աղյուսները՝ փայտյա հատուկ կաղապարների մեջ և օգտագործվում էին ինչպես հում, այնպես էլ թրծած վիճակում: Աղյուսները նրկու տիպի էին՝ քառակուսի և ուղղանկյուն: Ուրարտուում, ուր ավանդական շինանյութը քարն էր, մոնումենտալ կառույցներում կավի օգտագործումը Միջագետքից ներմուծված սկզբունք էր:

Ուրարտական ճարտարապետության մեջ կարևոր է առանձնացնել քարակերտ, կավակերտ և փայտե կոնստրուկցիաներ:

Ուրարտական կառույցների որմածքում քազալտը և տուֆը օգտագործվում էին միաժամանակ, խաղը ձևով: Սակայն տուֆը հիմնականում օգտագործվում էր հիմքերի, ինչպես նաև պատերի ներքին շարքերի, գետնախարիսխների ու աստիճանների համար: Տուֆն օգտագործվում էր նաև խարիսխների, քարավորների, ջրատար խողովակների պատրաստման համար: Քազալտը կիրառվում էր սալաքարենի, խարիսխների, կողողային հուշայունների, դամբարանների, մոնումենտալ քանդակների, սնապագիր արձանագրությունների և տնային ամենատարբեր իրենքի համար:

Ծուրջ 3-4 մ բարձրությամբ պատերը շարվում էին կոպտատաշ քարերով, կավե շաղախով: Երբեմն զնտնախարիսխներ կազմող որմածքներն ամուր տուֆատեսակներից էին՝ շարված խորանարդածև քնկորներից: Կան նաև մշակված ու կանոնավոր նրկուաչափական ձևերով քարն կոնստրուկցիաներ:



42. Մուտքներ, սյունազարդ ու մուղթերով սենյակների և դահլիճների հատակագծերի սխեմա (ա, թ),
տաճարների մուտքների սխեմա (զ), ամրոցների մուտքների սխեմա (ի)

Կավակնրտ կոնստրուկցիաներից ամենատարածվածը հում աղյուսի որմածքն էր: Քառակուսի և ուղղանկյուն աղյուսների օգտագործումով ապահովում էր որմածքների շարքների կապը: Հում աղյուսի պատճենն ունեին 2,12-3,77 մ լայնություն: Չափերի հիմքում ընկած էր ուրարտական կանգունը (մոտ 50 սմ), որով և չափում էին պատճերը (չորս, հինգ և յոթկանգունային պատճեր): Հատակները ևս շարքում էին մի շերտ աղյուսով, ապա ծածկվում էին կափով: Կամարը ուրարտական ճարտարապետության մեջ հայտնի է վիմափոր կառույցներում, կառույցներ պատկերող հարթաքանդակների վրա: Հայտնի են նաև աղյուսներից շարքած կամարներ:

Փայտը հիմնականում օգտագործվում էր այունահեծային համակարգների, միջիարկային և այլ տիպի ծածկների, տանիքների (այդ թվում՝ նրկթեք), ինչպես նաև հակասենյամիկ գոտիների ու բարավորների համար: Փայտից պատրաստվել են նաև դռներ և քիվներ: Էրեբունիի միջնաբնրդի հում աղյուսի պատճերի շարքածքը ամրացված էր փայտյա կապերով, որոնք ունեին հակասենյամիկ նշանակություն:

Այսպիսով, հնագիտական տվյալները, լրացվելով գրավոր աղբյուրներով, հնարավորություն են տալիս՝ ընդհանուր առմամբ վերականգնելու ուրարտական ճարտարապետության առանձնահատկությունները: Ուրարտական ճարտարապետությունը, շնորհիվ առաջավորասիհական և լեռնաշխարհի բնիկ այլ մշակույթների հետ ունեցած սերտ առնչության, հասավ տեխնիկական այնպիսի մակարդակի, որին հավասարապես մոտ էին ինչպես լեռնային, այնպես էլ հարթավայրային ճարտարապետության սկզբունքները: Այդ ճարտարապետության բնորոշ հատկանիշն էր նաև այն, որ նրանում ինչպես քարեն, այնպես էլ փայտյա կառույցներական յուրահատուկ տեկտոնիկ ծևերի արտահայտությունները դրսնորփում են ինչպես ինքնուրույն, այնպես էլ միահյուսված ծևերով:


Ուրարտական ճարտարապետությունն ակնհայտ առնչություններ է ցույց տալիս մի կողմից խեթական աշխարհի լեռնային ճարտարապետության, մյուս կողմից՝ Միջագնտքի հարթավայրային ճարտարապետության սկզբունքներին, ընդհուպ մինչև հում աղյուսի օգտագործումը:

Ուրարտական ճարտարապետությունը հնտագայում մնձ ազդեցություն ունեցավ ոչ միայն հայ, այլև փոքրասիական, բայց հատկապես իրանական (արևմտնյան) մշակույթների կառուցողական ավանդույթների վրա:


Գրականություն: Շիրմազան 1962; Հովհաննիսյան 1964; Պիոտրովսկի 1971; Զարյան 1986; Հարությունյան 1978; Հարությունյան 1992; Հովհաննիսյան 1996; Թումանյան 2008; Սևկով 1944; Ռազմիկ 1954; Կաֆադարյան 1967; Կաֆադարյան 1972; Միացական և այլ. 1978; Խալպահչյան 1980; Օգանեսյան 1970; Օգանեսյան 1981; Օգանեսյան 1985; Belck 1895; Kleiss 1963-1964; Riemschneider 1965; Stronach 1967; Riemschneider 1970; Naumann 1968; Kleiss 1976c; Yutaka 1979; Kleiss 1979b; Kleiss 1979c; Kleiss 1982; Gunter 1982; Forbes 1983; Sinclair 1987; Kleiss 1988; Ussishkin 1994b; Smith, Kafadarian 1996

Նկարներ: 31, 32, 33 (Քաղաքաշինություն); 34 (Բնակարանային ճարտարապետություն); 35, 36, 37, 38, 41 (Մոնումենտալ կառույցներ); 51, 52, 53 (Վիմափոր կառույցներ); 48 (Ոտղման ջրանցքներ); 42, 43, 44, 45, 47, 49, 50 (Շինարարական տեխնիկա)


Լուսանկարներ: 1, 7-28




43. Ուրարտական ծածկների ձևեր (ա-Շ)




44. Ուրարտական առյուսի շարվածքի ձևեր (ա-ի)




45. Ուրարտական փականների ձևներ (ա-դ)




46. Ուրարտական հատակների ձևեր (ա-է)




47. Ուրարտական քիվմիջի ճևճը (ա-դ)



48. Ուրարտական ջրատար խողովակների ձևեր (ա-ը)



49. Ուրարտական ամրոցների պատմքի ձևեր (ա-ի)



50. Ուրարտական համաշափություններ, կանգուն (ա), բիվեր (բ, զ).

III. ԴԱՄԲԱՎԱՅԻՆ ՀԱՍՏԱՐՆԵՐ

Ուրարտական մոնումենտալ դամբարանային շինություններն ուսումնափում են դեռևս XIX դ. նրկրորդ կեսից: Այլ տիպի դամբարաններ հետագութեալ են ուրարտական հուշարձանների լայնամասշտաբ պեղումների ընթացքում՝ սկսած XX դ. կեսերից:


Մեզ հայտնի ուրարտական դամբարանների հիմնական մասը ինտրամուրալ է (կատարված բնակավայրի կամ ամրոցի ներսում) կամ նույն այդ բնակավայրի/ամրոցի անմիջական հարևանությամբ՝ հատկապես ժայռերին հարմարեցված առաջտամունքային շինություններին կից:

Ուրարտական թաղումների ընդհանուր վերլուծությունը վկայում է այն մասին, որ, որոշ բացառությամբ, մեզ հայտնի են միայն ուրարտական վերնախավին պատկանող դամբարաններ և առանձին ինտրամուրալ թաղումներ: Բուն ուրարտացիների դամբարանադաշտերը, որում կնքեայանար ուրարտական մշակույթը՝ որպես այդպիսին (օրինակ այնպես, ինչպես այն ի հայտ է գալիս լեռնաշխարհի բրոնզ-նրկաթենդարյան մշակույթների համակարգում), մեզ հայտնի չեն: Այն դամբարանադաշտերը, որոնցում կան ուրարտական նյութ պարունակող դամբարաններ (օր.՝ Օշական) պատկանում են առավելապես ուրարտական ազդեցության տակ գտնվող տեղական վերնախավին: Սա մենք անգամ ևս խոսում ենք ուրարտական մշակույթի վերնախավային բնույթի մասին:

ՎԱՆ

Ուրարտական ժայռափոր հուշարձաններից հատուկ համբավ ունեն Վանի ժայռափոր արհեստական քարայրերը և ընդարձակ սրահները: Առավել ուշագրավ արհեստական քարայրերը գտնվում են Վանի ժայռաբլրի հարավային կողմում: Այստեղ են տեղադրված նրենք խմբից քաղկացած «Խորխորյան քարայրերը»: Դրանցից առաջինը ոչ մեծ քարայր է, որտեղ փորագրվել է Արգիշտի I-ի հայտնի Խորխորյան տարեգրությունը: Դրանից ոչ հեռու գտնվում է զլսավոր կառույցը: Նրան մոտենալու համար Վանի ամրոցի հարավային կողմից մայր տպարում տատիճաններ

Են փորվել: Այն մեկ կենտրոնական և չորս օժանդակ սենյակներից կազմված դամբարան է: Կենտրոնականը $10,50 \times 3,50$ մ չափերով սենյակ է, որի պատճենին կան տասը խորշեր: Պատի վրա կան փորվածքներ և բացվածքներ, որոնցում, հավանաբար, ամրացվում էին ճրագներ: Սենյակի հատակին երկու փորվածք կա, մեկը՝ ուղղանկյուն ($2,07 \times 2,60$ մ), մյուսը՝ քառակուսի ($1,11 \times 1,11$ մ): Կենտրոնական սենյակի արևելյան և արևմտյան կողմերում կան իրար չմիացող չորս ավելի փոքր սենյակներ, որոնց պատճենը զարդարված են խորշերով: Հյուսիսարևմտյան սենյակի հատակին բացվեց խճով լի հոր: Այն կարող էր ծառայել իբրև գնտնուի՝ սենյակը միացնելով Խորխորյան ժայռի 3-րդ շինության հետ: Վերջինս գտնվում է անմիջապես մեծ սրահի տակ:




Տ1. Վան, Մեծ Խորխորյան բարանձավը

Այն կազմված է ուղղանկյուն դահլիճից (նրկարությունը՝ $12,68$ մ, լայնությունը՝ $2,90-3,09$ մ, բարձրությունը՝ $2,10$ մ): Սրա հյուսիսային պատին՝ հատակից 20 սմ բարձրության վրա, փորված են չորս խորշեր:

Վանի ժայռի հարավային կողմի հաջորդ դամբարանը Նաֆթ քոյուն


է: Արահի ճակատը ծևավորված է խորշի նման (լայնությունը՝ 24,90 մ, բարձրությունը՝ 8,60 մ), որի վերին հատվածում պատուհան է բացված: Այս քարայրենքի առաջին խոշոր դահլիճը (նրկարությունը՝ 12,40 մ, լայնությունը՝ 7,28 մ, բարձրությունը՝ 7,90 մ) ունի կորածն թաղ: Ճակատի նրկար պատսն ունի դքններ, որոնցից ծախը տանում է դեպի նրկու խորշներվ զարդարված ոչ մեծ սենյակը, իսկ աջը՝ նրկրորդ խոշոր սենյակը: Պատերն ունեն մեկական դքններ: Մուտքից ձախ կա ոչ մեծ ուղղանկյուն սենյակ, իսկ աջինը անավարտ է:



52. Նաֆթ քյոյո, քարանձավները

Մյուս դամբարանը Իշկալան է: Այն տարբերվում է Խորխորյան սենյակներից և Նաֆթ քյոյուից նրանով, որ օժանդակ շինությունները խրմբվում են ոչ թե մեկ, այլ երկու սրահների շուրջ: Առաջին սրահի պատերը հավասար չեն (նրկարությունը՝ 9,28-9,38 մ, լայնությունը՝ 5,49-և 5,97 մ): Առաստաղն ունի կորածն թաղի տեսք: Երկրորդ սրահը փոքր է (6,30x4,33 մ), հարթ առաստաղով: Առաջին սրահին կից են երկու, երկրորդին՝ երեք ուղղանկյուն և անհավասար պատերով սենյակներ (նրկարությունը՝ 4,80-4,82 մ, լայնությունը՝ 2,60-2,71 մ): Հյուսիս-արևելյանը կան երեք աստի-

ճաններ, որոնք տանում են դեպի 0,87 մ բարձրությամբ հարթակը: Այստեղ փորված է 1,67 մ երկարությամբ և 0,88 մ լայնությամբ մի խորշ:



53. Խշկալա, քարանձավները


Վանի ժայռի քարայրներից հաջորդը գտնվում է զինապահենստի մոտ: Փոքր մուտքով կարելի է անցնել մոտ 20 մ² չափերով և 2,55 մ բարձրությամբ մի սրահ, որն ունի երեք կից սենյակ: Դրանցից մեկն ունի 4,74x1,42 մ է, որի հարթակը առաստաղի բարձրությունը՝ 0,95 մ է: Երկրորդ սենյակի առաստաղը կորածն է: Մայր ապարում փորված աստիճանը տանում է դեպի երրորդ, ոչ մեծ սենյակ-գաղտնարանը: Այն ունի 1,07 մ լայնություն և 0,85 մ բարձրություն: Ընեւ սենյակում որևէ նյութ չի գտնվել, սակայն կարելի է ննջադրել, որ հենց այստեղ է կատարվել հիմնական թաղումը:

Գրականություն: Մելքոնյան 1995; Пиогровский 1959; Sevin 1980; Ussishkin 1994

Նկարներ: 51, 52, 53

ՆԵՐՁԻՆ ԽՆՉՈՐ (ՔԱՅԱԼ ԴԵՐԵ)

Դամբարանը հայտնաբերվել է վերին ամրոցի ժայռի հարավային եզրին: Այն ունի նեղ մուտք և դամբարանի խորքը տանող չորս աստիճան-ներով նեղ դրումոս, որով կապվում է վեց սենյակներից բաղկացած դամբարանին: Առաջին սենյակի դուռը ծածկված է եղել երեք խոշոր սալաքարենքով: Այս սենյակները ուղղանկյուն են, սակայն չորրորդ և վեցերորդ սենյակների պատճենի մեջ կան կամարաձև վերնամասներ ունեցող ութական խորշեր: Բացի խորշներից, երրորդ սենյակի հնտևի պատին կից կառուցվել էր մի հարթակ, որի մեջ փորված էր 1,5 մ երկարություն ունեցող սարկոֆազ: Հնտաքրքիր է նաև վեցերորդ սենյակը, որի հատակին՝ բոլոր պատճենի տակ, փորված էին 36 կլոր փոսիկներ՝ ըստ երևույթին մոմակալներ տեղադրվուի համար:



54. Քայալը դմբ, դամբարանի հատակագիծը և կտրվածքը

Դամբարանի սրահներից երեքի հատակների անկյունային մասերում փորկած են հատած կոնի ձև ունեցող հորեր: Այս երեք հորերից երկուը պնդվեցին, և նրանց հատակներին գտնվեցին լավ մշակված քարաքեկորներ: Q. Բըրնիի կարծիքով՝ դրանք ծառայել են որպես զոհարաններ: Դամբարանները կառուցվել են Ք.ա. VIII դ. երկրորդ կեսին: Այդ թվագրությունը հաստատվում է նաև այստեղ գտնված իրենք: Դրանց թվին են պատկանում մոտ մեկ տասնյակ երկաթե տերևածե և նշածե պոչուկավոր ննտասլաքները, որոնք հայտնի են Թոփրաք քաղենից, Ալյալն թնդենից, Հայկաքերդից և այլն: Հնտաքրքիր են այստեղ գտնված կահույքի մասերը, որոնց մեջ ամենամեծ խումբն են կազմում աթռուների ոտքերի ծայրակալները: Դրանց մի մասը բրոնզե խողովակներ են, իսկ մյուսները ցլի ոտքի կամ առյուծի թաթի ձև ունեն: Գտնվել են նաև զարդեր՝ բրոնզ ապարանջան, արծաթե շքասեղ և օղ, բրոնզե տանդ, կոճակ և այլն:

Գրականություն: Lloyd, Burney 1965; Burney 1966

Նկարներ: 54

ՄԱԶԳԵՐԴ

Այն գտնվում է Մանազկերտից 11 կմ դեպի արևելք՝ դժվարամատչնի ժայռի հարավային լանջին: Հայտնաբերվել է Կ. Լեհման-Հառիպսի կողմից: Դամբարան կարելի է մտնել թաղակապ դրումոսի միջով, որն ուղղանկյուն ($1,42 \times 1,1$ մ) դրում միանում է գլխավոր սրահին: Դռան շեմը մոտ 0,5 մ բարձր է սրահի հատակից, որի վրա կա ոչ մեծ հոր: Գլխավոր սրահը հատակագծում անհավասար քառանկյունի է (հարավային և հյուսային պատերը՝ $3,6-3,15$ մ, իսկ արևելյանը և արևմտյանը՝ $6-5,75$ մ): Հարթ առաստաղի բարձրությունը 2,3 մ է, կողային սրահի մուտքը ($1,46 \times 0,85$ մ) ավելի փոքր է: Հյուսիսային պատին կան որմնախորշեր (մեկի լայնությունը՝ 1,5 մ, խորությունը՝ 1 մ, մյուսինը՝ $0,84 \times 0,84$ մ):

Գրականություն: Lehmann-Haupt 1910-1931; Пиотровский 1959


ԾՄԻՆ (ԱԼԹ-ԸՆ ԶԵՓԵ)

Ալթըն թնդինի թվով նրենք դամբարանները հայտնաբերվել և պնդվել են թ. օգգյուշի կողմից: Դրանցից առաջինն ունի ուղղանկյուն հատակագիծ՝ $9 \times 4,5$ մ չափերով, և բաղկացած է նրենք ոչ մեծ սրահներից: Դամբարանի պատերը կազմող արտաքին և ներքին խոշոր սալերի միջանկյալ տարածքը լցված է մանր քարերով: Արտաքին սրահի լայնական պատերի մեջ կան 44 սմ և 42 սմ չափերով մեկական որմնախորշեր: Որմնախորշեր կան նաև 2-րդ և 3-րդ սրահներում, որոնք հաղորդակցվում են առաջինի հետ 70 սմ լայնություն ունեցող մուտքերով: Առաջին սրահի հյուսիսարևմտյան անկյունում գտնվել է վատ պահպանված փայտն դագաղ, որի մեջ կար մեկ կմախք: Նրա շուրջը գտնվել են անոթների բնկորներ և կահույրի մնացորդներ: Առավել հնատարբերիր է փորագրված ցլի սմբակի ծևով աթոռի փայտն ոտքը, որը ծածկված է եղել արծաթեն թիթեղով: Դամբարանի ծածկի սալերը պատվել են մանր քարերի և հողի՝ մոտ 0,5 մ հաստության շերտով, ինչի շնորհիվ գնտնափոր դամբարանի տանիքը հավասարեցվել է հողի մակերներին: Վրան պահպանվել են հում աղ-

յուսից կառուցված նրկրորդ հարկի տանիքի հնտքնը: Երկրորդ դամբարանը կառուցված է առաջինից մոտ 2 մ հեռավորության վրա: Դամբարանը $7,5 \times 5$ մ չափերով մի սրահ է: Ստորգետնյա մուտք-դրոմոսը ($2,9 \times 0,9$ մ չափերով) կառուցված է նրկու իրար դիմաց տեղադրված քարերով, որոնց մեջ փորված են որմնախորշներ: Սրահի բարձրությունը 2 մ է: Երկայնական պատճերի մեջ կան նրենք, լայնական պատճերի մեջ՝ նրկու որմնախորշներ (բարձրությունը՝ 1,25 մ, լայնությունը՝ 0,6 մ, խորությունը՝ 0,95 մ): Այս խորշները սալիկներով բաժանվել են նրկու բաժինների, որոնցից մեկում դրված է նղեն փոքրիկ անոթ: Սրահի հարավարևելյան անկյունում գտնվեց կնոջ կմախք, որը, ըստ նրևույթին, պառկած է նղեն չպահպանված փայտել դագաղում:

Տափք, 1-ին և 2-րդ դամբարանները մինչև պեղումները թալանված են նղեն: Նյութերի մի մասը հաջողվել է հավաքնել: Դրանց թվին են պատկանում աթոռի զակերպ բրոնզե ոտքը, ոսկյա թիթենդներ, որոնց վրա պատկերված են մարդու գլուխներով զենք, խոշոր կաթսաներ, որոնց նզրերը զարդարված են զենքի գլուխներով, տարբեր ձևերի նոռտանիներ, փղոսկրից, ոսկուց, արծաթից և կիսաթանկարժենք քարերից պատրաստված ուլունքներ և այլ զարդեր:

Այս նրկու դամբարաններից 16 մ հարավ-արևմուտք պեղվել է վնրջին՝ ամենամեծ՝ $8,5 \times 6,75$ մ չափերով դամբարանը, որը նույնպես ունեցել է դրումու: Առաջին սրահի կենտրոնում դրված է նղեն մեծ բրոնզե կաթսա, որի մեջ գտնվել են ծալված բրոնզե զոտի, նրկու բրոնզե սկավառակներ, ծիու արձանիկ, սանձ և ծիասարքի այլ մասեր: Սրահում գտնվել է մեկ փայտել սղան, նրկու աթոռ, որոնց ոտքերին պահպանվել էին արծաթե ծայրակալներ, բրոնզե ու նրկաթենիզակներ, մարտակառքի մնացորդներ: Մեկ մնտր լայնությամբ մուտքը առաջին սրահը միացնում է նրկրորդին, որի բոլոր սրբատաշ պատճերին արված են որմնախորշներ: Այս սրահում պահպանվել են նրկու քարե սարկոֆագներ, որոնք ծածկված են նղեն ուսուցիկ կափարիչներով: Սարկոֆագներից մեկում գտնվեց կծկրված դիրքով պառկած մի տղամարդու կմախք, նրկրորդում՝ նույն դիրքով կնոջ կմախք: Տղամարդը նղեն է 45-50 տարեկան, հասակը՝ 175 սմ,



55. Ալեքն թնկեն, դամբարանները, կտրվածք հնուանկարում և ընդհանուր հատակագիծ (ա),
հատակագիծ և կտրվածք (բ), հատակագիծ (զ)

կինը՝ 50-55 տարեկան, հասակը՝ 153 սմ: Տղամարդու սարկոֆազի մեջ ոչինչ չի նղել: Սարկոֆազի կողքին գտնվել են ոսկե, արծաթե և բրոնզե կոճակներ, նետասլաքներ, կապարծ, նրկաթե վահան: Կնոջ սարկոֆազի մեջ դրված էին ոսկե կոճակներ և ուլունքներ: Մրահում նղել են նաև կադուու փայտից պատրաստված ու լավ պահպանված նրկու սմեղան, խնձանոթներ, փղոսկրից պատրաստված սրբազն ծառի փորագրություններով արտեֆակտներ և մեկ ճենապակյա անոյթ: Այս դամբարանի՝ $2,5 \times 4$ մ չափերով նրբորդ սրահի պատերից երեքն ունեցել են մեկական որմնախորշ: Այստեղ գտնվել են առյուծի զլիսի քանդակներ ունեցող բրոնզե շրջանակով մեծ փայտե սմեղան, ինչպես նաև գնդեցիկ կավե աճյունասափորներ:

Այս դամբարանների մոտ պնդվել է նաև բաց սրբարան: Վերջինս $11,7 \times 7,75$ մ² մակերեսով հարթեցված տարածք է՝ շրջապատված 0,5 մ բարձրության քարե պարսպով, որի վրա հում աղյուսի շարվածքի հետքեր են նկատվում: Տարածքը սպասարկված է, որի հետին պատի մոտ կանգնեցված են եղել 0,55 մ բարձրություն ունեցող պատվանդաններ՝ կամարաձև վերնամասով, ուղղանկյուն, պրիզմայաձև կոթողների համար:


Նյութերի քննարկումը հնարավորություն է տալիս՝ Ալեքն թեփենի դամբարանները թվագրելու Ք.ա. VIII դ. նրկորդ կետով:

Գրականություն: Özgürç 1961; Özgürç 1964; Özgürç 1966; Özgürç 1969

Նկարներ: 55

ԱԼԻՉԱՐ

Ալիշարի դամբարանը հայտնաբերվել է պատահականորեն՝ 1859 թ., քրդնրի կողմից: Թալանված նյութերի մի մասը պահպամ է պետական Էրմիտաժում: Այն գտնվում է Նախիջևանից ոչ հեռու՝ նախկին ռուս սահմանապահների Ալիշար պահականտի դիմաց (Իրանի տարածք): Արաքս գետի աջ ափին: Դամբարանը կառուցված է մոտ 75 մ բարձրություն ունեցող մի ժայռի մեջ:



56. Ալիշար, դամբարանի ընդհանուր տեսքը


Այն կազմված է նղել միմյանց հետ հաղորդակցվող երկու սենյակներից: Առաջին ոչ մեծ սենյակն ունեցել է կոնաձև, երկրորդը՝ հարթ առաստաղ և պատերի մեջ կառուցված յոթ ուղղանկյուն խորշեր, որոնցից յուրաքանչյուրում դրված է նղել մեկ կավանոթ: Հողով ծածկված նախասենյակի հատակը ցածր է նղել երկրորդ սենյակի հատակից: Դամբարանի մուտքը ծածկված է նղել խոշոր քարաքենքորներով:

Գրականություն: Պոտրովսկի 1959

Նկարներ: 56

ԵՐԵՎԱՆ

Երևանի Արշակունյաց պողոտայի մոտ գտնվող «Ավտոազրեգատ» գործարանի տարածքում 1984 թ. շինարարական աշխատանքների ժամանակ բացվեց մի մոնումենտալ դամբարան, որը պնդվեց ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից: Դամբարանը ստորգետնյա ուղղանկյուն կառուց է՝ հյուսիս-հարավկողմանորշմամբ: Ներքին չափերն են՝ նրկարությունը՝ 3,46 մ, լայնությունը՝ 1,97 մ, բարձրությունը՝ 2,15 մ:



57. Երևան, դամբարանի հատակագիծը

Դամբարանախցի հատակը շարված է լավ տաշված, սև, կարմիր, մուգ շագանակագույն տուֆն սալերով, որոնց տակ հարմարեցված էին գաղտնարանները: Հինգ շարք բարձրությամբ պատճերը կառուցված են տուֆն սրբատաշ քարերով: Դամբարանի հինգ որմնախորշներից երեքը կառուցված են արևմտյան պատի մեջ և հատակից բարձր են 0,44 մ ($0,5 \times 0,5$ մ չափերով): Նույնանման որմնախորշ կառուցված է հարավային պատի մեջ: Արևելյան որմնախորշն ավելի մեծ է: Որմնախորշի վերին մասը կազմված է տուֆն մեկ հնձանից, որն իր վրա է կրում դամբանախցի սալերի ծանրության մի մասը: Որմնախորշի նրկարությունը 2,06

մ է, բարձրությունը՝ 1,22 մ, խորությունը՝ 1,01 մ: Դամբարանը ծածկված է տուֆեն հինգ մետրով: Նրա մուտքը (բարձրությունը՝ 1,29 մ, լայնությունը՝ 0,75 մ) գտնվում է խցի հյուսիսային կողմում՝ դրսից ամուր փակված մեծ տուֆեն սալաքարով (պահպանվել են նաև դրումոսի հետքները):

Դամբարանում գտնվեց հարուստ նյութ: Արևմտյան պատի երեք որմնախորշներում դրված էին մենական աճյունասափոր՝ լցված մարդու, կենդանիների և թռչունների մանրացված ուլորներով, արևելյան մեծ որմնախորշում՝ զի գլխի արձանիկներով զարդարված մի մեծ կավանոթ, ինչպես նաև մի թաս, որի հատակին պահպանված էր նապաստակի պատկերով դրոշմ: Դամբարանի հյուսիսային կողմում գտնվեցին առյուծի գլխի ծևով հարդարված ծորակով անոթ, մեկ սափոր, ճրագ, մի քանի մեծ ու փոքր թասեր:

Հատակի տակ նղած երեք գաղտնարաններից առաջինը հայտնաբերվեց դամբարանի արևմտյան պատի մոտ գտնվող սալաքարենի տակ: Այստեղ պահված էին բրոնզե կապարծի բներներ, թաս, ագաթից ուլոնքներ, զիշեր քարից պատրաստված մի կնիք, որը հարդարված էր գրիֆոնի և կիսալուսնի պատկերներով: Երկրորդ գաղտնարանը հայտնաբերվեց դամբարանի արևելյան պատի հատակի սալերի տակ: Այստեղից գտնվեցին միայն մի քանի օձագլուխ ապարանջաններ: Երրորդը կատուցված էր արևելյան մեծ որմնախորշի հատակի տակ, որտեղ դրված էին երեք տարբեր բրոնզե գոտիների և ծիասարքի մասեր, օձագլուխ ապարանջաններ, երկարեն սուր, դանակ, դաշույններ, բրոնզե գամեր, մեկ դրոյլ, բրոնզե անոթների բռնակներ և այլ նյութեր: Գտածոնների մեջ առանձնապես ուշագրավ է խոյի չորս գլուխների քանդակներով զարդարված բրոնզե շքասեղը, ինչպես նաև բրոնզե երեք գոտիները: Դրանցից առաջինը ունեցել է 19 սմ լայնություն և մոտ 120 սմ երկարություն: Արտարին մակերեսն ամբողջությամբ դրվագված է ինչպես առանձին կանգնած մարտակառերի, հեծյալների, զենքի, ծիերի և առյուծների պատկերներով, այնպես էլ որսի տեսարաններով: Ներկայացված են մարտակառի վրա հարձակվող առյուծների և դրանց հետապնդող հեծյալների բարձրատեսակառ տեսարաններ:

